Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՈՒՍԱՐԱՐ

21-22(378-379)
26.07.2014
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ Lusarar

## ԱՎԱՐՏՎԵԼ Է ԲՈՒՀԵՐԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Քննական լարված շրջանը ետևում է մնացել: Հանրապետական ընդունող հանձնաժողովը հուլիսի 15-ին հրապարակել է ընդունված դիմորդների ցուցակները: Ինչպես են բաշխվել նրանք՝ տեղեկացանք ԼՂՀ կրթության և գիտության նախարար, Հանրապետական ընդունող հանձնաժողովի նախագահ Սլավա Ասրյանի տրամադրած տվյալներից:

Ունեցել ենք 757 դիմորդներ, որոնցից 611-ը դիմել են ԱրՊՀ և ոչ պետական հավատարմագրված բուհեր, 146-ը՝ ՀՀ պետական բուհեր: ՀՀ բուհերի ընդունելությունը կատարվել է Հանրապետական ընդունող հանձնաժողովի կողմից, իսկ այն մասնագիտությունների գծով, որոնք պետք է հանձնեն ներբուհական քննություններ (արվեստի գծով, սլավոնական, ամերիկյան համալսարաններ), կազմակերպվել են ՀՀ համապատասխան բուհերում: Հատկացված էին 60 անվճար և 25 վճարովի տեղեր: Մրցույթի արդյունքներով բոլոր տեղերը զբաղեցրել են հիմնականում բարձր միավորներ վաստակած դիմորդները:

Այս տարի ԱրՊՀ առկա բաժնում հատկացվել է 660 տեղ, 200-ը՝ անվճար, 460-ը՝ վճարովի: Դիմորդների թիվը 532 էր: Ընդունվել է 371 դիմորդ, 158-ը՝ անվճար, 213-ը՝ վճարովի ուսուցման համակարգ: Որոշ մասնագիտությունների գծով խմբեր չեն ձևավորվել, եղել են 1-2 դիմորդներ, և նրանք իրենց ցանկությամբ տեղափոխվել են հարակից մասնագիտություններ: Չեն համալրվել «Կենսաբանություն», «Դեղագործական քիմիա», «Հոգեբանություն», «Օգտակար հանածոների հետախուզում և մշակում», «Հեռահաղորդակցություն» մասնագիտությունները: Առավել շատ դիմորդներ են եղել և ընդունվածներ «Իրավագիտություն», «Ֆինանսներ», «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությունների գծով:

Ցավոք, այս տարի ևս բնագիտական մասնագիտությունների գծով դիմորդների թիվը քիչ էր: «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա» մասնագիտությունների համար կառավարության կողմից տրված արտոնությունները (անվճար համակարգ ընդունվում են մեկ մրցութային քննության դրական արդյունքի պարագայում) դարձյալ չեն հրապուրել դիմորդներին:

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղին հատկացված էր 90 անվճար և 190 վճարովի տեղեր, դիմել է 52 դիմորդ, ընդունվել 36-ը, որից 16-ը՝ անվճար:

Ոչ պետական հավատարմագրված բուհեր ընդունվել է 18 դիմորդ:

Հանձնաժողովը վերաբաշխել է մրցույթի արդյունքներով անվճար, վճարովի ուսուցման համակարգում թափուր մնացած, ինչպես նաև պահուստային տեղերը:

Հուլիսի 15-20-ը անցկացվել է թափուր տեղերի մրցույթ, որի արդյունքում վճարովի ուսուցման համակարգ ընդունվել են ևս 25 դիմորդներ, որոնցից 12-ը՝ ԱրՊՀ, 13-ը՝ ագրարային համալսարան:

Չընդունված դիմորդներն իրենց բախտը փորձելու մեկ հնարավորություն ևս ունեն. առջևում հեռակա ուսուցման համակարգի ընդունելությունն է, որը կանցկացնեն բուհերը:

**Սեփ. լրատվություն**

## ՄԻԱՍԻՆ ՀԱՆԳՍՏԱՆՈՒՄ ԵՆ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ





Օգոստոսի 14-ից նախազորակոչային տարիքի պատանիների առջև կրկին իր գիրկն է բացել ԼՂՀ պաշտպանության և կրթության ու գիտության նախարարությունների համատեղ կազմակերպած «Ասպետ» ռազմամարզական ճամբարը: Հանդիսավոր բացմանը ներկա էին ԼՂՀ ԿԳ նախարար Սլավա Ասրյանը, ՊԲ ԱՀՏՍ գծով պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ-մայոր Վարդան Բալայանը, պետական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ծնողներ:

Հանդիսավոր հավաքին պատրաստականության մասին ճամբարի պետ, մայոր Արսեն Հարությունյանի զեկույցն ընդունում է գեներալ-մայոր Վարդան Բալայանը: Ճամբարի աշխատանքները համակարգող՝ ԼՂՀ ԿԳՆ ռազմահայրենասիրական դաստիարակության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Վալերի Գրիգորյանը իր բացման խոսքում հավաստիացրեց, որ ճամբարում ստեղծված են բոլոր պայմանները պատանիների ամառային հանգիստը բարձր մակարդակով և բովանդակալից կազմակերպելու, դպրոցում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից ստացած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու համար. ճամբարականների տրամադրության տակ են չափորոշիչներին համապատասխանող սպորտային ավանը, ֆուտբոլի, վոլեյբոլի, մեծ թենիսի մարզադաշտերը, լողավազաններ, հրաձգարան՝ Կալաշնիկովի ինքնաձիգից մարտական փամփուշտներով կրակելու համար, թենիսի սեղաններ և ռազմամարզական այլ գործիքներ: Ճամբարականների համար կազմակերպվում են մշակութային միջոցառումներ, համերգներ՝ համույթների մասնակցությամբ, արշավներ, այցելություններ փառքի և պատմամշակութային հուշարձաններ, հանդիպումներ Արցախյան պատերազմի հերոսների, բանակի հրամանատարների հետ և հետաքրքիր այլ միջոցառումներ:

Ճամբարականներին ուղղված իր ողջույնի խոսքում ԼՂՀ կրթության և գիտության նախարար Ս. Ասրյանն ասաց, որ առաջին իսկ պահից տպավորված են պատանիների խրոխտ ողջույնից, ինչը վկայում է նրանց մարտական տրամադրվածությունը: Պետությունը նման ճամբար բացելով (այն գործում է արդեն յոթերորդ տարին), որն ըստ էության ապագա զինվորների՝ ռազմական նախնական գիտելիքները գործնականում ամրապնդելու և հայրենիքի վաղվա պաշտպաններին կոփելու վայր է, դրանով իսկ նպաստում է բանակի մարտունակության բարձրացմանը: «Բոլորս պետք է պատրաստ լինենք հայրենիքի պաշտպանությանը, որովհետև մենք ունենք թշնամի, որը միշտ հոխորտում է պատերազմով և պետք է պատանի հասակից տիրապետել ռազմական տեխնիկային, դպրոցում ստացած գիտելիքները և հմտությունները կարողանալ օգտագործել ռազմական ասպարեզում»,- ասաց նա՝ միաժամանակ նկատելով, որ այն պատանիները, ովքեր խույս են տալիս ռազմամարզական ճամբարից, նշանակում է պատրաստ չեն հայրենիքի պաշտպանությանը:

ԼՂՀ ՊԲ ԱՀՏՍ գծով պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ-մայոր Վարդան Բալայանը, բանակի հրամանատարության անունից բարի երթ մաղթեց «Ասպետ»-ին՝ համոզված լինելով, որ ճամբարականները հավատարիմ կլինեն իրենց իսկ հնչեցրած նշանաբաններին. որոնց մեջ խտացված է մեր ժողովրդի անցած ճանապարհը, հերոսական ոգին: «Տասն օր գործնականում կիրառելով ՆԶՊ-ից ստացած գիտելիքները, դուք կհեշտացնեք ձեր ապագա զինվորական ծառայությունը, կարճ ժամանակահատվածում դուք կտիրապետեք այն զենքին, ռազմական տեխնիկային, ինչ կցագրված կլինի ձեզ վրա»,-համոզված է նա՝ հավելելով, որ բանակի հրամանատարությունը հաճախակի կայցելի «Ասպետ», ներկա կլինի մարտավարական պարապմունքներին, պատանիների կարողություններին, առանձնապես՝ կրակային պատրաստականության:

ԼՂՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Սարգսյանը մաղթեց, որ տարբեր վայրերից եկած դպրոցականները պահեն միասնական ոգին: Առաջնորդվելով Նժդեհյան գաղափարախոսությամբ՝ ինչպիսին երկրի երիտասարդությունն է, այնպիսին էլ երկրի ապագան է, նա՝ ի դեմս այդ պատանիների, երկրի ապագային նայում է վստահ, քանզի այն լինելու է հուսալի ձեռքերում:

ԱԱՄ «Հայրենյաց պաշտպան» երիտասարդական կազմակերպության նախագահ Հարութ Մնացականյանը պատրաստակամություն հայտնեց բոլոր հարցերում լինել պատանիների կողքին և աջակցել նրանց:

Քաշաթաղի շրջանի Գողթանիկի միջնակարգ դպրոցի աշակերտ Արցախ Պողոսյանը ճամբարականների անունից վստահեցրեց. «Նման միջոցառումները անհետևանք չեն անցնի: Երկուերեք տարի հետո մենք կդառնանք հայրենիքի իսկական պաշտպաններ՝ չմոռանալով նաև ճամբարի դասերը»:

Ավելացնենք, որ արցախցի դպրոցականներին երկրորդ հերթափոխում միացել են լիբանանահայ երիտասարդները, երրորդին կմիանան ՀՀ դպրոցականները:

**Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

## «ԱՍՊԵՏ» ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՃԱՄԲԱՐՈՒՄ



Հայոց ազգային բանակին մշտական հերթափոխ է անհրաժեշտ: Այս առումով կարևորվում է հանրակրթական դպրոցներում ՆԶՊ դերը: Իսկ բարձր դասարանների տղաներին որպես զինվոր նախապատրաստելու համար «Ասպետ» ռազմամարզական ճամբարը մեծ դեր է կատարում: Քաշաթաղի շրջանի տարբեր դպրոցներից բոլոր տարիներին մասնակիցներ եղել են և աչքի ընկել տարբեր մարզաձևերում, ինտելեկտուալ խաղերում, կարգապահությամբ: Այս տարի շրջանի 10-ից ավելի դպրոցների շուրջ 20 պատանիներ մասնակցեցին «Ասպետ» ճամբարի հերթափոխին և հուլիսի 23-ին տուն վերադարձան: Շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնում հանդիպեցի տղաներին, ովքեր վերադարձել էին բարձր տրամադրությամբ, անմոռանալի տպավորություններով, պատվոգրերով, շնորհակալագրերով, նվերներով, ռազմական գիտելիքներ ձեռք բերած: Քաշաթաղի վաշտի հրամանատար, Միջնավանի Գ. Ստարովոյտովայի անվան միջնակարգ դպրոցի զինղեկ Սերգեյ Կիրակոսյանը, ով 2 նախարարություններ կողմից արժանացել էր շնորհակալագրի, գոհ էր մեր տղաներից. բոլորն էլ իրենց պահել էին իսկական զինվորի պես: Գողթանիկի դպրոցի աշակերտ Արցախ Պողոսյանը, նրա թիմակիցներ Կարեն Գևորգյանը՝ Սարատակից, Գոռ Պետրոսյանն՝ Աղավնոյից, Վահե Հարությունյանը՝ Միջնավանից, Աշոտ Կոստանյանը՝ Վուրգավանից, ֆուտբոլի մրցաշարում գրավել էին առաջին տեղ և արժանացել պատվոգրի: «Եթե ստացվի, մեծ սիրով նորից կմասնակցեմ ճամբարի առօրյային. ամեն ինչ շատ լավ էր: Հուսով եմ՝ բանակում էլ այդպես կլինի»,- ասաց Արցախը: «Ճամբարում դժվարություն չզգացինք, ծանոթացանք բանակի կյանքին, շատ բան սովորեցինք, մեր հանրապետության տարբեր բնակավայրերից շատ տղաների հետ ծանոթացանք, ընկերացանք»,- ընկերոջ խոսքը շարունակեց Վահեն: Մոշաթաղի դպրոցի սան Գագիկ Գալստյանը ժամացույց էր նվեր ստացել Պաշտպանության նախարարության կողմից և հպարտ էր. «Կարծում եմ՝ 10 օրը շատ քիչ է, լավ կլիներ, որ ավելի երկար ժամկետով մնայինք»,- ասաց նա: Միջնավանի դպրոցից է Բալասանյան Ռաքը, ով շնորհակալագիրն է ցույց տալիս, որին արժանացել է կարգապահ ծառայության համար: Նա նույնպես գոհ է ճամբարում անցկացրած օրերից, հրամանատարությունից:

Շրջանի կրթության բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը շնորհավորեց զինվորացու տղաներին, հայտնեց շնորհակալություն մեր շրջանի անունը բարձր պահելու համար:

**Ջոհրաբ ԸՈՒՔՈՅԱՆ**

ԱՄԱՌ-2014

# ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԱՄՈՒՐ ԿԱՄՈՒՐՋ

Արդեն 4-րդ տարին է, ինչ տարբեր երկրներից Արցախ ժամանած սփյուռքահայ երիտասարդները ՀՅԴ Արցախի երիտասարդական միության հետ համատեղ ճամբարներ են կազմակերպում Արցախի տարբեր բնակավայրերում:

Այս տարի ճամբարների բացման մեկնարկը տրվեց Մարտունի քաղաքից, հուլիսի 10-ից: 10-16 տարեկան շուրջ 120 երեխաներ իրենց ամառային հանգիստն են անցկացնում քաղաքի հ.1 դպրոցի տարածքում կազմակերպված տասնօրյա ճամբարում:

Ծրագրի իրագործման չորս տարվա ընթացքում ճամբարներ են բացվել հանրապետության տարբեր շրջաններում, այդ թվում՝ Մարտունիում: Այս տարվա համար ևս, ծրագրի համաձայն, կշարունակվեն ճամբարներ կազմակերպել Ասկերանում, Ստեփանակերտում, Բերձորում և Կովսականում, որտեղ կընդգրկվեն շուրջ 1500 պատանիներ ու աղջիկներ:



Շրջանի երեխաները մի առանձին անհամբերությամբ են ամեն տարի սպասում ճամբարային շրջանի բացմանը:

Ճամբարի պաշտոնական բացման արարողությունը տեղի ունեցավ հուլիսի 17-ին:

Միջոցառումը բացվեց հայկական երկու հանրապետությունների օրհներգերի՝ ճամբարականների կենդանի կատարմամբ: ՀՅԴ Արցախի երիտասարդական միության վարիչ, մարմնի անդամ Ալյոնա Դադամյանի խոսքով՝ ճամբարները նպատակաուղղված են երեխաների մեջ կազմակերպվածություն, կարգապահություն եւ հայրենասիրություն սերմանել, նաեւ կապ հաստատել սփյուռքում եւ հայրենիքում ապրող երիտասարդների միջև, սփյուռքահայ երիտասարդներն ավելի մոտիկից և ավելի լավ են ծանոթանում հայրենիքում առկա խնդիրներին: Ճամբարները լավագույն հնարավորություն են Արցախի և սփյուռքի երիտասարդների համախմբման, համագործակցության համար, ինչը բավականին արդյունավետ է, քանի որ երկուստեք միմյանցից սովորելու շատ բան ունեն:

ՀՅԴ Արեւմտյան Ամերիկայի երիտասարդական միության պատասխանատու Անյա Հակոբյանի համոզմամբ, այս կապը կարևոր կամուրջ է Հայրենիքի և Սփյուռքի հայ երիտասարդության միջև, որի ամրության շնորհիվ հնարավորություն ընձեռվեց շատ բան սովորեցնել հայրենիքում ապրող երեխաներին ու պատանիներին, ու իրենք էլ շատ բան սովորեցին տեղում:

ԼՂՀ ԱԺ պատգամավոր, ՀՅԴ Արցախի ԿԿ անդամ Ա.Սարգսյանը շնորհակալություն հայտնեց ԼՂՀ ԿԳ նախարարությանը, Մարտունու շրջվարչակազմին, քաղաքապետարանին՝ ճամբարի աշխատանքների կազմակերպմանն աջակցություն ցուցաբերելու համար: Նա նշեց, որ Սփյուռքի ներդրումն անգնահատելի է ինչպես Գոյապայքարի, այնպես և պետականաշինության տարիներին: Սփյուռքի շնորհիվ հնարավոր եղավ միասնական պայքար տանել ու հաղթել մարտի դաշտում, այսօր էլ տնտեսության զարգացմանն է լուրջ օժանդակություն ցուցաբերվում: Դրա վառ ապացույցն է ճամբարի կազմակերպումը, ինչը սփյուռքահայ երիտասարդների քրտնաջան աշխատանքի արդյունքն է: Նրանք կատարել են տարբեր աշխատանքներ, դրամ վաստակել, որի շնորհիվ կարողացել են Արցախ գալ և կազմակերպել այս հայրենանվեր գործը: Ասել է թե՝ իրենց մասնակցությունն են ունենում երկրի գալիքի ապահովման գործին: Առանց հայրենիք չկա սփյուռք և առանց Արցախյան խնդրի լուծման՝ չկա Արևմտյան Հայաստանի ազատագրման խնդրի լուծում:

Մարտունու շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Էդ.Բարսեղյանը շնորհակալություն հայտնեց սփյուռքահայ երիտասարդներին ու աղջիկներին, ովքեր, իրոք, շատ մեծ ու հայրենասիրական գործ են ձեռնարկել, ինչպես և բոլոր նրանց, ովքեր աջակցում են նրանց ձեռնարկումը կյանքի կոչելուն: Այս աշխատանքը համարվեց այն աշխատանքի մի մաս, որ իրականացվում է տեղական իշխանությունների կողմից՝ սերնդի դաստիարակությունն ու կրթությունը, կայուն գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը:

**Կարինե ԴԱԴԱՄՅԱՆ**

# «ԷԿՈՏՈՒՐ»՝ ՀԱՆԳԻՍՏ ԲՆՈՒԹՅԱՆ ԳՐԿՈՒՄ

Ստեփանակերտի հանրակրթական դպրոցների մի խումբ աշակերտներ այս տարվա ապրիլին մասնակցել են Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում կազմակերպված «Էկոտուր» էկոլոգիական նախագծերի ամենամյա միջազգային ստուգատես-մրցույթին, որին մասնակցում էին աշակերտներ Հայաստանից, Վրաստանից: Նշենք, որ գլխավոր մրցանակ էին ստացել հայաստանյան և վրաստանյան 12 խմբեր, իսկ խրախուսական մրցանակ՝ հայաստանյան, վրաստանյան, արցախյան 4 խմբեր: «Էկոտուրի» մրցանակը ճամբարի ուղեգիրն էր, որի երջանիկ



ստացողներից մեկը արցախցիներս էինք:

Եվ ահա եկավ այն բաղձալի օրը, երբ մեզ տեղեկացրին, որ հունիսի 5-ին պետք է մեկնենք ճամբար: Մեր խմբի ղեկավար, Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի մեթոդիստ Անահիտ Մեսրոպյանը, ում հետ բազմիցս պատիվ ենք ունեցել ճանապարհորդելու, մեզ համար պարզապես երկրորդ մայր էր, ով ջանում էր ամեն ինչ անել, որպեսզի մենք ոչնչի կարիք չունենանք: Ճամբարային օրը սկսվում էր հունիսի 7-ին, բայց «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրինությունը որոշեց մեզ անակնկալ մատուցել. Հունիսի 5-ին Սուրբ Երրորդություն եկեղեցու մոտ մեզ իր որդու հետ արդեն սպասում էր կրթահամալիրի տնօրեն տիար Բլեյանը, ում բարեմաղթանքներով լեցուն՝ ճանապարհվեցինք Սևան: Հիշարժան առաջին օրը սկսվեց Գեղամա հրաշքը վայելելուց, որի կոհակների ծփանքը զգացինք մինչև երեկո: Այդ ընթացքում այցելեցինք Սևանավանք, ավելի քան մեկ ժամ նավակով շրջեցինք ու ըմբոշխնեցինք գեղեցկուհու անկրկնելի հմայքը: Օրն իր մայրամուտն էր ապրում, երբ ճանապարհվեցինք դեպի ճամբար՝ Տավուշի մարզում, Կողբ գյուղից 12 կմ դեպի կուսական լեռնանտառներում ծվարած մի հրաշք աշխարհ՝ Ջիկատար: Այդ հինգ օրերի ընթացքում, ինչը ներկաներիս համար ակնթարթ թվաց, մենք շատ բան տեսանք ու հասկացանք: Ու թեկուզ ճամբարը կոչվում էր միջազգային, սիրով այն եզրակացության եկանք, որ թիմակիցներիս մեջ ազգերի տարբերություն չկա. գոյություն ունի մեկ միասնական թիմ, չնայած բարձրից ծածանվում էին երեք դրոշները՝ Արցախի, Հայաստանի և Վրաստանի: Բոլորս իրար հանդեպ հարգալից վերաբերմունք էինք ցուցաբերում՝ մեկ ընտանիքի պես ապրելով մեկ հարկի տակ: Հատկապես ինձ շատ դուր եկավ ճամբարի կազմակերպվածությունը, մշտապես՝ արշավներ, դասեր, պարեր, խաղեր: Համակցված էին տեսականն ու գործնականը: Իսկական միջազգային ճամբար, որին մարդ երազում է մասնակցել գոնե մեկ անգամ: Փորձում էինք խոսել վրացերեն, վրացիներին սովորեցնել հայերեն: Տպավորություններս այնքան շատ են, որ չգիտեմ ինչպես մտքերս ի մի բերել, իսկ գրելու նյութն այնքան շատ է, որ հազիվ տեղավորվի ամբողջ թերթում…

Ավարտելով խոսքս, ուզում եմ շնորհակալություն հայտնել «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրինությանը, ճամբարի պետ Մարթա Ասատրյանին և օգնական (վրացերենի թարգմանիչ) Ռինա Շահինյանին՝ հոգատար վերաբերմունքի և ուշադրության համար: Նաև իմ բոլոր ընկերների անունից շնորհակալություն եմ հայտնում ԼՂՀ կրթության և գիտության նախարարությանը՝ մեզ ֆինանսապես աջակցելու համար, նաև՝ Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնին, և անշուշտ, Աստծուն, մեզ տիկին Մեսրոպյանի պես մարդու, ուսուցչի հետ է՛լ ավելի մտերմացնելու համար:

**Գոռ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**
**Ստեփանակերտի հ.2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ**

# ՃԱՄԲԱՐՈՒՄ

*Մայրաքաղաքի շուրջ 500 դպրոցականներ իրենց առօրյան հետաքրքիր են դարձրել հ.5 և հ.10 հիմնական դպրոցներին կից բացված «Լուսաբաց» և «Արևիկ» ճամբարներում:*



Վաղ առավոտյան, զով լուսաբացին,
Արևածագի շողերն առաջին,
Ողջունեցին «Լուսաբաց» ճամբարին:
Ուղեկցելով մեր ժիր մանուկներին,



Նորից խնդություն, լիաթոք ծիծաղ,
Նոր ծանոթություն, զրույց մտերմիկ,
Շախմատ և ֆուտբոլ, բազմաբնույթ խաղ,
Ասմունքի մրցույթ ու տաղ գեղեցիկ:



Ջան, ինչ ուրախ են օրերն անցնում,
Տողան է սկսվում, թե փողն է փչում,
Իսկ թե արևն է սաստիկ տաքացնում,
Ջուլալ ջրերն են իրենց գիրկն առնում:



Երջանիկ պահեր, հաճելի ժամանց,
Ուրախ ու զվարթ, օրեր անմոռաց,
Մեզ ընդունեցիր ջերմ ու գրկաբաց,
Դու մեզ հարազատ ճամբար «Լուսաբաց»:

**Մարինե ԽԱՉԱՏՐՅԱՆ**
**Ստեփ. հ.5 հիմն. դպրոց**

ՏԵՍՉԱԿԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԼՂՀ ԿԳՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ 2013-2014 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Այնտեղ, որտեղ կա գաղափար, դրան հասնելու նպատակադրվածություն ու ձգտում, հաջողություններն անխուսափելի են*



ԼՂՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի առանձին ստորաբաժանում հանդիսացող կրթության պետական տեսչությունը 2013-2014 ուստարվա ընթացքում, ինչպես և նախորդ ուստարում, հավատարիմ մնալով իր սկզբունքներին ու վերցրած կուրսին, նպատակաուղղված ու լայնածավալ աշխատանքներ է իրականացրել «Կրթության պետական տեսչության մասին» ԼՂՀ օրենքով և տեսչության կանոնադրությամբ ամրագրված՝ տեսչության խնդիրների ու նպատակների, գործառույթների, ինչպես նաև «Քաղծառայության մասին» ԼՂՀ օրենքով և քաղծառայողի պաշտոնի անձնագրով սահմանված իրավունքների ու պարտականությունների շրջանակներում:

Հաշվետվությունն ընդգրկում է 2013թ. օգոստոսից մինչև 2014թ. հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածը: Տեսչության նախորդ ուստարվա հաշվետվությունը, որը հրատարակվել էր «Լուսարար» պաշտոնաթերթի 2013թ. հուլիսի 25-ի հ. 21-22-ում, ընդգրկում էր 2012թ. հուլիսից 2013թ. հուլիսն ընկած ժամանակահատվածը: Պետք է ասել, որ հաշվետու ժամանակահատվածը, ինչպես 2012-2013 ուստարին, եղել է հագեցած և անցել է աշխատանքային մթնոլորտում. բոլոր տեսուչները ջանում էին պահանջվող ժամկետներում ու մակարդակով կատարել տրված հանձնարարականները, պլանային առաջադրանքները, ցուցաբերում էին պատասխանատվության բարձր զգացում: Հանրագումարում տեսչությունում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ: Մեզ հաջողվել է բացատրական աշխատանքի շնորհիվ բոլորին, առանձնապես՝ սկսնակ պետական տեսուչներին, համախմբել մեկ գաղափարի շուրջ, այն է՝ անմնացորդ նվիրվել մատաղ սերնդի ուսուցման ու դաստիարակության պատվաբեր գործին, անել ամեն հնարավորը՝ ազնիվ անուն ձեռք բերելու, ուսուցիչների համակրանքին ու հարգանքին արժանանալու համար: Իսկ այնտեղ, որտեղ կա գաղափար, դրան հասնելու նպատակադրվածություն ու ձգտում, հաջողություններն անխուսափելի են:

Հաշվետու ժամանակահատվածում տեսչությունը առաջնորդվել է ԼՂՀ ԿԳ նախարարի կողմից հաստատված գործունեության հստակ ծրագրով, որը կազմված էր ոչ միայն տարվա կտրվածքով, այլ նաև յուրաքանչյուր ամսվա համար, ինչը ավելի նպատակասլաց է դարձնում տեսչության աշխատանքը: Այս ուսումնականում, ինչպես և տեսչության գործունեության բոլոր տարիներին, մեզ հաջողվել է ոչ միայն անմնացորդ իրականացնել պլանով նախատեսված բոլոր միջոցառումներն ու տեսչական ստուգումները, այլ նաև կյանքի կոչել մի շարք լրացուցիչ, հատուկ հանձնարարականներ՝ տրված ԼՂՀ ԿԳ նախարարի կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված ցանկացած միջոցառում նախապես համաձայնեցվել է նախարարի կամ աշխատակազմի ղեկավարի հետ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մանկավարժական հանրույթի կողմից հավանության է արժանացել նախորդ ուստարում տեսչության կողմից կատարված աշխատանքների մասին հաշվետվության ներկայացման ձևաչափը, նպատակահարմար ենք գտնում սույն հաշվետվությունը ներկայացնել նույն ձևով: Տեսչության կողմից հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքի մասին հստակ պատկերացում կազմելու համար այն ներկայացվել է երեք բաժիններով, որոնք պետք է դիտարկել մեկ ամբողջության մեջ:

I բաժին. ԿՊ տեսչության պետի ամփոփ տեղեկատվությունը 2013-2014 ուստարում կատարված աշխատանքների մասին և դրանց վերլուծությունը:

II բաժին. 2013-2014 ուստարում հանրակրթական դպրոցների ղեկավարների կողմից կատարված դասալսումների ամփոփ տեղեկատվությունը՝ հավելվածով՝ աղյուսակի ձևով:

III բաժին. Ըստ առարկաների պետական տեսուչների կողմից կատարված աշխատանքների վերլուծությունը:

Հաշվետու ժամանակահատվածում տեսչության կազմում կատարվել են որոշակի կադրային փոփոխություններ: Տարիքը լրանալու կապակցությամբ թոշակի անցած քիմիայի և կենսաբանության պետական տեսուչ Լարիսա Սարգսյանի տեղ մրցութային կարգով աշխատանքի է ընդունվել ավելի քան 30 տարվա մանկավարժական աշխատանքի փորձով քիմիայի մասնագետ Վերա Ավետիսյանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախի դպրոցներում արդեն երրորդ տարին է, ինչ ուսպլանով մտցվել է «Շախմատ» առարկան, որի ուսումնասիրումն իրականացվում է 2-րդ դասարանից, տեսչության հաստիքացուցակում ավելացված 1 հաստիքը համալրվել է շախմատի գծով պետական տեսուչի հաշվին: Մրցութային կարգով որպես շախմատի պետական տեսուչ է ընդունվել ֆիզիկայի մասնագետ Բեյբուդ Մելքումյանը: Կարճ ժամանակահատվածում նրանց կատարած աշխատանքները վկայում են, որ երկուսն էլ խոստումնալից մասնագետներ են և որպես պետական տեսուչներ՝ կարդարացնեն մեր հույսերը: Առայժմ թափուր է մնում մաթեմատիկայի պետական տեսուչի հաստիքը:

Տեսչությունը անմասն չի մնացել նախարարության կողմից կազմակերպվող հանրապետական բոլոր կարգի միջոցառումներից: Տեսչապետն ու բաժինների վարիչները, մյուս պետական տեսուչներն իրենց մասնակցությունն են բերել «Տարվա լավագույն դպրոց», «Լավագույն մանկավարժական փորձ», «Շարադրությունների մրցույթ» և այլ միջոցառումների, մրցումների անցկացման աշխատանքներին:

Տեսչությունը սերտորեն համագործակցել է ԿԳ վարչության, նախարարության մյուս ստորաբաժանումների, առանձնապես «Գնահատման ու թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի, ԼՂՀ շրջվարչակազմերի ու Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժինների, մանկավարժական հանրույթների հետ:

Պետական տեսուչները կազմել են ԼՂՀ դպրոցականների 2014թ. առարկայական օլիմպիադայի շրջանային փուլի առաջադրանքները, մասնակցել հանրապետական փուլի աշխատանքների, ԳԹԿ-ի կողմից կազմակերպված ու անցկացված փորձնական քննությունների համար թեստային առաջադրանքների ստուգմանը, պետական ավարտական ու միասնական քննությունների անցկացմանը: Տեսչության անդամներն ընդգրկված են եղել Արցախի պետական համալսարանի, «Մեսրոպ Մաշտոց» ոչ պետական հավատարմագրված համալսարանի պետական քննությունների հանձնաժողովների կազմում՝ որպես անդամներ կամ նախագահ:

2014թ. նախաշեմին կազմվել ու նախարարի հաստատմանն են ներկայացվել ԿՊ տեսչության 2014թ. աշխատանքային ծրագրի ու դրա հետ կապված տրանսպորտային ծախսերի մասին հաշվարկների նախագծերը: Ավարտման փուլում են կրթության պետական տեսչության բարեփոխումների միջնաժամկետ ծրագրերը 2015-2017 թվականների համար՝ համապատասխան տրանսպորտային ծախսերի հաշվարկներով:

Տեսչապետը, բաժնի վարիչներն ու մյուս պետական տեսուչները, բացի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված պարտականությունների կատարման ուղղությամբ տարվող աշխատանքներից, իրականացրել են նաև այլ բնույթի մեթոդամանկավարժական ու հասարակական գործունեություն:

Բոլոր տեսուչներն ակտիվորեն մասնակցում են Առաջին ու Վերջին զանգերի արարողություններին, ԼՂՀ անկախության հռչակագրի ընդունման, Շուշիի ազատագրման ու ԼՂՀ պաշտպանության բանակի ստեղծման 22-րդ տարեդարձի կապակցությամբ ձեռնարկված միջոցառումներին՝ «Անկախության դաս», «Արիության դաս» և այլն:

Բարի ավանդույթ է դարձել տեսչապետի մասնակցությունը Շուշիի շրջանի փնջային մեթոդմիավորման աշխատանքներին, որն այս տարի անցկացվել է Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցում (տնօրեն՝ Ն. Նալբանդյան, ով միաժամանակ փնջային մեթոդմիավորման նախագահն է): Օգտվելով առիթից՝ ուզում եմ նշել, որ այդ աշխատանքները բարձր մակարդակով են անցկացվում: Այդ աշխատանքներին, բացի տողերիս հեղինակից, ներկա են գտնվել փոխնախարար Մ. Համբարձումյանն ու ԳԹԿ տնօրեն Յու. Քարամյանը: Նման միջոցառումները կարելի է որակել ուսանելի և օգտակար: Ցանկալի կլիներ փնջային մեթոդմիավորումների աշխատանքները վերականգնել բոլոր շրջաններում, իսկ որտեղ գործում են, աշխատանքներն աշխուժացնել:

Պետական տեսուչները սիրով են կատարում ցանկացած հասարակական աշխատանք, եթե պահը պահանջում է, կամ վերադասը հանձնարարում է:

Այսպես, նախարարի հանձնարարականով տեսուչների կողմից Ստեփանակերտի և Մարտունու արհեստագործական ուսումնարանների ավարտական կուրսերի համար 9 քննական առարկաներից կազմվել են քննական թեստեր, ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի բանավոր փուլի անցկացման համար յուրաքանչյուր առարկայից կազմվել է մասնագիտական հարցաշար՝ 50 հարցից բաղկացած:

2014թ. ապրիլի 21-25-ն ընկած ժամանակահատվածում մեծ շուքով ու բարձր մակարդակով անցկացվել են հայ ժողովրդի արժանավոր զավակ, ճանաչված երգահան Միքայել Թարիվերդիևի երաժշտության օրերը ԼՂՀ-ում: Միջոցառման կազմակերպման ու անցկացման ողջ պատասխանատվությունը դրված էր ռուսաց լեզվի գլխավոր մասնագետ, պետական տեսուչ Ռուբեն Օսիպովի վրա: Եվ պետք է ասել՝ մեր գործընկերը պատվով է դուրս եկել այդ պատասխանատու ու քիչ ջանքեր չպահանջող բեռի տակից:

Մի շարք հասարակական պարտականություններ են դրված տեսչության պետի վրա՝ լիցենզավորման ու ատեստավորման, ուսուցիչներին տարակարգի շնորհման, ատեստավորման տարածքային և հանրապետական հանձնաժողովների, ԱրՊՀ խորհրդի անդամ, «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահ:

2014թ. ապրիլի 22-ին եղել եմ Արցախի հեռուստատեսության «Երեկոն մեզ հետ» հաղորդաշարի հյուրը:

Բացի վերը նշված տարաբնույթ աշխատանքներից, հաշվետու ժամանակահատվածում տեսչության հիմնական նպատակը, ինչպես միշտ, եղել է «ԿՊ տեսչության մասին» օրենքով ամրագրված գործառույթների, այն է՝ հանրակրթական դպրոցներում, նախադպրոցական հիմնարկներում և արհեստագործական ուսումնարաններում ստուգումների իրականացումը:

Որպես կանոն՝ ստուգումների արդյունքների վերաբերյալ տեսչական հանձնախմբերի կողմից կազմվել են համապատասխան տեղեկանքներ՝ կոնկրետ հանձնարարականներով ու առաջարկություններով, քննարկվել մանկավարժական խորհուրդների նիստերում՝ ստուգումն ավարտվելուց անմիջապես հետո, որից հետո մաքրագրված ու մեքենագրված վերջնական տեսքով տեղեկանքների մեկական օրինակն ուղարկվել է համապատասխան կրթության բաժին, կրթական հաստատություններ՝ որպես գործողությունների ծրագիր առաջնորդվելու համար: Անհրաժեշտության դեպքում ստուգումներին մասնակից էինք անում նաև ճանաչված մասնագետների հանրակրթական դպրոցներից կամ կրթության բաժիններից: Առանց բացառության՝ բոլոր ստուգումները զուգակցվել են մեթոդամանկավարժական ու մասնագիտական օգնության ցուցաբերմամբ:

Ստորև բերվում են 2013-2014 ուստարում տեսչավորված բոլոր կրթական հաստատությունների ցուցակները՝ ըստ վարչատարածքային միավորումների.

### *ք. Ստեփանակերտ*

1. Խ. Աբովյանի անվանի. 1 հիմնական դպրոց (համակողմանի, թեմատիկ)
2. Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոց (թեմատիկ՝ 2 անգամ)
3. Ալ. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոց (թեմատիկ՝ 2 անգամ)
4. Մ. Մաշտոցի անվան հ. 4 հիմնական դպրոց (թեմատիկ՝ 2 անգամ)
5. Հ. Բալասանյանի անվան հ. 5 հիմնական դպրոց (թեմատիկ՝ 2 անգամ)
6. Հ. 6 հիմնական դպրոց (թեմատիկ՝ 2 անգամ)
7. Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոց (թեմատիկ՝ 2 անգամ)
8. Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոց (թեմատիկ՝ 2 անգամ)
9. Հ. Թումանյանի անվան հ. 9 հիմնական դպրոց (թեմատիկ՝ 2 անգամ)
10. Ավ. Իսահակյանի անվան հ. 10 հիմնական դպրոց (թեմատիկ՝ 2 անգամ)
11. Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոց (թեմատիկ՝ 2 անգամ)
12. Հ. 12 հիմնական դպրոց (համակողմանի, թեմատիկ)
13. ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ մասնագիտացված դպրոցի մասնաճյուղ (թեմատիկ)
14. Արհեստագործական ուսումնարան (թեմատիկ՝ 2 անգամ)
15. Հ. 1 պետական մանկապարտեզ (համակողմանի)

### *Ասկերանի շրջան*

1. Հովսեփավանի Յու. Ջհանգիրյանի անվան հիմնական դպրոց (համակողմանի)
2. Իվանյանի միջնակարգ դպրոց (համակողմանի)
3. Քռասնու միջնակարգ դպրոց (համակողմանի)
4. Ակնաղբյուրի միջնակարգ դպրոց (թեմատիկ)
5. Խաչենի պետական մանկապարտեզ (համակողմանի)
6. Խնձրիստանի «Սոսե» մանկապարտեզ (համակողմանի)
7. Հարավի միջնակարգ դպրոց (թեմատիկ)

### *Մարտունու շրջան*

1. Շեխերի Նիկոլա և Հերմինե Նիկողոսյանների անվան միջնակարգ դպրոց (համակողմանի)
2. Ջիվանիի հիմնական դպրոց դպրոց (համակողմանի)
3. Սոսի Հայկ Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց (համակողմանի)
4. Սոսի պետական մանկապարտեզ (համակողմանի)
5. Քերթի Կոմիտաս Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց (համակողմանի)
6. Քարահունջի հիմնական դպրոց (համակողմանի)
7. Մարտունու Նելսոն Ստեփանյանի անվան հ. 1 հոսքային միջնակարգ դպրոց (համակողմանի)
8. Ննգու միջնակարգ դպրոց (համակողմանի)
9. Մարտունու հ. 1 և հ. 2 պետական մանկապարտեզներ (համակողմանի)

### *Մարտակերտի շրջան*

1. Մեծ շենի Կ. Եսայանի անվան միջնակարգ դպրոց (համակողմանի)
2. Մարտակերտի Վ. Մինասյանի անվան հ. 2 միջնակարգ դպրոց (համակողմանի)
3. Վաղուհասի միջնակարգ դպրոց (համակողմանի)
4. Վաղուհասի միջնակարգ դպրոցի Խնկավանի մասնաճյուղ (համակողմանի)
5. Մեծ շենի միջնակարգ դպրոց (թեմատիկ)

☞4

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# ԼՂՀ ԿԳՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ 2013-2014 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

3 ☜

*Հադրութի շրջան*

1. Առաքելի Սլավիկ Սեյրանյանի անվան միջնակարգ դպրոց (համակողմանի)
2. Արևշատի Մարատ Զաքարյանի անվան միջնակարգ դպրոց (համակողմանի)
3. Մեծ Թաղերի մարշալ Ս. Խուդյակովի անվան միջնակարգ դպրոց (համակողմանի)
4. Մարիամաձորի միջնակարգ դպրոց (համակողմանի)
5. Ջրակուսի միջնակարգ դպրոց (համակողմանի)
6. Տողի պետական մանկապարտեզ (համակողմանի)
7. Մեծ Թաղերի «Սոսե» մանկապարտեզ (համակողմանի)

*Քաշաթաղի շրջան*

1. Սարատակի միջնակարգ դպրոց (համակողմանի)
2. Վուրգավանի միջնակարգ դպրոց (համակողմանի)
3. Ծաղկաբերդի Ա. Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց (համակողմանի)
4. Հակարիի միջնակարգ դպրոց (համակողմանի)
5. Կովսականի Թաթուլ Կրպեյանի անվան միջնակարգ դպրոց (համակողմանի)
6. Ալաշկերտի միջնակարգ դպրոց (համակողմանի)
7. Բերձորի Վ. Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոց (համակողմանի)

*Շուշիի շրջան*

1. Դ. Ղազարյանի անվան մասնագիտացված երաժշտական միջնակարգ դպրոց (համակողմանի)
2. Լիսագորի միջնակարգ դպրոց (համակողմանի)

*Շահումյանի շրջան*

1. Նոր Գետաշենի միջնակարգ դպրոց (համակողմանի)
2. Նոր Բրաջուրի Սևակ-Սևանա Էրումյանների անվան միջնակարգ դպրոց (համակողմանի)
3. Նոր Ղարաչինարի Ա. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց (համակողմանի)
4. Եղեգնուտի Պետրոս Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոց (համակողմանի)

Այսպիսով, հաշվետու ժամանակահատվածում տեսչության կողմից համակողմանի տեսչավորման են ենթարկվել 43 կրթական հաստատություններ՝ երկուսով պակաս, քան նախորդ ուստարում, որից 35-ը՝ հանրակրթական դպրոցներ, 8-ը՝ նախադպրոցական հաստատություններ՝ նախորդ տարվա 42 դպրոցի և 3 մանկապարտեզի փոխարեն:

Համակողմանի ստուգումների քանակի նվազումը պայմանավորված է եղել երկու հանգամանքով. նախ՝ թեմատիկ ստուգումների քանակն ենք ավելացրել՝ հասցնելով երեք տասնյակի, երկրորդ՝ այս ուսումնականում ստուգված խոշոր դպրոցների քանակն ավելի շատ էր, քան անցած ուստարում:

Այսպիսով՝ տեսչության կողմից կատարված աշխատանքների ծավալը ոչնչով չի զիջում 2012-2013 ուստարում կատարված աշխատանքների ծավալին:

Հաշվետու ժամանակահատվածում ստուգված հանրակրթական դպրոցներից ուսումնադաստիարակչական աշխատանքների համեմատաբար բարվոք դրվածք է արձանագրվել Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հ. 1 հիմնական դպրոցում (տնօրեն՝ Ռ. Դադայան), որտեղ մի շարք առարկաների դասավանդման դրվածքը՝ հայոց լեզու և գրականություն, օտար լեզուներ (անգլերեն և ռուսաց լեզու), պետական տեսուչների կողմից արժանացել է բարձր՝ «լավ» գնահատականի, ինչն, իհարկե, ոգևորիչ հանգամանք է:

Դրական տպավորություն են թողել նաև Ստեփանակերտի հ. 12 հիմնական (տնօրեն՝ Է. Գաբրիելյան), Մարտունու Ն. Ստեփանյանի անվան հ. 1 միջնակարգ հոսքային (տնօրեն՝ Կ. Պողոսյան), Բերձորի Վ. Թեքեյանի անվան միջնակարգ (տնօրեն՝ Անահիտ Քոսակյան), Մարտակերտի շրջանի Վաղուհասի միջնակարգ (տնօրեն՝ Դոնարա Գրիգորյան), Հադրութի շրջանի Մարիամաձորի միջնակարգ (տնօրեն՝ Միքայել Խաչատրյան), Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի միջնակարգ (տնօրեն՝ Ժորա Մարգարյան), Շուշիի Դ. Ղազարյանի անվան մասնագիտացված երաժշտական միջնակարգ (տնօրեն՝ Գոհար Մկրտչյան), Շահումյանի շրջանի Նոր Գետաշենի միջնակարգ (տնօրեն՝ Դ. Գևորգյան) դպրոցները, չնայած նշված դպրոցներում քիչ չեն նաև չլուծված խնդիրները:

Ստուգումների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ դպրոցների մի զգալի մասում վիճակը, մեղմ ասած, տխուր է. ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը ցածր հիմքերի վրա է, ընդհանուր առմամբ չի գոհացնում ուսման որակը, ուսումնառության և ուսուցանման դրվածքը, դեռ ավելին. դպրոցներում հանդիպում ենք ուսուցիչների, որոնք գոնե նվազագույն չափով չեն տիրապետում իրենց առարկային ու նրա դասավանդման մեթոդներին, դասերը վարում են անհետաքրքիր ու անարդյունավետ: Ներդպրոցական վերահսկողությունը շատ դեպքերում թույլ է իրականացվում, եթե չասենք, որ հաճախ էլ կրում է ձևական բնույթ, մանկավարժական խորհուրդները չեն ծառայում իրենց նպատակին և այլն:

Նման դպրոցների շարքում են Քաշաթաղի շրջանի Հակարիի (տնօրեն՝ Ա. Մովսիսյան, ով տեսչական ստուգումից հետո իր դիմումի համաձայն ազատվել է զբաղեցրած պաշտոնից), Վուրգավանի (տնօրեն՝ Մկրտիչ Փոթոյան), Կովսականի Թ. Կրպեյանի անվան (տնօրեն՝ Սերոբ Քարամյան, Ալաշկերտի (տնօրեն՝ Լիանա Հակոբյան), Ասկերանի շրջանի Քռասնու (տնօրեն՝ Դավիթ Համբարձումյան), Հադրութի շրջանի Առաքելի Սլավիկ Սեյրանյանի անվան (տնօրեն՝ Բորիկ Ամիրջանյան), Ջրակուսի (տնօրեն՝ Կ. Հայրապետյան), Մարտակերտի շրջանի Մեծ շենի Կ. Եսայանի անվան (տնօրեն՝ Ռուզաննա Դանիելյան), Մարտունու շրջանի Քերթի Կոմիտաս Հակոբյանի անվան (տնօրեն՝ Ժիրայր Հայրապետյան) միջնակարգ ու Մարտունու շրջանի Քարահունջի հիմնական (տնօրեն՝ Արթուր Լալայան) դպրոցները:

Առանձնապես մտահոգիչ է Մեծ շենի միջնակարգ դպրոցում տիրող վիճակը: Այս դպրոցում տարիներ շարունակ տիրում էր լարված, անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, ինչը մինչ օրս շարունակվում է, չնայած ուստարվա սկզբից այն ղեկավարում է նոր տնօրեն Ռ. Դանիելյանը: Ամբողջ ուստարվա ընթացքում բազմաթիվ բողոք-դիմումներ են ստացվել դպրոցից: Տեսչության կողմից ձեռնարկվել են կոնկրետ քայլեր՝ վիճակն այնտեղ որոշ չափով շտկելու համար: Բավական է ասել, որ դպրոցը հոկտեմբերին ենթարկվել է համակողմանի, իսկ մայիսին՝ 1-ին ստուգման հետքերով, պայմանավորվածության համաձայն՝ թեմատիկ ստուգման: Առաջին ստուգման ժամանակ 3-րդ դասարանի դասվար Անահիտ Բաղդասարյանի աշխատանքն ու մաթեմատիկայի դասավանդման դրվածքը գնահատվել էին «անբավարար», ժամանակ էր տրվել ուսուցիչներին մինչև ուստարվա վերջ վիճակը բարելավելու համար: Ցավալի է, բայց փաստ, որ Ա. Բաղդասարյանը շարունակել է աշխատել նույն ոճով՝ արհամարհելով պետական տեսուչների կողմից արված դիտողությունները և փորձ անգամ չի արել իր աշխատանքում դրական բեկում մտցնելու համար: Մաթեմատիկայի ուսուցիչների մոտ քիչ թե շատ դրական տեղաշարժ նկատվել է: Տեղեկանքները համապատասխան առաջարկություններով ուղարկված են Մարտակերտի վարչակազմի ղեկավարին՝ անհրաժեշտ անհետաձգելի քայլեր ձեռնարկելու Մեծ շենի միջնակարգ դպրոցում վիճակը բարելավելու ուղղությամբ: Հավելենք, որ ինչպես և առաջին ստուգման ընթացքում, տեսչական հանձնաժողովը դասվար Ա. Բաղդասարյանի աշխատանքը կրկին գնահատել է «անբավարար», մաթեմատիկայի ուսուցիչների աշխատանքը՝ «վերապահումով բավարար», ուսումնառության դրվածքը՝ «անբավարար»:

Նախարարի հատուկ հանձնարարականով տեսչապետը Ասկերանի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչի հետ համատեղ Հարավի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Զարինե Մինասյանի դիմումի ստուգման ու քննարկման նպատակով ստուգայց է իրականացրել Հարավի միջնակարգ դպրոց:

Իրականացված համատեղ ստուգումների արդյունքում պարզվել է, որ նշված դպրոցի նախկին տնօրեն Պավել Ղազիյանը իր պաշտոնավարման տարիներին թույլ է տվել պաշտոնեական դիրքի չարաշահման դեպքեր, հակամանկավարժական արարքներ. նրա աշխատաոճում առկա էին անհանդուրժողականության և անվստահության դրսևորումներ, ինչի արդյունքում առաջարկվել է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ տնօրինության կազմն ուժեղացնելու ուղղությամբ: Ստուգումից անմիջապես հետո Պ. Ղազիյանը իր դիմումի համաձայն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Դիմումների վիճակագրությունը ըստ վարչատարածքների այսպիսին է՝

- Մարտունու շրջանից՝ 5 (Ղ. Ճարտարի մանկապարտեզ՝ 1, Մաճկալաշենի միջնակարգ դպրոց՝ 2, Ճարտարի հ. 2 հիմնական դպրոց՝ 1, կրթության բաժնից՝ 1),
- Մարտակերտի շրջանից՝ 4 (Մեծ շենի միջնակարգ դպրոցից՝ 3, կրթության բաժնից՝ 1),
- Քաշաթաղի շրջանից՝ 4 (Աղավնոյի, Մշենիի, Արծվաշենի միջնակարգ դպրոցներից և կրթության բաժնից՝ մեկական),
- Ասկերանի շրջանից՝ 2 (Խաչենի միջնակարգ դպրոց՝ 1, կրթության բաժնից՝ 1):

Վերջին տարիներին տեսչություն մտած գրավոր դիմումների վիճակագրության դիտարկումից ակնհայտ երևում է, որ ամեն տարի դրանց քանակը նվազում է, ինչը, ըստ իս, կարելի է որակել որպես դրական երևույթ: Նախանցյալ տարի ստացվել են 44, անցած տարի՝ 30, այս տարի՝ 15 դիմում կամ դիմում-բողոք:

Դիմումների քանակի երկու անգամ նվազումը՝ (30-ից՝ 15) հաստատում է նախորդ հաշվետվության մեջ մեր կողմից հայտնած կարծիքը, որ դիմումների նվազման միտումը շարունակական բնույթ կկրի: Ուրախալի է նաև այն փաստը, որ գրեթե բոլոր դիմումները հասցեագրված են եղել ԼՂՀ ԿԳ նախարարին, այլ ոչ թե ավելի բարձր ատյաններ: Անցած ուսումնական տարում 30 դիմումից 9-ը կամ ուղիղ 30 տոկոսը հասցեագրված է եղել ԼՂՀ նախագահին, վարչապետին, նույնիսկ՝ Մարդու իրավունքների պաշտպանին:

Տեսչության պետին հասցեագրված բոլոր դիմումները պահանջվող ժամկետներում ընթացքավորվել են, ու դիմումների հեղինակներին տրվել սպառիչ ու հիմնավորված պատասխաններ:

Դիմումները եղել են տարբեր բովանդակության՝ աշխատանքով ապահովման, տնօրենների կողմից իրականացվող ոչ ճիշտ քաղաքականության, դպրոցական ցանցում փոփոխություն կատարելու, ուսուցիչների ատեստավորման արդյունքում ընդունված ոչ ճիշտ որոշումների և այլ հարցերի վերաբերյալ:

Ամենից աղաղակող, 1-ին հայացքից անհավանական թվացող փաստերով դիմումը (անանուն) ստացվել է Քաշաթաղի շրջանի Աղավնո գյուղի մի խումբ ուսուցիչներից:

Դիմումի հիմնական բովանդակությունն է. դպրոցի տնօրեն Սուրեն Ռուբենի Մկրտչյանը աշխատանքի է անցել իրեն չպատկանող սերիա Ա 046508 համարի գրանցման 0612 համարով դիպլոմով, որն իրականում պատկանում է ոմն Գագիկ Դավթի Լամբարյանին: Մանրամասն ուսումնասիրելով ու ստուգելով դիմումում բերված բոլոր փաստերը՝ կարճ ժամանակահատվածում մեզ հաջողվեց ապացուցել, որ դիմումի մեջ բերված փաստերը, որքանով էլ առաջին հայացքից անհավանական էին թվում, այնուհանդերձ, համապատասխանում են իրականությանը: Որպես տեսչապետ՝ օգտվելով ինձ վերապահված լիազորություններից, առաջարկել եմ գործող օրենսդրության սահմաններում պատասխանատվության ենթարկել Աղավնոյի միջնակարգ դպրոցի տնօրեն Ս. Մկրտչյանին: Քաշաթաղի վարչակազմի ղեկավարությունը, ստանալով նախարարության առաջարկությունը, վերհանված փաստի կապակցությամբ անհապաղ քայլեր է ձեռնարկել այդ տխուր փաստի առթիվ: Սուրեն Ռուբենի Մկրտչյանը Քաշաթաղի վարչակազմի ղեկավարի 2013թ. սեպտեմբերի 11-ի հ. 52 հրամանով ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Նրա նկատմամբ հարուցված է եղել քրեական գործ, որը, ըստ կրթության բաժնից ստացված տեղեկության, կարճվել է:

Կարծում եմ՝ նման կարգի պատժամիջոցներն ուսանելի դաս կհանդիսանան հանրակրթության մեջ ընդգրկված մանկավարժական այն աշխատողների համար, որոնք հակված են անիրավական, հակաօրինական գործողություններ կատարելու:

Տեսչությունը, անչափ կարևորելով մանկավարժական աշխատողների տարիֆավորման ցուցակների՝ որպես կարևորագույն ֆինանսական փաստաթղթի ճիշտ կազմումը, ամեն տարեսկզբի ստուգում է բոլոր հաստատությունների տարիֆավորման ցուցակները, ինչը, ինչպես ցույց է տալիս փորձը, նվազագույնի է հասցնում ֆինանսական միջոցների անտեղի վատնումը:

Պարբերաբար իրականացնելով արտաքին տարաբնույթ ստուգումներ՝ տեսչությունը միաժամանակ անչափ կարևորում է ներքին ստուգումը, ինչն իրականացվում է տնօրինության կողմից: Առանց ներքին ստուգումների հնարավոր չէ իրականացնել լիարժեք ներդպրոցական վերահսկողություն:

Գաղտնիք չէ նաև, որ ստուգումների հիմնական ձևը համարվում են դասալսումները: Բոլորիս քաջ հայտնի է, որ ինչպես առանց որակյալ տեսչական ստուգումների, այնպես էլ առանց դասալսումների անհնարին է դառնում ուսուցչի ատեստավորման կարգի պահանջների ճիշտ կատարումը:

Դա է պատճառը, որ վերջին տարիների ընթացքում տեսչության կողմից պարբերաբար ստուգվում են դպրոցների տնօրինության կողմից կատարված դասալսումների քանակն ու որակը և հրապարակվում «Լուսարար»-ում՝ որպես հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքների բաղկացուցիչ մաս:

Այս ուսումնականի վերջին մեր կողմից ստուգվել են գործող 216 հանրակրթական դպրոցների 490 ղեկավարների (տնօրեններ ու տեղակալներ) կողմից կատարված դասալսումների քանակն ու որակը (տե՛ս աղյուսակը):

Ասել, թե բոլոր ղեկավարներն են լուրջ վերաբերվում այդ պատասխանատու աշխատանքին, կամ հաղթահարված են ձևականություններն այդ գործում, սխալ կլինի, բայց անվիճելի փաստ է նաև, որ նրանց ճնշող մեծամասնությունը պատշաճ ուշադրություն է դարձնում դասալսումներին և ամեն կերպ ձգտում է այդ աշխատանքները կատարել ոչ թե որպես վերադասից տրված հանձնարարական, այլ որպես պաշտոնեական պարտականություն, իսկ դա անչափ կարևոր հանգամանք է:

Վերլուծելով աղյուսակը և այն համեմատելով նախորդ տարիների ցուցանիշների հետ՝ դժվար չէ համոզվել, որ կան, դրական տեղաշարժեր, բայց կան նաև ղեկավարներ, որոնք լուրջ չեն վերաբերվում այդ աշխատանքներին:

Բացթողումների մասին ավելի մանրամասն ասվում է անմիջապես ստուգումների ժամանակ: Ամեն մի ղեկավար ավելի լավ գիտի, թե որտեղ է ինքը թերանում, նույնիսկ առանց վերադասի կողմից արված դիտողության ու առաջարկության, ուստի մնում է կոչ անել մեր դպրոցների ղեկավարներին՝ աշխատել ոչ թե պլանը կատարելու կամ ստուգողին ցույց տալու համար, այլ խղճի մտոք՝ ի շահ մեր երեխաների կրթության ու դաստիարակության սուրբ և խիստ պատասխանատու գործի:

Դասալսումների աղյուսակի ավելի մանրամասն վերլուծությունը նպատակահարմար եմ գտնում թողնել Ստեփանակերտի քաղաքապետարանի ու շրջվարչակազմերի կրթության բաժինների պատասխանատուներին:

Անցյալ տարվա հաշվետվության մեջ հիմնավորել եմ, որ 15 հաստիքային միավորը կրթության պետական տեսչության համար քիչ է, հաստիքների թվի ավելացման կարիք կա: Նման պահանջ մենք գրավոր ներկայացրել ենք ԼՂՀ կառավարություն, այդ մասին քաջատեղյակ է մեր նախարարը, չեմ ուզում նորից քննարկել այդ հարցը, ուղղակի ուզում եմ հավատալ, որ տեսչությունը առաջիկա տարիներին կհամալրվի նոր պետական տեսուչներով՝ ելնելով անհրաժեշտությունից:

Հաշվետու ժամանակահատվածում ԿՊ տեսչության կողմից կատարված աշխատանքների մասին ավելի ամբողջական կարծիք կազմելու համար «Լուսարար»-ում զետեղվում են 2013-2014 ուստարում անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների հիման վրա պետական տեսուչների կատարած մասնագիտական վերլուծությունները՝ ըստ առարկաների:

Տեսչության կատարած աշխատանքների մասին հերթական հաշվետվությունը ուզում եմ ավարտել հետևյալ խոսքերով. մենք կփորձենք այսուհետ ևս ձեռնարկել բոլոր հնարավոր քայլերը կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների գործընթացին մեր համեստ ավանդը ներդնելու համար և պատրաստ ենք ընդունելու տեսչության հասցեին ցանկացած առողջ քննադատություն:

**Սոս ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ**
**ԼՂՀ ԿԳ նախարարության**
**կրթության պետական տեսչության պետ,**
**ԼՂՀ վաստակավոր մանկավարժ**

# ՏԵՍՉԱԿԱՆ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 37 | Հարությունյան Պոբեդիկ Սլավիկի | տնօրեն /ֆիզիկա/ | Կոլխոզաշենի մ/դ | 8 | 170 | լավ | 100 |
| 38 | Մելքումյան Սվետլանա Եփրեմի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրակ., 0.5 հ./ | | | 125 | լավ | 100 |
| 39 | Խաչատրյան Եվգենյա Խորենի | ՄԿԱԳՏՏ / հայոց լեզու և գրակ., 0.5 ? ./ | | | 70 | լավ | 100 |
| 40 | Սահակյան Դիանա Բեյբուդի | տնօրեն /հայոց լեզու և գրակ., 0,5 հ./ | Սմնտայի մանկամսուր | 4 | 87 | լավ | 100 |
| 41 | Ալավերդյան Համլետ Հրանտի | տնօրեն /մաթեմատիկա/ | Թաղավարդի մ/դ | 12, 1 նախ. խումբ | 170 | լավ | 100 |
| 42 | Դաշյան Ռիտա Ժորայի | ուս. գծով տնօրենի տեղակալ/ մաթեմատիկա/ | | | 250 | լավ | 100 |
| 43 | Հարությունյան Արարատ Մելիքի | ՄԿԱԳՏՏ /Ֆիզկուլտուրա/ | | | 60 | լավ | 100 |
| 44 | Հարությունյան Նորայր Իլիկոյի | տնօրեն /աշխարհագրություն/ | Ձիվանիի հ/դ | 8 | 87 | բավ | 51 |
| 45 | Գրիգորյան Սլավիկ Գուրգենի | ուս. գծով տնօրենի տեղակալ/ ֆիզիկա, 0.5 հ./ | | | 45 | լավ | 36 |
| 46 | Շինդյան Մխիթար Ավանեսի | տնօրեն /մաթեմատիկա/ | Աշանի Ա. Հովսեփյանի անվ. մ/դ | 12 | 141 | բավ | 83 |
| 47 | Ավանեսյան Արմինե Ծատուրի | ուս. գծով տնօրենի տեղակալ / հայոց լեզու և գրակ./ | | | 225 | լավ | 90 |
| 48 | Բալայան Ֆելիքս Կարենի | ՄԿԱԳՏՏ | | | 60 | լավ | 100 |
| 49 | Գևորգյան Մանուշակ Կոնստանտինի | տնօրեն /ռուսաց լեզու/ | Սաճկալաշենի մ/դ | 9 | 144 | բավ | 85 |
| 50 | Բաղասյան Ռախսա | ուս. գծով տնօրենի տեղակալ/0,5 հ., մաթեմատիկա/ | | | 105 | բավ | 84 |
| 51 | Հարությունյան Մանուշակ Ավանեսի | ՄԿԱԳՏՏ /մաթեմատիկա, 0.5 հ./ | | | 64 | անբավ | 100 |
| 52 | Գրիգորյան Սարգիս Եղիշեի | տնօրեն /մաթեմատիկա/ | Հերիների մ/դ | 10 | 160 | բավ | 94 |
| 53 | Գյուրջյան Մարգարիտա Խորենի | ուս. գծով տնօրենի տեղակալ/0.5 հ., ինֆորմատիկա/ | | | 121 | բավ | 97 |
| 54 | Խաչատրյան Լորա Միշայի | ՄԿԱԳՏՏ /0.5 հ., մաթեմատիկա/ | | | 65 | լավ | 100 |
| 55 | Աղավելյան Լյովա Սանջանի | տնօրեն /մաթեմատիկա/ | Շեխերի մ/դ | 11 | 170 | լավ | 100 |
| 56 | Դուլյան Անահիտ Համլետի | ուս. գծով տնօրենի տեղակալ/մաթեմատիկա/ | | | 211 | լավ | 84 |
| 57 | Դավթյան Նվարդ Հրանտի | ՄԿԱԳՏՏ /մաթեմատիկա/ | | | 57 | լավ | 95 |
| 58 | Հակոբյան Սերժիկ Արշակի | տնօրեն /ֆիզիկա/ | Խնուշինակի մ/դ | 12, 1 նախ. խումբ | 157 | լավ | 92 |
| 59 | Սարգսյան Կարինե Սուրենի | ուս. գծով տնօրենի տեղակալ/ հայոց լեզու և գրակ./ | | | 61 | բավ | 24 |
| 60 | ՎարդանյանԿարինեԵրվանդի | ՄԿԱԳՏՏ /մաթեմատիկա, ինֆորմ./ | | | 58 | լավ | 97 |
| 61 | Արզումանյան Սլավիկ Ալեքսանդրի | տնօրեն /ֆիզիկա/ | Զորավանի մ/դ | 11, 1 նախ. խումբ | 142 | բավ | 84 |
| 62 | Սողոմոնյան Լիլիթ Յուրիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրակ./ | | | 200 | բավ | 80 |
| 63 | Մաթևոսյան Գայանե Ռազմիկի | ՄԿԱԳՏՏ /պատմություն/ | | | 61 | լավ | 100 |
| 64 | Աբրահամյան Լիլիթ Առնոլդի | տնօրեն /մաթեմատիկա և ինֆորմատիկա/ | Ենիշճանի հ/դ | 6 | 150 | բավ | 88 |
| 65 | Գրիգորյան Սուսաննա Գեորգիի | տնօրեն /մաթեմատիկա/ | Հացու հ/դ | 4 | 170 | բավ | 100 |
| 67 | Սահակյան Մարգարիտա Կիմի | տնօրեն /մաթեմատիկա/ | Թ.Կալերի հ/դ | 9 | 170 | լավ | 100 |
| 68 | Մնացականյան Գյուլչորա Միքայելի | ուս. գծով տնօրենի տեղակալ/0.5 հ., ֆիզիկա/ | | | 125 | լավ | 100 |
| 69 | Հայրումյան Նելսոն Բադիշի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Ծովատեղի հ/դ | 7 | 82 | բավ | 48 |
| 70 | Դանիելյան Նազիկ Կիմայի | ուս. գծով տնօրենի տեղակալ/0.5 հ., հայոց լեզու և գրակ./ | | | 70 | անբավ | 56 |
| 71 | Արզումանյան Մեսրոպ Ռոբերտի | տնօրեն /պատմություն/ | Ճարտարի հ. 2 հ/դ | 7 | 163 | լավ | 96 |
| 72 | Բաբայան Ռուզաննա Խորենի | ուս. գծով տնօրենի տեղակալ/0.5 հ., /մաթեմատիկա/ | | | 121 | բավ | 97 |
| 73 | Վանյան Մանուշ Բորիկի | տնօրեն /կենսաբանություն/ | Սոսի Հ. Հակոբյանի անվան մ/դ | 12 | 193 | լավ | 113 |
| 74 | Պետրոսյան Ալիդա Ալեքսանդրի | ուս. գծ. տնօրենի տեղակալ /մաթեմատիկա/ | | | 250 | լավ | 100 |
| 75 | Ավետիսյան Սուսաննա Գուրգենի | ՄԿԱԳՏՏ /հայոց լեզու և գրականություն/ | | | 60 | լավ | 100 |
| 76 | Գրիգորյան Նելլի Գուրգենի | տնօրեն /մաթեմատիկա/ | Ննգու մ/դ | 7 | 170 | լավ | 100 |
| 77 | Ներսիսյան Գրիգորի Բորիսի | ՄԿԱԳՏՏ /0,5 հ., ֆիզիկա/ | | | 121 | լավ | 97 |
| 78 | Գրիգորյան Նունե Վազիֆի | ուս. գծով տնօրենի տեղակալ/0.5 հաստիք/ | | | 30 | լավ | 100 |
| 79 | Գրիգորյան Ռիտա Ռուբենի | տնօրեն /հայոց լեզու և գրականություն/ | Ավդուռի հ/դ | 4 | 170 | բավ | 100 |
| 80 | Զաքարյան Լիրա Սերգեյի | տնօրեն /Ֆիզիկա/ | Մյուրիշենի հ/դ | 4 | 130 | բավ | 76 |
| 81 | Ավետիսյան Հունան Նորայրի | տնօրեն /պատմություն/ | Հաղորտու մ/դ | 5 | 175 | լավ | 103 |
| 82 | Ուլուբաբյան Նաիրա Արմենի | տնօրեն /դասվար, 0,5 հ./ | Վարանդայի մանկամսուր | 2 | 25 | բավ | 30 |
| 83 | Մեժլումյան Վագիֆ Գեորգիի | տնօրեն /մաթեմատիկա/ | Վազգենաշենի մ/դ | 9 | 143 | բավ | 84 |
| 84 | Վարդանյան Կարինե | ուս. գծով տնօրենի տեղակալ /0,5 հ., հայոց լեզու և գրակ// | | | 125 | անբավ | 100 |
| 85 | Պողոսյան Գայանե Ռուբենի | ՄԿԱԳՏՏ /0,5 հ., մաթեմատիկա/ | | | 38 | բավ | 100 |
| 86 | Զարզարյան Արտակ Սուրենի | տնօրեն /ԸՏԱ/ | Բերդաշենի Ս. Մելքոնյանի անվան մ/դ | 13 | 180 | լավ | 106 |
| 87 | Սարգսյան Օլեգ Սոլվեսի | ուս. գծով տնօրենի տեղակալ /մաթեմատիկա/ | | | 250 | լավ | 100 |
| 88 | Ասրյան Էդեմա Ռազմիկի | ՄԿԱԳՏՏ /քիմիա, կենսաբանություն/ | | | 250 | լավ | 100 |
| 89 | Առստամյան Վլադիմիր Վաչագանի | տնօրեն /մաթեմատիկա/ | Խերխանի հ/դ | 3 | 31 | բավ | 18 |
| 90 | Հայրապետյան Շիրազ Ալյոշայի | տնօրեն /մաթեմատիկա/ | Սպիտակաշենի մ/դ | 11 | 138 | բավ | 81 |
| 91 | Օհանջանյան Էլմիրա Միքայելի | ուս. գծով տնօրենի տեղակալ /քիմիա, կենսաբան./ | | | 215 | լավ | 86 |
| 92 | Բեգլարյան Նինա Ռուբենի | ՄԿԱԳՏՏ/պատմություն/ | | | 54 | լավ | 90 |
| | ***Հադրութի շրջան*** | | | | | | |
| 1 | Մինասյան Արթուր Արսենի | տնօրեն /աշխարհագրություն/ | Հադրութի Ս. Մանվելյանի անվ. մ/դ | 27 | 170 | լավ | 100 |
| 2 | Դավթյան Ալիդա Ալեքսեյի | ուս. գծով տնօրենի տեղակալ/մաթեմատիկա/ | | | 250 | լավ | 100 |
| 3 | Եղյան Լաուրա Գրիգորիի | ուս. գծով տնօրենի տեղակալ/0,5 հ., մեթոդիկա/ | | | 125 | լավ | 100 |
| 4 | Գրիգորյան Գայանե Միքայելի | ՄԿԱԳՏՏ /ռուսաց լեզու/ | | | 60 | բավ | 100 |
| 5 | Ավետիսյան Ռուզաննա Աուզայի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Մեծ Թաղերի Խուդյակովի անվ. մ/դ | 14 | 170 | լավ | 100 |
| 6 | Լալայան Իրա Գրիշայի | ուս. գծով տնօրենի տեղակալ /աշխարհագրություն/ | | | 209 | լավ | 84 |
| 7 | Դանիելյան Սվետա Վաչիկի | ՄԿԱԳՏՏ /քիմիա և կենսաբանություն/ | | | 60 | լավ | 100 |
| 8 | Պողոսյան Իլյաս Սերգեյի | տնօրեն /ֆիզիկա/ | Ազոխի մ/դ | 12 | 170 | լավ | 100 |
| 9 | Պետրոսյան Նվարդ Էլդարի | ուս. գծով տնօրենի տեղակալ/մաթեմատիկա/ | | | 250 | լավ | 100 |
| 10 | Գևորգյան Գևորգ Արկինի | ՄԿԱԳՏՏ /մաթեմատիկա/ | | | 60 | լավ | 100 |
| 11 | Դավոյան Վլադիկ Պետրոսի | տնօրեն /ֆիզիկա/ | Տողի Վ. Գրիգորյանի անվ. մ/դ | 12 | 171 | լավ | 100 |
| 12 | Ստեփանյան Քաջերիկ Միքայելի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրականություն/ | | | 252 | լավ | 100 |
| 13 | Ավետիսյան Գրիգորի Էռնեստի | ՄԿԱԳՏՏ / ՆԶՊ և ֆիզկուլտուրա/ | | | 60 | բավ | 100 |
| 14 | Ավագյան Լյուդմիլա Արտաշի | տնօրեն /քիմիա և կենսաբանություն/ | Տումու Ս. Աբրահամյանի անվ. մ/դ | 12 | 179 | լավ | 105 |
| 15 | Ստեփանյան Լյուդվիկ Գուրգենի | ուս. գծով տնօրենի տեղակալ/պատմություն/ | | | 250 | ցածր | 100 |
| 16 | Սաղյան Անուշ Կամոյի | ՄԿԱԳՏՏ /հայոց լեզու և գրակ./ | | | 65 | բավ | 100 |
| 17 | Արզումանյան Արթուր Սամսոնի | տնօրեն /ֆիզիկա/ | Ուխտաձորի Ա. Մկրտչյանի անվ. մ/դ | 9 | 155 | բավ | 91 |
| 18 | Ամիրջանյան Ասյա Սուրենի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրականություն, 0,5 հ./ | | | 130 | բավ | 104 |
| 19 | Քալաշյան Էլմիրա Մարտինի | ՄԿԱԳՏՏ /հայոց եկեղեցու պատմություն, 0,5 հ./ | | | 60 | բավ | 100 |
| 20 | Ստեփանյան Սլավիկ Գաչայի | տնօրեն /մաթեմատիկա/ | Դրախտիկի Վ. Բաղդասարյանի անվ. մ/դ | 11 | 171 | բավ | 100 |
| 21 | Դուլյան Սուսաննա Ալեքսեյի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրականություն/ | | | 250 | լավ | 100 |
| 22 | Գևորգյան Վրեժ Հայասերի | ՄԿԱԳՏՏ /ինֆորմատիկա/ | | | 60 | բավ | 100 |
| 23 | Ասրյան Լիրա Ասծատուրի | տնօրեն /մաթեմատիկա/ | Ակնաղբյուրի Վ. Ամիրջանյանի անվ. մ/դ | 9 | 170 | բավ | 100 |
| 24 | Բալայան Սուսաննա Ռոբերտի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրականություն, 0,5 հ./ | | | 125 | բավ | 100 |
| 25 | Հարությունյան Գայանե Գարիկի | ՄԿԱԳՏՏ /քիմիա և կենսաբանություն, 0,5 հ./ | | | 30 | բավ | 100 |
| 26 | Խաչատրյան Միքայել Յուրիկի | տնօրեն /մաթեմատիկա/ | Սարիամաձորի Ն. Սաղյանի անվ. մ/դ | 11 | 170 | բավ | 100 |
| 27 | Գրիգորյան Սվետլանա Միքայելի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրականություն/ | | | 250 | լավ | 100 |
| 28 | Արզումանյան Նազելի Յաշայի | ՄԿԱԳՏՏ /քիմիա և կենսաբանություն/ | | | 60 | բավ | 100 |
| 29 | Ներսիսյան Լևոն Գուրգենի | տնօրեն /մաթեմատիկա/ | Թաղոտի միջն. դպրոց | 7 | 172 | լավ | 100 |
| 30 | Ղուկասյան Էդիկ Արտաշի | ուս. գծով տնօրենի տեղակալ/պատմություն, 0,5 հաստիք/ | | | 126 | լավ | 100 |
| 31 | Ներսիսյան Բորիս Գուրգենի | ՄԿԱԳՏՏ / մաթեմատիկա, 0,5 հ./ | | | 30 | լավ | 100 |
| 32 | Փաթյան Էդիկ Վարշամի | տնօրեն /քիմիա և կենսաբանություն/ | Առաքելի Ս. Սեյրանյանի անվ. մ/դ | 8 | 95 | բավ | 56 |
| 33 | Համբարձումյան Արևիկ Սերգեյի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրականություն, 0,5 հ./ | | | 114 | լավ | 91 |
| 34 | Բաղդասարյան Ինգա | ՄԿԱԳՏՏ /ռուսաց լեզու, 0,5 հ./ | | | 21 | ցածր | 70 |
| 35 | Եսայան Էմին Էռնեստի | տնօրեն /ճարտարապետ, 0,5 հ./ | Ծամձորի մանկամսուր | 3 | 39 | բավ | 23 |
| 36 | Հայրապետյան Կայծեր Սերգեյի | տնօրեն /աշխարհագրություն/ | Ջրակուսի մ/դ | 8 | 165 | բավ | 97 |
| 37 | Բաբայան Նունե Գեորգիի | ուս. գծով տնօրենի տեղակալ/աշխարհագրություն , 0,5 հ./ | | | 117 | բավ | 94 |
| 38 | Իշխանյան Կարինե Բորիկի | ՄԿԱԳՏՏ /մեթոդիկա, 0,5 հ./ | | | 25 | բավ | 83 |
| 39 | Ստեփանյան Լավրենտ Գուրգենի | տնօրեն /մեթոդիկա/ | Մոխրենեսի մ/դ | 7 | 167 | բավ | 98 |
| 40 | Պետրոսյան Նատաշա Շաբոյի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրակ., 0,5 հ./ | | | 126 | լավ | 100 |
| 41 | Պողոսյան Ալիդա Արտաշեսի | ՄԿԱԳՏՏ /մեթոդիկա, 0,5 հ./ | | | 30 | լավ | 100 |
| 42 | Սնյան Նովելլա Հովսեփի | տնօրեն/հայոց լեզու և գրակ./ | Թաղասերի հ/դ | 9 | 167 | լավ | 98 |
| 43 | Ֆանունց Կարինա Սուրենի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրակ., 0,5 հ./ | | | 126 | լավ | 100 |
| 44 | Դավթյան Կարինե Ալեքսեյի | տնօրեն /դասվար, 0.5 հ./ | Կարմրակուճի մանկամսուր | 4 | 65 | բավ | 76 |
| 45 | Ավանեսյան Արթուր Արտավազդի | տնօրեն /պատմություն/ | Այգեստանի հ/դ | 7 | 154 | բավ | 91 |
| 46 | Անդրյան Էլզա Ալեքսեյի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրականություն, 0,5 հ./ | | | 125 | լավ | 100 |
| 47 | Պողոսյան Անահիտ Սամվելի | ՄԿԱԳՏՏ /մեթոդիկա, 0.5 հ./ | | | 30 | բավ | 100 |
| 48 | Հայրապետյան Վարսիկ Բորիսի | տնօրեն /հայոց լեզու և գրականություն/ | Խծաբերդի Վ. Գրիգորյանի անվ. հ/դ | 9 | 150 | ցածր | 88 |
| 49 | Ամիրջանյան Անյա Սամվելի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրականություն, 0,5 հ./ | | | 114 | անբավ | 91 |
| 50 | Աբաղյան Մարինե Բորիկի | տնօրեն /մեթոդիկա/ | Հին Թաղերի հ/դ | 4 | 170 | բավ | 100 |
| 51 | Այվազյան Արարատ Ավետիսի | տնօրեն /մաթեմատիկա/ | Խանձաձորի Հ. Այվազյանի անվ. հ/դ | 7 | 82 | բավ | 48 |
| 52 | Սանզասարյան Գայանե | ուս. գծով տնօրենի տեղակալ/պատմություն, 0,5հ./ | | | 44 | անբավ | 35 |
| 53 | Հայրապետյան Զարինե Միքայելի | տնօրեն /մեթոդիկա, 0,5 հ./ | Հակակուանի մանկամսուր | 3 | 50 | բավ | 59 |
| 54 | Առաքելյան Նուշիկ Խորենի | տնօրեն /հայոց լեզու և գրականություն/ | Բանաձորի հ/դ | 5 | 178 | լավ | 105 |
| 55 | Հայրյան Նունե Արմիկի | տնօրեն /հայոց լեզու և գրականություն/ | Հակակուի հ/դ | 8 | 170 | բավ | 100 |
| 56 | Խաչյան Նարինե Ալեքսանդրի | ուս. գծով տնօրենի տեղակալ/քիմիա և կենսաբանություն, 0,5 հ./ | | | 125 | բավ | 100 |

## ՏԵՍԶԱԿԱՆ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 57 | Մկրտչյան Կարինե Թարխանի | տնօրեն /մաթեմատիկա/ | Առաջամուղի հ/դ | 11 | 170 | լավ | 100 |
| 58 | Հովհաննիսյան Իրինա Էդիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ/մաթեմատիկա/ | | | 228 | բավ | 100 |
| 59 | Բեջանյան Նելլի Դարիբի | ՄԿԱԳՏՏ /հայոց լեզու և գրակ./ | | | 60 | բավ | 100 |
| 60 | Բաղալյան Արևիկ Լևոնի | տնօրեն /մաթեմատիկա, ֆիզիկա/ | Արևշատի հ/դ | 8 | 170 | լավ | 100 |
| 61 | Ալթունյան Լուսինե Յուրայի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրականություն, 0,5 հ./ | | | 125 | լավ | 100 |
| 62 | Գասպարյան Էլզա Արշակի | տնօրեն /մերոդիկա/ | Քուրաթաղի Գ. Գասպարյանի անվ. հ/դ | 9 | 166 | բավ | 98 |
| 63 | Պողոսյան Արման Վլադիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ/հայոց լեզու և գրականություն, 0,5 հ./ | | | 126 | բավ | 100 |
| 64 | Ղազարյան Մերինե Հենրիկի | տնօրեն /կենսաբանություն/ | Նորաշենի հ/դ | 5 | 170 | լավ | 100 |
| 65 | Շաղյան Նվարդ Ռուբենի | տնօրեն /հայոց լեզու և գրականություն/ | Վարդաշատի հ/դ | 5 | 170 | լավ | 100 |
| | | | ***Շուշիի շրջան*** | | | | |
| 1 | Հովհաննիսյան Արամայիս Ալյոշայի | տնօրեն /պատմություն/ | Քարին տակի Ռ.Ղարախանյանի անվ. մ/դ | 12 | 170 | լավ | 100 |
| 2 | Հակոբյան Աշոտ Վանյայի | ուս. գծով տնօրենի տեղակալ /քիմիա, կենսաբանություն/ | | | 196 | բավ | 78 |
| 3 | Ամիրջանյան Անահիտ Հմայակի | ՄԿԱԳՏՏ /հայոց լեզու և գրակ./ | | | 60 | լավ | 100 |
| 4 | Աբրահամյան Էմմա Արամի | տնօրեն /մաթեմատիկա/ | Սուրացանի անվ. ավագ դպրոց | 8 | 145 | լավ | 85 |
| 5 | Ավանեսյան Համմիկ | ուս. գծով տնօրենի տեղակալ /հայոց լեզու և գրակ., 0,5 հ./ | | | 125 | լավ | 100 |
| 6 | Իսախանյան Կամելա Վոլոդյայի | ՄԿԱԳՏՏ /մերոդիկա, 0,5 հ./ | | | 36 | բավ | 100 |
| 7 | Նալբանդյան Նազիկ Ածատուրի | տնօրեն /մաթեմատիկա/ | Խ.Աբովյանի անվ. հ/դ | 17, 1 նախ. խումբ | 180 | լավ | 106 |
| 8 | Մկրտչյան Լիդա Սուրենի | ուս. գծով տնօրենի տեղակալ /հայոց լեզու և գրակ./ | | | 244 | լավ | 97 |
| 9 | Պողոսյան Լիլիա Ռաժդենի | ՄԿԱԳՏՏ /ֆիզիկա/ | | | 40 | անբավ | 67 |
| 10 | Պետրոսյան Արմեն Վաչիկի | տնօրեն /մաթեմատիկա/ | Եղծահողի Մ.Պետրոսյանի անվ. մ/դ | 5 | 70 | անբավ | 41 |
| 11 | Դավթյան Դավիթ Սերգեյի | տնօրեն /մաթեմատիկա/ | Մեծ շենի Ս.Դավթյանի անվան մ/դ | 5 | 158 | բավ | 93 |
| 12 | Բարսեղյան Կարեն Միքայելի | տնօրեն /ֆիզիկա/ | Հին շենի Ա. Մկրտչյանի անվ.հ/դ | 3 | 160 | լավ | 94 |
| 13 | Նասիբյան Լուսինե Յաշայի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Լիսագորի մ/դ | 5 | 145 | բավ | 85 |
| 14 | Հովսեփյան Անժելա Կարապետի | տնօրեն /ֆիզիկա, հունվարի 1-ից/ | Քիրսավանի հ/դ | 2 | 25 | բավ | 29 |
| | | | ***Քաշաթաղի շրջան*** | | | | |
| 1 | Ավետիսյան Աստղիկ Խաչիկի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Սուսի Ս. Հանեյանի անվ. մ/դ | 8 | 73 | բավ | 43 |
| 2 | Սարգսյան Մարգարիտա Գուրգենի | տնօրեն /անգլերեն/ | Միջնավանի Գ. Ստարավոյտովայի անվ. մ/դ | 12 | 170 | լավ | 100 |
| 3 | Սարգսյան Արմեն Հենրիկի | ՄԿԱԳՏՏ | | | 60 | լավ | 100 |
| 4 | Թադևոսյան Ռուզաննա Ռաֆիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /ռուսաց լեզու/ | | | 244 | լավ | 98 |
| 5 | Խնկոյան Թագուհի Վեքիլի | տնօրեն /ֆիզիկա/ | Երիցվանքի մ/դ | 10 | 173 | բավ | 100 |
| 6 | Շահնազարյան Զարզանդ Խաչիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0,5 հաստիք/ | | | 130 | լավ | 100 |
| 7 | Հակոբյան Հակոբ Ռազմիկի | տնօրեն /անգլերեն/ | Բերձորի Վ. Զատիկյանի անվ. հ. 2 մ/դ | 12 | 119 | բավ | 70 |
| 8 | Զոհրաբյան Նունե Աշխարհի | ուս. գծով տնօրենի տեղակալ /ռուսաց լեզու/ | | | 254 | բավ | 100 |
| 9 | Դավթյան Հայկանուշ Համազասպի | ՄԿԱԳՏՏ /պատմություն/ | | | 58 | բավ | 97 |
| 10 | Գալստյան Վոլոդյա Ալեքսանդրի | տնօրեն /բանասեր/ | Քարեգահի մ/դ | 9 | 149 | բավ | 100 |
| 11 | Վահանյան Արմիկ Սերոժանի | ուս. գծով տնօրենի տեղակալ /հայոց լեզու և գրակ./ | | | 250 | լավ | 100 |
| 12 | Միրիբյան Կարինե Վոլոդյայի | ՄԿԱԳՏՏ /դասվար/ | | | 61 | լավ | 100 |
| 13 | Արամյան Արամ Դավիթի<br>Շալունց Վիտալի Կարենի | /նախկին տնօրեն/<br>տնօրեն /ֆիզիկա/ | Այգեհովիտի մ/դ | 7 | 155 | լավ | 91 |
| 14 | Ստեփանյան Պարգև Գրիգորի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0,5, պատմություն/ | | | 115 | լավ | 68 |
| 15 | Գրիգորյան Ջուլիետա Բեգլարի | տնօրեն /պատմություն, փետրվարից/ | Ծիծեռնավանքի Վ. Առաքելյանի անվ. մ/դ | 7 | 108 | լավ | 100 |
| 16 | Կատայան Հռիփսիմե Աբրահամի | տնօրեն /անգլերեն/ | Կումայրիի մ/դ | 11 | 170 | լավ | 100 |
| 17 | Հայրապետյան Ալինա Լևոնի | ուս. գծով տնօրենի տեղակալ /պատմություն/ | | | 250 | բավ | 100 |
| 18 | Բադիկյան Ռաիսա Ստեփանի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Վարդուտի մ/դ | 6 | 170 | լավ | 100 |
| 19 | Հակոբյան Լիանա Անուշավանի | տնօրեն /ռուսաց լեզու/ | Ալաշկերտի մ/դ | 8 | 117 | լավ | 90 |
| 20 | Ավեյան Գայանե Լյովայի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0,5 հ., դասվար, ապրիլից/ | | | 36 | բավ | 90 |
| 21 | Մելքոնյան Թուշիկ Նիկոլայի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Հոչանցի Ալ. Վարդանյանի մ/դ | 2 | 170 | լավ | 100 |
| 22 | Մկրտչյան Արմինե Սերյոժայի | տնօրեն /մաթեմատիկա/ | Շալուայի մ/դ | 5 | 170 | բավ | 100 |
| 23 | Դավթյան Գևորգ Սայադի | տնօրեն /ֆիզիկա/ | Սարատակի մ/դ | 8 | 170 | բավ | 100 |
| 24 | Գրիգորյան Մարինե Մելսի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0.5 հ., հայոց լեզու և գրակ./ | | | 133 | լավ | 100 |
| 25 | Քարամյան Սերոբ Ռազմիկի | տնօրեն /ֆիզիկա/ | Կովսականի Թ. Կրպեյանի անվ. մ/դ | 12 | 170 | լավ | 100 |
| 26 | Օհանյան Ասյա Վաղինակի | ուս. գծով տնօրենի տեղակալ /հայոց լեզու և գրակ./ | | | 70 | լավ | 100 |
| 27 | Կարապետյան Գոհար Թաթոսի | ՄԿԱԳՏՏ /մաթեմատիկա, սկսնակ/ | | | 60 | բավ | 100 |
| 28 | Դադունց Սհեր Սաշիկի | տնօրեն /հնժեներ/ | Մարտունաշենի մ/դ | 6 | 160 | լավ | 94 |
| 29 | Քոսակյան Անահիտ Սայադի | տնօրեն /ֆիզիկա/ | Բերձորի Վ. Թեքեյանի անվ. թիվ 1 մ/դ | 12 | 170 | լավ | 100 |
| 30 | Սահակյան Սուսաննա Հուսիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /անգլերեն/ | | | 250 | լավ | 100 |
| 31 | Հովհաննիսյան Վարդուհի Մարտինի | ՄԿԱԳՏՏ /կենսաբանություն/ | | | 120 | լավ | 100 |
| 32 | Կիրակոսյան Վարդիթեր Մխիթարի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Արծվաշենի հ/դ | 4 | 170 | բավ | 100 |
| 33 | Սարոյան Նաթելա Վոլոդյայի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Գետամեջի Ա. Սիմոնյանի անվ. մ/դ | 8 | 170 | լավ | 100 |
| 34 | Բաբաջանյան Ռիմա Գարեգինի | տնօրեն /ֆիզիկա/ | Ծաղկաբերդի Ա. Նավասարդյանի անվ. մ/դ | 8 | 170 | լավ | 100 |
| 35 | Հարությունյան Անահիտ Լազրի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0,5, դասվար/ | | | 128 | լավ | 100 |
| 36 | Հովհաննիսյան Անահիտ Սերգեյի | տնօրեն /ֆիզիկա/ | Մոշաթաղի մ/դ | 10 | 166 | լավ | 98 |
| 37 | Խաչատրյան Անահիտ Սերգեյի | ուս. գծով տնօրենի տեղակալ /դասվար/ | | | 141 | բավ | 56 |
| 38 | Համբարձումյան Գագիկ Գևորգի | տնօրեն /մաթեմատիկա/ | Տանձուտի հ/դ | 3 | 119 | բավ | 70 |
| 39 | Սուրադյան Արմեն Ալբերտի | տնօրեն /մաթեմատիկա/ | Աղանուսի հ/դ | 5 | 173 | բավ | 100 |
| 40 | Դավթյան Արևիկ Կիրակոսի | տնօրեն /մաթեմատիկա/ | Դրախտաձորի հ/դ | 5 | 170 | լավ | 100 |
| 41 | Հարությունյան Վոլոդյա Վահանի<br>Սոլոմոնյան Լիդա Յուրիկի | /նախկին տնօրեն, մինչև մարտ/<br>տնօրեն /մաթեմատիկա/ | Արտաշավիի Լ. Ազգալդյանի անվ. մ/դ | 10 | 141 | լավ | 83 |
| 42 | Սուրադյան Վիլիկ Գևորգի | տնօրեն /պատմություն/ | Իշխանաձորի Հ. Թումանյանի անվ. մ/դ | 8 | 170 | լավ | 100 |
| 43 | Սեխպոսյան Գոհար Գարեգինի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0,5, ֆրանսերեն/ | | | 125 | լավ | 100 |
| 44 | Բալայան Քրիստինե Միքայելի | տնօրեն /իրավաբ./ | Մովսեսաշենի հ/դ | 3 | 153 | բավ | 85 |
| 45 | Տոնոյան Ալբերտ Ջանիբեկի | տնօրեն /մաթեմատիկա/ | Ղազարապատի մ/դ | 5 | 121 | լավ | 71 |
| 46 | Բարեյան Արմինե Զավենի | տնօրեն /մաթեմատիկա/ | Գողթանիկի մ/դ | 7 | 170 | լավ | 100 |
| 47 | Խաչատրյան Սուսաննա Վլադիմիրի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0,5, դասվար/ | | | 98 | բավ | 78 |
| 48 | Սարգսյան Նաիրա Միքայելի | տնօրեն /ռուսաց լեզու/ | Միրիկի մ/դ | 7 | 170 | բավ | 100 |
| 49 | Հակոբյան Մանյակ Շավարշի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0,5, աշխարհ./ | | | 125 | բավ | 100 |
| 50 | Հայրապետյան Արսեն Անդրանիկի | տնօրեն/ՆԶՊ, փետրվարից, սկսնակ/ | Հակարիի մ/դ | 4 | 30 | բավ | 50 |
| 51 | Թանանյան Ելենա Թադևոսի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Աղավնոյի մ/դ | 6 | 170 | բավ | 100 |
| 52 | Կարախանյան Մարգարիտա Ռաֆիկի | տնօրեն /մաթեմատիկա/ | Քաշունիքի Ճաղարյանի անվ. մ/դ | 4 | 170 | բավ | 100 |
| 53 | Հարությունյան Լուսիկ Մկրտիչի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Աղաձորի մ/դ | 7 | 170 | բավ | 100 |
| 54 | Հարությունյան Վարդան Հայկազի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Վակունիսի Վ. Վուրգանյանի անվ. հ/դ | 5 | 170 | բավ | 100 |
| 55 | Միրզոյան Էլլա Մարտունի | տնօրեն /ռուսաց լեզու/ | Տիգրանավանի մ/դ | 7 | 170 | լավ | 100 |
| 56 | Սեդրակյան Մետաքսյա Հմայակի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0,5, հայոց լեզու և գրակ./ | | | 129 | բավ | 100 |
| 57 | Ղազարյան Արտյոմ Ռաֆիկի | տնօրեն /պատմություն/ | Սոնասարի մ/դ | 5 | 132 | բավ | 78 |
| 58 | Ածատուրյան Լուսաբեր Ավոյի | տնօրեն /կիրառական մաթեմատիկա/ | Աղավնատան հ/դ | 8 | 130 | բավ | 77 |
| 59 | Մարտիրոսյան Գևորգ Մանուչարի | տնօրեն/պատմություն/ | Հայկազյանի մ/դ | 9 | չի ներկայացրել | | |
| 60 | Ազոյան Ռոզա Եղիշի | ուս. գծով տնօրենի տեղակալ /քիմիա/ | | | 140 | լավ | 56 |
| 61 | Ռաթևոսյան Վալերի Սասունի | տնօրեն /մաթեմ. ֆիզիկա/ | Լեռնահովիտի մ/դ, Հակի քառամյա | 7 | 160 | բավ | 100 |
| 62 | Հակոբյան Արմեն Էդիկի | տնօրեն /պատմություն/ | Ուռեկանի մ/դ | 9 | 172 | լավ | 100 |
| 63 | Ստեփանյան Տաթևիկ Պարգևի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0,5, անգլերեն/ | | | 110 | լավ | 88 |
| 64 | Պազալյան Սամվել Ազնավուրի | տնօրեն /բանասեր, սկսնակ/ | Հերիկի հ/դ | 6 | 150 | բավ | 88 |
| 65 | Վարդանյան Վարդան Անատոլիի | տնօրեն / ֆիզիկա/ | Վանի մ/դ | 7 | 70 | բավ | 41 |
| 66 | Գրիգորյան Վարդան Պատվականի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0,5 հաստիք, մաթեմատիկա/ | | | 30 | անբավ | 24 |
| 67 | Ներսիսյան Օսիկ Գառնիկի | տնօրեն /պատմություն/ | Դիցմայրիի հ/դ | 5 | 71 | բավ | 42 |
| 68 | Մելքոնյան Հայկարամ Վահանի | տնօրեն | Արվականի հ/դ | 2 | 140 | բավ | 82 |
| 69 | Հովհաննիսյան Հովհաննես Հրանտի | տնօրեն/պատմություն/ | Գանձայի մ/դ | 4 | 150 | բավ | 88 |
| 70 | Ներսիսյան Աշոտ Վալտերի | տնօրեն /իրավաբան/ | Աշենիի մ/դ | 6 | 116 | բավ | 68 |
| 71 | Փոթոյան Մկրտիչ Լյուդվիկի | տնօրեն /իրավաբան/ | Վուրգավանի մ/դ | 6 | 70 | բավ | 41 |
| 72 | Եղիազարյան Հայկ Յուրիկի | տնօրեն /բանասեր/ | Բազմառուսի մ/դ | 3 | 170 | բավ | 100 |
| 73 | Մկրտչյան Աննա Սամվելի | տնօրեն /մաթեմատիկա/ | Վաղազինի մ/դ | 5 | 170 | լավ | 100 |
| 74 | Թումանյան Վալեր Սերգեյի | տնօրեն /ֆիզիկա/ | Կերենի մ/դ | 3 | 160 | բավ | 94 |
| 75 | Մկրտչյան Հարութ Գագիկի | տնօրեն /ՆԶՊ և ֆիզկուլտուրա/ | Ծոբաձորի մ/դ | 3 | 100 | բավ | 59 |
| | | | ***Շահումյանի շրջան*** | | | | |
| 1 | Հովհաննիսյան Արմինե Ասքանազի | տնօրեն /ֆիզիկա/ | Նոր Էրքեջի մ/դ | 8 | 180 | լավ | 106 |
| 2 | Իսկանդարյան Մալինա Խաչատուրի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0.5 հ., հայոց լեզու և գրակ./ | | | 152 | լավ | 120 |
| 3 | Սամվելյան Արմիդա Տիգրանի | ՄԿԱԳՏՏ /0.5 հ., հայոց լեզու և գրակ./ | | | 47 | լավ | 100 |
| 4 | Քոչարյան Ալիկ Նիկոլայի | տնօրեն /01.02.2013թ-ից, մաթեմատիկա/ | Չարեքտարի Կ. Հովհաննիսյանի անվ. մ/դ | 9 | 150 | լավ | 88 |
| 5 | Ազատյան Լուսինե Վլադիմիրի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0.5 հ., պատմություն/ | | | 106 | լավ | 85 |
| 6 | Սևյան Մերի Լավրենտի | ՄԿԱԳՏՏ /0.5 հ.. դասվար/ | | | 33 | լավ | 100 |
| 7 | Ալլահվերդյան Ռուզաննա Նելսոնի | տնօրեն /01.11.2012թ-ից/ | Նոր Ղարաչինարի մ/դ | 6 | 155 | լավ | 91 |
| 8 | Արզումանյան Նարինե Յուրիի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Նոր Բրաջուրի Ս-Ս Էրումյանների անվ. մ/դ | 8 | 124 | լավ | 73 |
| 9 | Սարգսյան Նելլի Գրիշայի | ուս. գծով տնօրենի տեղակալ /հայոց լեզու և գրակ./ | | | 114 | լավ | 91 |
| 10 | Գրիգորյան Կարինե Վարդանի | ՄԿԱԳՏՏ /0.5 հ., անգլերեն/ | | | 28 | լավ | 93 |
| 11 | Հարությունյան Ռուզաննա Թեմուրի | տնօրեն /հայոց լեզու և գրակ./ | Նոր Մանաշիդի Հ. Վարդանյանի անվ. հ/դ | 7 | 160 | լավ | 94 |
| 12 | Վարդանյան Աստղիկ Դավիթի | ուս. գծով տնօրենի տեղակալ 1.5 /մինչև դեկտեմբերի 15-ը եղել է ֆիզպարձակուրդում/ | | | 79 | լավ | 100 |
| 13 | Մարգարյան Շահեն Լյուդվիկի | տնօրեն /ֆիզիկա/ | Նոր Վերինշենի Ջալալ Ջավյանի անվ. մ/դ | 10 | 160 | բավ | 94 |
| 14 | Քյոխյան Նաիրա Մարտինի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0.5 հ., պատմություն/ | | | 125 | լավ | 100 |
| 15 | Միրզախանյան Արմինե | ՄԿԱԳՏՏ /0.5 հ., հայոց լեզու և գրակ./ | | | 30 | լավ | 100 |
| 16 | Սիմոնյան Սևադա Սպարտակի | տնօրեն /ֆիզկուլտուրա/ | Ծարի հ/դ | 2 | 50 | բավ | 30 |
| 17 | Գևորգյան Անուշ Ռազմիկի | տնօրեն /դասվար/ | Քնարավանի հ/դ | 6 | 150 | բավ | 88 |
| 18 | Ֆահրադյան Էմմա Անդրանիկի | տնօրեն /մաթեմատիկա/ | Քարվաճառի Վ. Սարոյանի անվ. մ/դ | 12, 1 նախ. խումբ | 106 | լավ | 62 |
| 19 | Ղուկասյան Արեգնազան Գուրգենի | ուս. գծով տնօրենի տեղակալ /կենսաբանություն/ | | | 250 | լավ | 100 |
| 20 | Նալբակյան Անուշ Դավիթի | ՄԿԱԳՏՏ /քիմիա/ | | | 60 | լավ | 100 |
| 21 | Սարգսյան Ժորիկ Անդրանիկի | տնօրեն /ֆիզկուլտուրա/ | Եղեգնուտի Պ. Ղևոնդյանի /Պետո/ անվ. մ/դ | 10 | 120 | բավ | 71 |
| 22 | Մովսիսյան Սիլվա Հրաչի | ՄԿԱԳՏՏ /0.5 հ., պատմություն/ | | | 56 | լավ | 100 |
| 23 | Դանիելյան Հերմինե Ժորիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0.5 հ., քիմիա, կենսաբան./ | | | 173 | լավ | 100 |
| 24 | Հարությունյան Էդմոնդ Միշայի | տնօրեն /աստվածաբան/ | Հավսաթաղի հ/դ | 5 | 170 | լավ | 100 |
| 25 | Պողոսյան Մելանյա Սաքոփ | տնօրեն /ֆրանսերեն/ | Ձորաբերդի Ն. Դանիելյանի անվ. մ/դ | 4 | 202 | լավ | 117 |
| 26 | Վարդանյան Ալվարդ Ռազմիկի | տնօրեն /մաթեմատիկա/ | Նոր Խարխափուտի հ/դ | 6 | 137 | լավ | 81 |
| 27 | Գրիգորյան Արմեն Նիկոլայի | տնօրեն /պատմություն/ | Դադիվանքի Ա. Արմենակյանի անվ. մ/դ | 5 | 148 | բավ | 87 |
| 28 | Գևորգյան Դավիթ Միքայելի | տնօրեն պատմություն/ | Նոր Գետաշենի մ/դ | 7 | 170 | լավ | 100 |
| 29 | Սարգսյան Սիրա Հենրիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /0.5 հ., հայոց լեզու և գրակ./ | | | 100 | բավ | 80 |
| 30 | Մարտիրոսյան Մարինե Արարատի | ՄԿԱԳՏՏ /0.5 հ., դասվար/ | | | 56 | լավ | 100 |
| 31 | Օսիպյան Նարինե Ռոբերտի | տնօրեն /պատմություն/ | Ականաբերդի Շ. Սեդրյանի անվ. մ/դ | 12 | 196 | լավ | 115 |
| 32 | Մարդոյան Սիլվա Էդիկի | ուս. գծով տնօրենի տեղակալ /քիմիա/ | | | 265 | բավ | 106 |
| 33 | Խաչատրյան Սուսաննա Գարիկի / Աֆյան Օքսանա Վասիլիի | ՄԿԱԳՏՏ /կենսաբանություն/ | | | 70 | բավ | 117 |

*Ծանոթություն: 60 և ավելի դասալսում կատարած ՄԿԱԳ տնօրենների տեղակալների դասալսումների կատարման տոկոսը համարվել է 100%:*

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# 2013-2014 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

## ՏԱՐՐԱԿԱՆ

2012-2013 ուստարում կրթության պետական տեսչության հանձնախմբի կազմում տեսչական ստուգումներ ենք իրականացրել 31 դպրոցներում, որոնց գերակշիռ մասը` համակազմ դասարաններով: Դասալսումներ ենք անցկացրել սկսնակ, փորձառու և ոչ մասնագետ ուսուցիչների մոտ, որոնց մեծ մասն ունի բարձրագույն մասնագիտական կրթություն: Կան նաև բանասերներ և մաթեմատիկայի մասնագետներ, որոնք արդեն դասվարի 5 տարվա մանկավարժական աշխատանքի փորձ ունեն:

Դասավանդող դասվարները բոլոր առարկաներից ունեն տնօրինության կողմից հաստատված, գործող ծրագրերի համապատասխան թեմատիկ պլանավորումներ, մայրենիից` մայրենիի բոլոր բաղադրատարրերով` ինքնուրույն ընթերցանություն, խոսք և հաղորդակցություն, գրավոր աշխատանքներ: Որոշ ուսուցիչներ կազմել էին նաև նոր գնահատմանն առնչվող ժամանակացույցը` բանավոր հարցում, թեմատիկ գրավոր, գործնական, կիսամյակային ամփոփիչ աշխատանքներ: Ձեռք են բերել օժանդակ ձեռնարկներ: Բոլոր դասվարներն էլ կազմում են օրվա դասերի պլան-սեղմագրերը, որոնք մասամբ, մանավանդ համակազմ դասարանների համար, նպատակային և արդյունավետ չեն: Այս դասարաններում դասվարները պլան-սեղմագրերը պետք է կազմեն ոչ թե առանձին-առանձին դասարանների համար, այլ մեկ դասաժամի` 45 րոպեի համար. մի դասարանում ուսուցիչը պետք է ինքնուրույն աշխատանք կազմակերպի, մյուսում աշխատի աշակերտների հետ:

Տեսչավորված դպրոցների դասվարները ստեղծել են դասարանական անկյուններ` ԼՂՀ օրհներգի, դրոշի, զինանշանի, աստղիկների կանոնների, նշանաբանի, դասացուցակի, հերթապահության ցուցակի, դասարանի ակտիվի ներառմամբ: Ստեղծված են բավարար քանակով դիտողական պարագաներ, պատի թերթեր, պաստառներ: Ճիշտ ստեղծված թեմատիկ անկյունները հնարավորություն կտան ուսուցչին նպատակային իրականացնելու մանավանդ մայրենիի թեմատիկ բանավոր հարցումները: Երեխաներն ապահոված են դասագրքերով, ունեն բառատետրեր, բառարաններ, գրավոր աշխատանքների տետրեր, բավարար է արտադասարանական ընթերցանության և գրավոր աշխատանքների քանակը: Դասվարները կատարում են փոխադարձ դասալսումներ, գործում է բաց դասերի շղթա, գրում են արձանագրություններ, կատարում քննարկումներ, այդ առումով արժևորվում են Ստեփանակերտի հ.1, հ.12, Քռասնու, Հովսեփավանի (Ասկերանի շրջ.), Խնկավանի, Վաղուհասի, (Մարտակերտի շրջ.), Մարտունու հ.1, Քարահունջի, Սոսի, Սարատակի, Վուրգավանի (Քաշաթաղի շրջ.) դպրոցների կողմից կազմված պլանավորումները:

Սովորաբար կրտսեր օղակի դասվարներն ավելի պարտաճանաչ ու ջանասիրաբար են աշխատում ուսումնական գործունեությունն արդյունավետ կազմակերպելու համար: Սակայն դասալսումներից և տրված գրավորներից պարզվեց, որ որոշ դպրոցներում առաջին իսկ դասարանից սկսած` աշխատում են միայն երեխաներին տառաճանաչ դարձնելու, նրանց պարզ թվաբանական գործողություններ կատարելու կարողությունները զարգացնելու ուղղությամբ: Դասվարները, ինչպես նաև տարրական օղակը վերահսկող անձինք պետք է ուսումնական տարվա սկզբից հանգամանորեն ուսումնասիրեն գնահատման և կրթական առարկայական չափորոշիչները դասագործընթացում իրենց կիրառման բոլոր հիմնադրույթներով (աշխատանք անծանոթ նյութի վրա, հասկանալով կարդալ, ինքնուրույն գրավոր աշխատանք, կարգային անցումներով բանավոր գումարում և հանում` 1-ին դասարանից սկսած, արտաաղյուսակային բանավոր բազմապատկում և բաժանում, կապակցված խոսք, ճիշտ հաղորդակցում և շատ այլ նպատակային հարցեր): Հստակեցվել է դասամատյաններում քիչ գնահատականներ լինելու հարցը: Բոլորս պետք է հստակ իմանանք, որ դասամատյանում նշանակված գնահատականները աշակերտների գիտելիքների ամփոփիչ գնահատականներն են, իսկ ամենօրյա ուսուցանող գնահատականներն ըստ կարգի նշվում են բանավոր բառային բնութագրիչներով: Օրինաչափություն է դարձել մի երևույթ. այն դպրոցը, որը ճիշտ է առաջնորդվում գնահատման գաղափարաբանության դրույթներով, անշուշտ որակական մեծ առաջադիմություն է ապահովում:

Տեսչավորված որոշ դպրոցների դասվարները դասագործընթացը վարում են ավելի շուտ ուսուցչակենտրոն ուսուցման դրույթների կիրառմամբ. ոչ թե աշակերտների միջոցով են վերհանվում դասի բոլոր փուլերում առաջադրված հարցերի պատասխանները, այլ ուսուցիչները հանդես են գալիս միայն հաղորդողի դերում, չեն կիրառում ուղղորդված և ընտրովի ընթերցանության հնարներ, համագործակցային և ժամանակակից այլ մեթոդներ: Հենց այդ դպրոցներում էլ մայրենիի և մաթեմատիկայի որակական առաջադիմությունը չի գերազանցում 30%-ը. դեռ ավելին, կա 0%, 5% և 6% որակական առաջադիմություն (տե՛ս կից աղյուսակը):

Դասագործընթացում հետաքրքիր ու արդյունավետ աշխատանքների, աշակերտակենտրոն, չափորոշչային ուսուցման դրույթների կիրառմամբ, մանկավարժական սկզբունքների ապահովմամբ աչքի ընկան դասվարներ Անուշ Բաբունցը, Միրա Մակյանը, Արմինե Միրզոյանը, Շուշան Ավագյանը, Սիլվա Դադայանը Անահիտ Գաբրիելյանը, Արաքսյա Ալավերդյանը, Գայանե Թովմասյանը, Կարինե Սարգսյանը, Լիլյա Պետրոսյանը, (Ստեփանակերտի հ. 1), Լիանա Ծատրյանը (Ստեփանակերտ հ. 12 ), Սիրվարդ Թամազյանը (Բերձոր), Լուսինե Գրիգորյանը (Սարատակ), Նունե Գրիգորյանը (Վուրգավան), Լիրա Ծատրյանը (Մեծ Թաղեր), Նինա Վարդանյանը (Վաղուհաս), Մարտունու շրջանից Էլզա Խաչատրյանը, Նելլի Սարգսյանը, (Մարտունու h.1), Ռիմա Պետրոսյանը (Սոս), Ալվարդ Հարությունյանը (Շեխեր), Սուսաննա Բեգլարյանը (Քարահունջ), Շահումյանի շրջանից` Մարինե Մարտիրոսյանը (Նոր Գետաշեն), Լուսաբեր Օսիպյանը (Եղեգնուտ): Նրանք զարգացնում են աշակերտների հնչյունային լսողությունը, որն աշակերտի գրավոր և բանավոր խոսքի առանցքն է: Դասերին օգտագործում են խորհրդանշական զննականության տարրեր, գծապատկերներ, տեղին են կիրառում վանկակազմական և բառակազմական աշխատանքները, հետաքրքիր են դարձնում բոլոր դասերը: Կարևորում են աշակերտների բանավոր հաղորդակցությունը, գրավոր խոսքի զարգացումը, քերականական նախագիտելիքների ձևավորումը, մաթեմատիկական մտածողության զարգացմանը միտված աշխատանքները: Ճիշտ են կառուցում դասերը, ուսումնասիրել են կրթական առարկայական չափորոշիչները, աշխատում են իրականացնել չափորոշչային միջինը: Մեծ տեղ են տալիս աշակերտների արժեքային համակարգի ձևավորմանը, նրանց մոտ մարդկային բարձր որակների մշակմանը: Դասագործընթացում օգտագործում են տարբեր բնույթի աշխարհաճանաչողական տեղեկություններ, որոնք և հմտորեն կարողանում են աշակերտների գիտակցությանը հասցնել:

Վերոնշյալ ուսուցիչները զարգացնում են աշակերտների տարածական մտածողությունը, խոսքը: Նրանց դասարաններում ավելի բարձր որակական ցուցանիշներ են արձանագրվել (կից աղյուսակում ներկայացրել ենք միայն յուրաքանչյուր դպրոցի ընդհանրացված ցուցանիշները). նրանց վարած դասերը օրինակելի են, աշխատանքը խրախուսելի է, արժանի դրվատանքի, և գնահատվել են «լավ»:

Դասավանդման դրվածքը բարձր հիմքերի վրա է Ստեփանակերտի h.1, h.12, Բերձորի h.1 դպրոցներում:

Նարինե Հարությունյանը, Տաթև Թավադյանը (Ստեփ. h.1 հիմն.), Ալվինա Ավանեսյանը, Սնիլա Մուսայելյանը, Սուսաննա Սարգսյանը (Մարտունու h. 1), Նորանուշ Ջհանգիրյանը, Արմինե Ավանեսյանը (Քռասնի), Մարգարիտա Քոչարյանը (Սոս), Ալվարդ Զաքարյանը, Կարինե Դավթյանը (Խնկավան), Երազիկ Մելքումյանը (Արևշատ), Լուսինե Գրիգորյանը (Սարատակ), Մարինե Մկրտչյանը (Շուշիի Դ. Ղազարյանի անվ. երաժշտական, դեռևս չունի բարձրագույն մասնագիտական կրթություն), Հասմիկ Առստամյանը (Շուշիի Դ. Ղազարյանի երաժշտ.), Գայանե Ավագյան (Շեխեր), Արինա Մնացականյանը (Իվանյան) կարողանում են սովորողների մեջ ձևավորել ու զարգացնել տրամաբանական, լեզվական մտածողություն, մեծ տեղ են տալիս խմբային աշխատանքներին, դիտողականությանը, քերականական գիտելիքների ուսուցմանը, բառային աշխատանքներին, նորարարություններին, ուշադրություն են դարձնում վայելչագրության ուսուցմանը: Դասերին կիրառում են բազմազան հնարներ, օգտագործում ինքնաշեն դիտողական և դիդակտիկ նյութեր, նոր նյութին առնչվող հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում աշակերտներին:

Նրանց դասարաններում սովորող աշակերտներն ունեն բավարար գիտելիքներ մայրենիից և մաթեմատիկայից: Պարբերաբար ինքնակրթությամբ զբաղվելու դեպքում ավելի մեծ հաջողություններ կունենան:

Որոշ դասվարներ չունեն բարձրագույն մասնագիտական կրթություն, ինչն էլ խանգարում է նրանց նպատակային և արդյունավետ ուսուցում կազմակերպելու գործընթացին:

Պետք է նշել, որ աշակերտների մի ստվար մասը, հատկապես գյուղական դպրոցներում, միջակ և ավելի ցածր կարողությունների տեր է: Նրանց մեծ մասը չի տիրապետում պետական կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների նվազագույնին:

Տեսչավորման ընթացքում բացահայտվել են թերություններ Մարտակերտի շրջ. Մեծ շենի, Ջրակուսի (Հադրութի շրջ.), Նոր Բրաջուրի (Շահումյանի շրջ.) կրտսեր դպրոցներում: Այս դպրոցներում ցածր հիմքերի վրա է դասավանդման դրվածքը, դեռևս պատշաճ մակարդակով չի կազմակերպվում դասագործընթացը: Ընդհանուր առմամբ թույլ են սովորողների գրավոր, բանավոր խոսքը, մաթեմատիկական կարողությունները, հմտությունները: Դասավանդող դասվարները ոչ թե պարտավորված պիտի աշխատեն, այլ հաճույքով, ոգևորված և մեծ պատասխանատվությամբ: Նման աշխատանքը կունենա մեծ արդյունք. նրանք կարող են լավ աշխատել, եթե հստակ պատկերացնեն` ինչ է իրենցից ակնկալվում, և ինչպես պետք է հասնեն այդ նպատակների իրականացմանը: Մինչդեռ Մեծ շենի միջնակարգ դպրոցի 1-3-րդ համակազմ դասարանում (Անահիտ Բաղդասարյան), որտեղ առաջին ստուգման ժամանակ ընդհանրապես ոչ մեկը դրական չի գնահատվել, վերստուգման արդյունքում նույնպես բոլորն անբավարար էին ստացել:

Դասավանդող ուսուցիչները պետք է փոխեն դասավանդման յուրատիպ ոճը, գործընթացը դարձնեն ավելի ճկուն և բազմաբովանդակ, անձնակողմնորոշիչ, հատկապես 6 տարեկանից ուսուցումը նպատակային դարձնելու համար: Փորձը ցույց է տվել, որ 6 տարեկան դպրոցականը սեփական ուժերով պետք է գիտելիքներ ձեռք բերի, իսկ երբ ուսուցիչը փորձում է միայն հաղորդել այդ գիտելիքը, չի կարող համակարգել աշակերտի ունեցած ձեռքբերումները, բնականաբար, թույլ կլինի նրանց գիտելիքների իմացական, մանավանդ` որակական մակարդակը:

Ուսումնական գործընթացում բացասական երևույթներից խուսափելու նպատակով մեր կողմից ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ, ցուցաբերել ենք մասնագիտական և մեթոդական օգնություն, կազմակերպել ցուցադրական դասեր` մանավանդ բազմապատկման աղյուսակի մատչելի ուսուցման, ուղղորդված և ընտրովի ընթերցանության մեթոդների, բանավոր հարցման ձևերի կիրառմամբ, համակազմ դասարանների համար նպատակային պլան-սեղմագրերի նմուշօրինակների տրամադրմամբ և այլն:

Հանձնարարվել է.

- առարկայական մասնախմբի նախագահներին`
- մասնախմբի աշխատանքները դարձնել նպատակային և արդյունավետ, որպես ինքնակրթության թեմաներ. դասվարները կարող են մշակել կրթական առարկայական չափորոշիչները, մանկավարժական թեմաներ.
- Աշխատել ըստ կանոնակարգի` բոլոր ենթակետերի ներառմամբ:

Դասվարներին`

- յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին հանգամանորեն ուսումնասիրել կրթական առարկայական և գնահատման չափորոշիչները, մանրամասն տեղեկանալ գործող դասագրքերի, մեթոդական ուղեցույցների, լրացուցիչ ձեռնարկների նյութերին: Չունենալու դեպքում ձեռք բերել և առաջնորդվել պահանջվող դրույթներով.
- դասագործընթացը կառուցել անձնակողմնորոշիչ ուսուցման դրույթների հիման վրա` ուսուցչակենտրոն ուսուցումը փոխարինելով աշակերտակենտրոն ուսուցմամբ.
- դասանպատակներում հստակեցնել դասի ուսուցանող, զարգացնող և դաստիարակող գործառույթները, կիրառել դիտողական պարագաներ, մեծ տեղ տալ աշակերտների վերացական մտածողության զարգացմանը.
- պլան-սեղմագրերում նշել աշակերտակենտրոն ուսուցման դրույթներից բխող այն միջոցներն ու հնարները, որոնք կնպաստեն առաջին հերթին` դրանց իրականացմանը և 6 տարեկանից ուսուցումն սկսելու դժվարությունների հաղթահարմանը.
- մայրենիի դասերին հաճախակի կիրառել ուղղորդված և ընտրովի ընթերցանության մեթոդներ, աշակերտների մեջ զարգացնել անծանոթ բնագիրը վարժ, սահուն, արտահայտիչ, հասկանալով և արագ կարդալու, բնագրից հենակետային բառերն ընտրելու, բնագրի պլանը կազմելու, հաղորդակցվելու, կապակցված և ճիշտ խոսելու, ինքնուրույն աշխատելու կարողություններ.
- մաթեմատիկայից կարևորել կարգային անցումով բանավոր հաշվումներ, արտաղյուսակային բազմապատկում կատարելը, առաջադրանքի պահանջը և խնդիրներն ինքնուրույն կարդալը, հասկանալն ու լուծելը.
- դասերն ուսուցանել խաղ-ուսուցումխաղ սկզբունքով, իսկ բոլոր դիդակտիկ խաղերն էլ պետք է լինեն ուսուցչի ստեղծագործության արդյունքը և վերաբերեն բուն թեմային, այլապես կծանրաբեռնեն երեխաներին (հարցի վերաբերյալ տրվել են ցուցադրական դասի դրվագներ).
- դասերը հաճախակի դարձնել դիտողական, կիրառել դասին ուսուցանված գիտելիքները համակարգող, մարզողական վարժություններով հագեցված քարտեր, դասագործընթացում օգտագործել ԿԳ նախարարության կողմից ստացված պաստառները, մանավանդ 3-րդ և 4-րդ դասարաններում` «Բնագիր», «Տեքստ» վերնագրով: Դա կնպաստի աշակերտների` տեքստի կամ բնագրի հիմնական միտքը, ենթատեքստը, նպատակները, բախումները և այլ գործոնների իմացությանը, որոնց շնորհիվ կհամակարգվեն սովորողների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները.
- ուշադրության կենտրոնում պահել վայելուչ գրելու պահանջը.
- գրավոր աշխատանքներում ապահովել տեխնիկական բոլոր պահանջները թե՛ մայրենիից, թե՛ մաթեմատիկայից.
- թեմատիկ պլանավորումներում ընդգրկել նոր գնահատման ժամանակացույցը.
-տարրական դասարաններում կարևորություն տալ որակական առաջադիմության բարձրացմանը.
- միջոցներ ձեռնարկել, որ կրտսեր դպրոցականը նոր ուսուցանված դասը դասարանում սովորած գնա տուն.
- ստեղծել թեմատիկ անկյուններ` մանավանդ թեմատիկ բանավոր հարցումը մատչելի և նպատակային դարձնելու համար.
- ձևական մոտեցում չցուցաբերել առաջին դասարանցիների ուսումնական ձեռքբերումների գնահատման հանդեպ.
- դասերը կազմակերպել ինտերակտիվ մեթոդներով` ճիշտ ուղու վրա դնելով աշակերտների սոցիալական հմտությունների զարգացման խնդրի իրականացումը:

☞10

## ՏԵՍՉԱԿԱՆ

9☜

*2012-2013 ուս. տարում տեսչավորած դպրոցների 2-4-րդ դասարաններում մայրենիից և մաթեմատիկայից տրված գրավոր աշխատանքների արդյունքները*

| | | Մայրենի | | Մաթեմատիկա | |
|---|---|---|---|---|---|
| | Դպրոցի անվանումը | ընդհ. առաջ. տոկոսներով | որակ.առաջ. տոկոսներով | ընդհ. առաջ. տոկոսներով | որակ.առաջ. տոկոսներով |
| 1. | Ստեփանակերտի h.1 | 78 | 48 | 80 | 49 |
| 2. | Ստեփանակերտ h.12 | 61 | 27 | 60 | 27 |
| | **Ասկերանի շրջան** | | | | |
| 3. | Իվանյանի | 61 | 33 | 44 | 30 |
| 4. | Քռասնու | 57 | 43 | 57 | 29 |
| 5. | Հովսեփավանի | 60 | 40 | 80 | 60 |
| | **Շուշիի շրջան** | | | | |
| 6. | Շուշի Դ. Ղազարյանի անվան | 60 | 9 | 79 | 35 |
| 7. | Լիսագորի | 64 | 36 | 63 | 33 |
| | **Մարտունու շրջան** | | | | |
| 8. | Մարտունի h.1 | 76 | 42 | 76 | 42 |
| 9. | Սոսի | 54 | 24 | 58 | 29 |
| 10. | Ճեխերի | 92 | 30 | 85 | 78 |
| 11. | Ջիվանիի | 77 | 38 | 77 | 31 |
| 12. | Քերթի | 59 | 19 | 37 | 11 |
| 13. | Քարահունջի | 100 | 33 | 100 | 66 |
| 14. | Ննգու | 58 | 25 | 66 | 16 |
| | **Հադրութի շրջան** | | | | |
| 15. | Մեծ Թաղերի | 73 | 39 | 86 | 37 |
| 16. | Արևշատի | 33 | 8 | 25 | 0 |
| 17. | Առաքելի | 33 | 17 | 33 | 0 |
| 18. | Մարիամաձորի | 56 | 19 | 50 | 31 |
| 19. | Ջրակուսի | 71 | 57 | 57 | 29 |
| | **Մարտակերտի շրջան** | | | | |
| 20. | Վաղուհասի | 58 | 25 | 97 | 43 |
| 21. | Խնկավանի | 87 | 50 | 87 | 38 |
| 22. | Մեծ շենի | 24 | 0 | 46 | 0 |
| | **Քաշաթաղի շրջան** | | | | |
| 23. | Բերձորի | 85 | 51 | 53 | 31 |
| 24. | Սարատակի | 60 | 20 | 60 | 20 |
| 25. | Կովսականի | 45 | 10 | 50 | 10 |
| 26. | Հակարիի | 33 | 0 | 64 | 9 |
| 27. | Վուրգավանի | 0 | 0 | 50 | 0 |
| | **Շահումյանի շրջան** | | | | |
| 28. | Նոր Գետաշենի | 33 | 0 | 75 | 33 |
| 29. | Եղեգնուտի | 21 | 7 | 64 | 21 |
| 30. | Նոր Բրաջուրի | 40 | 0 | 64 | 9 |
| 31. | Նոր Ղարաչինարի | 33 | 17 | 83 | 0 |

**Ա. Պետրոսյան**
**Ս. Հովսեփյան**
**ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ փեսուչներ**

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2013-2014 ուստարում կրթության պետական տեսչության հանձնախմբի կազմում 3 տասնյակից ավելի ուսումնական հաստատություններում (անվանումները՝ ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ աշխատանքային պլանում) իրականացրել ենք հայոց լեզվի և գրականության դասավանդման դրվածքի ստուգումը: Ամփոփելով կատարածը՝ կարելի է նշել, որ տեսչավորված դպրոցներում, անշուշտ, կան իրենց գործին տիրապետող հմուտ մանկավարժներ, ովքեր մայրենիի դասերը ծառայեցնում են ոչ միայն անաղարտ լեզու սովորեցնելուն, այլև սովորողների բարոյական որակների ձևավորմանը: Տեսչավորման ընթացքում հաջողված ու արդյունավետ դասեր լսեցինք Ստեփանակերտի h. 1 հիմնական, Մարտունու h. 1 միջնակարգ հոսքային դպրոցների ուսուցիչների՝ Գոհար Մկրտչյանի, Փառանձեմ Գաբրիելյանի (Շուշիի Դ. Ղազարյանի անվ. մ.դ.), Կարինե Զաքարյանի, Արարատ Աղաբեկյանի (Քերթի մ. դ.), Ռուզան Ավետիսյանի (Մեծ Թաղերի մ. դ.), Սվետլանա Գրիգորյանի (Մարիամաձորի մ. դ.), Դոնարա Գրիգորյանի (Վաղուհասի մ.դ.), Ս. Բալասանյանի (Մարտակերտի h.2 հիմն.դ.), Ն. Սարգսյանի (Ն. Բրաջուրի մ. դ.), Ն. Ղահրամանյանի (Սոսի մ. դ.) դասարաններում:

Ուրախալի է երիտասարդ շնորհալի ուսուցիչների առկայությունը դպրոցներում. նրանց թվում են՝ Լուսինե Սարգսյան, Նարինե Սարգսյան (Շուշիի Դ. Ղազարյանի անվ. դ.), Նունե Սարգսյան, Նոնա Մանգասարյան (Իվանյանի մ.դ.), Արինա Միրզոյան (Հովսեփավանի h. դ.), Մագդա Ավանեսյան (Ջրակուսի մ.դ.), Նոնա Գալստյան (Բերձորի մ.դ), Երջանիկ Հայրապետյան (Վաղուհասի մ.դ.):

Հարկ է նշել նաև, որ կան ոչ մասնագետ ուսուցիչներ, ովքեր տարիների ջանադիր աշխատանքով ձեռք են բերել գիտելիքներ և փորձ (Մարինե Գրիգորյան՝ Սարատակի մ.դ.):

Մի շարք դպրոցներում ուսուցիչները հաջողությամբ անցկացնում են համակարգչային դասեր (Ռուզան Մխիթարյան՝ Նոր Ղարաչինարի մ.դ, Նունե Սարգսյան՝ Իվանյանի մ.դ., Ստեփանակերտի h. 1 և Մարտունու h. 1 դպրոցներում):

Միաժամանակ հարկ է նշել, որ ուսուցիչների արդյունավոր աշխատանքին խոչընդոտում են մի շարք դպրոցներում (Ննգի, Ջրակուս) շենքային անբավարար պայմանները, ինչպես նաև դասարանների մեծ խտությունը հատկապես քաղաքի դպրոցներում, ինչը թույլ չի տալիս անհատական աշխատանք կատարել աշակերտների հետ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի առանձնահատկությունները, հայոց լեզվի դասաժամերի կրճատումը (երեխան ամեն օր պետք է ուսումնասիրի իր մայրենի լեզուն), դասագրքերի խրթին լեզուն, գրականության դասագրքերում ընդգրկված երկարաշունչ գործերի ուսուցման աննպատակահարմարությունը. փորձառու ուսուցիչներն առաջարկում են դրանք փոխարինել 1-2 էջանոց, բայց բովանդակային մեծ խորք ունեցող գործերով, որոնցով այնքան հարուստ է մեր գրականությունը: Գյուղական դպրոցների ուսուցիչների ցանկությունն է ունենալ ավագ դպրոցի հումանիտար հոսքի գոնե մեկ դասագիրք՝ ուսումնասիրելու և օգտագործելու այն աշակերտների լրացուցիչ պարապմունքների համար, ովքեր ուզում են ուսումը շարունակել հումանիտար ուղղությամբ: Ուսուցիչների իրավացի դժգոհության տեղիք է տալիս 7-9-րդ դասարաններում գրականության դասագրքերի և ծրագրերի անհամապատասխանությունը:

Ավագ կամ հոսքային դպրոցներում մայրենիի փորձառու ուսուցիչների ջանքերը դասարանների մի մասում նկատելի արդյունք չեն տալիս, քանի որ այս դասարաններում ընդգրկվել են երեխաներ, որոնք ոչ ցանկություն, ոչ ունակություն ունեն առարկան խորացված ուսումնասիրելու և այստեղ հայտնվել են՝ չիմանալով ուր գնալ:

Աշակերտները մասամբ են ապահովված դասագրքերով Արևշատի, Մարիամաձորի, Մեծ շենի, Լիսագորի դպրոցներում: Շատ դպրոցներում աղքատիկ է գրադարանային ֆոնդը: Սակավ է ծրագրային գրականությունը հատկապես Մարտակերտի, Շուշիի, Քաշաթաղի շրջանների, ինչպես նաև Իվանյանի, Արևշատի դպրոցական գրադարաններում: Վիճակն ինչ-որ չափով փրկում են գրականության քրեստոմատիաները, որոնք հնարավորություն են ընձեռում գոնե հատվածաբար ծանոթանալու ուսումնասիրվող ծրագրային նյութին: Ընթերցող աշակերտի, ինչպես և ուսուցիչների համար լավ նվերներ են վերջին երկու տարում նախարարությունից առաքվող «Իմ գրադարանը» մատենաշարի 30-ից ավելի հեղինակների գրքերը: Հարուստ գրադարաններ ունեն Ստեփանակերտի h.1, Ջիվանիի, Քռասնու, Շուշիի Դ. Ղազարյանի անվան դպրոցները:

Սովորողների մի ստվար մասը կրտսեր դպրոցից միջին դպրոց է անցնում՝ առանց տիրապետելու ընթերցանության տեխնիկային: Պարզ է, որ նման աշակերտը չի յուրացնի նաև մյուս առարկաները: Ուսուցիչներին անհրաժեշտ է տարբեր հնարներով նրանց մոտ դաստիարակել ընթերցասիրություն՝ ելնելով յուրաքանչյուրի նախասիրությունից:

Թույլ է համագործակցությունը ուսուցիչների միջև: Ոչ բոլոր ուսուցիչներն են զբաղվում ինքնակրթությամբ: Քիչ դպրոցներում են աշխատանքներ տարվում առարկայական կաբինետների ստեղծման ու կահավորման ուղղությամբ: Մի շարք դպրոցներում դրանք կան, բայց չեն գործում: Այս առումով արժե նշել Շահումյանի շրջանի Նոր Ղարաչինարի, Հադրութի շրջանի Առաքելի, Մարիամաձորի, Ստեփանակերտի h. 12 դպրոցները, որտեղ կահավորված են գործող առարկայական կաբինետներ:

Ոչ բոլոր ուսուցիչներն են կիրառում դասավանդման արդյունավետ մեթոդներ, դասերն անցկացնում են ուսուցչակենտրոն մեթոդներով. ուսուցիչն ավելի շատ խոսում է, քան խոսեցնում, մինչդեռ ուսուցիչն այսօր, հրաժարվելով սովորեցնողի, ամեն ինչ պատրաստ մատուցելու իր դերից, պետք է դառնա ուսուցման գործընթացը կազմակերպող ու կողմնորոշող՝ չթողնելով, որ աշակերտը միայն անհաղորդ լսի, դասը բացատրելով հենց նրա միջոցով:

Դպրոցների մի մասում ձևական են ստեղծված առարկայական մեթոդմիավորումները, կամ ՄՄ նախագահներ են նշանակվում ուսուցիչներ, ովքեր բավականաչափ փորձ չունեն, և հենց իրենք մեթոդական օգնության կարիք ունեն (Ե. Հայրապետյան՝ Վաղուհաս): Լուրջ աշխատանք պետք է կատարել՝ մեթոդմիավորումները երիտասարդ ուսուցիչների ստաժավորման կենտրոն դարձնելու համար՝ նկատի ունենալով, որ նրանց մեջ կան մեթոդամանկավարժական անհրաժեշտ պատրաստվածություն չունեցող ուսուցիչներ:

Այլ թերությունների շարքում հարկ է նշել, որ դասերն անցկացվում են առանց բնագրերի, ոչինչ չի արվում դասերը դիտողական դարձնելու համար: Միապաղաղ ու անհետաքրքիր անցան մեր լսած դասերը Կովսականի, Ալաշկերտի, Լիսագորի, Վուրգավանի, Ն. Բրաջուրի, Քերթի սկսնակ ուսուցիչների մոտ: Իսկ Ծաղկաբերդի միջնակարգ դպրոցում ստուգման օրերին (25-27.09) առարկան չէր դասավանդվում մասնագետ չլինելու պատճառով:

Ստուգումներից կարելի է մի շարք այլ եզրահանգումներ ևս կատարել: Այսպես՝ նույն ուսուցչուհու դասն ավելի արդյունավոր է անցնում միջին, քան բարձր դասարաններում, որտեղ սովորողները դասին ներկայանում են մեծ մասամբ անպատրաստ, անտարբեր են, անպատասխանատու: Հիմնական դպրոցներում իններորդցիների մոտ մյուս դասարանների համեմատությամբ որոշ պասիվություն է նկատվում, որ նշում են նաև ուսուցիչները՝ բացատրելով տարիքային առանձնահատկություններով: Նման վիճակը ուսուցիչներին պետք է դրդի պրպտելու և գտնելու այս դասարաններում դասը հետաքրքիր դարձնելու, միօրինակությունից խուսափելու միջոցներ և հնարներ՝ ուսուցումը համապատասխանեցնելով այսօրվա բարձրդասարանցու կյանքին, ապրած ժամանակին:

Ցավով պետք է նշել, որ աշակերտների մի ստվար մասը, հատկապես գյուղական սակավակազմ դպրոցներում, միջակ և ավելի ցածր կարողությունների տեր է (Արևշատ, Հակարի, Ջիվանի, Ալաշկերտ, Քարահունջ, Ջրակուս): Նշված դպրոցներում աշակերտների մեծ մասը կրտսեր և միջին համակարգում չի յուրացնում լեզվական հիմնարար իրողությունները, չի տիրապետում պետական կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների նվազագույնին: Հարցերին պատասխանում են բարբառով, չգիտեն պարզագույն հարցերի պատասխանները, չունեն ստեղծագործելու կարողություններ: Բոլոր դպրոցներում էլ ուսուցիչները լուրջ անելիքներ ունեն բարբառային շեշտադրության, ձայնավորների և բաղաձայնների անհարկի քմայնացման, թվականների սխալ արտասանության, բառերի ու քերականական ձևերի այլ աղավաղումների բացառման, կապակցված խոսք կառուցելու ունակությունների զարգացման գործում:

Ստուգումների ընթացքում ուսուցիչներին ցուցումներ են տրվել թեմատիկ պլանավորումների և դասապլանների կազմման, մատենավարության, գնահատման միավորային համակարգի կիրառման առնչությամբ՝ նկատի ունենալով թերությունները:

Տեսչավորված դպրոցներից առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին հայոց լեզվից մասնակցել են Ստեփանակերտի h. 1, Հադրութի շրջանի Մեծ Թաղերի և Մարիամաձորի, Քաշաթաղի շրջանի Ծաղկաբերդի, Շահումյանի շրջանի Նոր Բրաջուրի և Եղեգնուտի, Բերձորի h. 1 դպրոցների աշակերտները: Իսկ Մարիամաձորի դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Հերմինե Արզումանյանը մասնակցել է նաև ՀՀ եզրափակիչ փուլին:

Ընդհանուր առմամբ, թույլ է աշակերտների գրավոր խոսքը: Հաշվետվությանը կցվում է 5-12-րդ (հիմնական դպրոցներում՝ 9-րդ) դասարաններում հայոց լեզվից տրված գրավոր աշխատանքների (թելադրություն) արդյունքների աղյուսակը, ըստ որի՝ ցածր առաջադիմություն է գրանցվել Վուրգավանի, Հակարիի, Մարտակերտի հիմնական, Մեծ շենի, Նոր Գետաշենի, Արևշատի, Քարահունջի, Ալաշկերտի դպրոցներում: Համեմատաբար բարձր ընդհանուր և որակական առաջադիմություն է գրանցվել Ստեփանակերտի h. 1, Մարիամաձորի, Մարտունու h. 1, Բերձորի դպրոցներում: Իսկ Նոր Գետաշենի, Նոր Բրաջուրի, Վուրգավանի, Հակարիի, Եղեգնուտի, Արևշատի, Ճեխերի, Ստեփանակերտի h.12, Կովսականի, Ջրակուսի, Լիսագորի դպրոցներում որակական առաջադիմությունը 10 %-ից էլ ցածր էր:

Առարկայի դասավանդման դրվածքի բարելավման նպատակով ուսուցիչներին հանձնարարվել է՝

- հղկել սեփական խոսքը և նույնը պահանջել սովորողներից. բացառել բարբառը, բարբառային շեշտը. մայրենիի յուրաքանչյուր ուսուցիչ պետք է մտահոգված լինի, թե իր խոսքով որքանով է նպաստում մեր ոսկեղենիկ լեզվի զարգացմանը. դպրոցում ստեղծել լեզվական բարենպաստ մթնոլորտ. սա պետք է մտահոգի բոլոր ուսուցիչներին, քանի որ լեզուն է մյուս բոլոր առարկաների յուրացման բանալին.
- շարունակել զբաղվել ինքնակրթությամբ, ձեռք բերել և ուսումնասիրել նոր ուսումնաօժանդակ գրականություն. միայն անընդհատ սովորող ուսուցիչը սովորեցնելու իրավունք ունի.
- սերտորեն համագործակցել՝ աշխատանքի ընթացքում անընդհատ կատարելագործելով դասավանդման մեթոդները, ձգտելով առարկայի հանդեպ հետաքրքրություն առաջացնել աշակերտների մեջ.
- հանգամանորեն պատրաստվել յուրաքանչյուր դասի՝ հստակ որոշելով յուրաքանչյուր երեխայի անելիքը դասի ընթացքում, փորձելով դասերը դարձնել հնարավորինս հագեցած ու բովանդակալից. հաճախացնել փոխադարձ դասալսումներն ու դրանց քննարկումները.
- մայրենիի յուրաքանչյուր դաս դարձնել խոսքի զարգացման դաս՝ լեզվական կանոնների յուրացումը համատեղելով խոսքի զարգացման առաջադրանքների հետ.
- պատշաճ մակարդակով անցկացնել անցածի կրկնության և ամփոփման դասերը. մեծ տեղ տալ բառակազմական, ձևաբանական, շարահյուսական վերլուծություններին՝ որպես անցածի կրկնության փայլուն միջոցներ.
- յուրաքանչյուր գրողի ներկայացնել կենսագրական մանրամասներով, մարդկային բնավորության, նկարագրի, խառնվածքի բացահայտումով, ըստ հնարավորին օգտագործելով նրանց հուշերը, հոդվածներն ու նա-

## ՏԵՍՉԱԿԱՆ

մակները` ավելի շատ ու կենդանի նյութ հաղորդել գրողների մասին, քանի որ գրողի ստեղծագործությունը շատ կողմերով պայմանավորված է նրա կյանքով. գրում են այնպես, ինչպես ապրում են.

- գրական յուրաքանչյուր ստեղծագործություն ուսումնասիրել որպես արվեստի ստեղծագործություն` կարևորելով նաև հեղինակի լեզվաոճական առանձնահատկությունները.

- հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները` սովորողների մեջ դաստիարակել ընթերցասիրություն. նրանց գիտակցել տալ, որ տեղեկատվական ոչ մի աղբյուր չի կարող փոխարինել գրքին. կրտսեր համակարգում լուրջ աշխատանք կատարել` մշակելու աշակերտների ընթերցանության տեխնիկան.

- դասերը դարձնել հնարավորինս դիտողական. համատեղ ուժերով պատրաստել և օգտագործել քարտադարաններ, գծապատկերներ, ուսումնասիրվող հեղինակներին նվիրված ալբոմներ, այլ ուսումնադիտողական նյութեր.

- ըստ հնարավորի կազմակերպել համակարգչային դասեր. համացանցի տվյալների ճիշտ օգտագործումը դասերը դարձնում է տպավորիչ ու հագեցած.

- ճիշտ կիրառել միավորային գնահատման համակարգը, պահպանել գրավոր աշխատանքների ստուգման որակական կողմը:

| հհ | Դպրոցը | Աշակերտների քանակը | Գրավորներին մասնակցած աշակերտների քանակը | Առաջ. /տոկոս/ | Որակ /տոկոս/ |
|---|---|---|---|---|---|
| | Ստեփանակերտ | | | | |
| 1. | Ստեփանակերտի հ.1 հիմն. | 560 | 493 | 75 | 38 |
| 2. | Ստեփանակերտի հ.12 հիմն. | 25 | 24 | 41 | 4 |
| | Ասկերանի շրջան | | | | |
| 3. | Իվանյանի միջն. | 123 | 109 | 58 | 29 |
| 4. | Հովսեփավանի հիմն. | 7 | 7 | 57 | 14 |
| 5. | Քռասնու միջն. | 16 | 15 | 53 | 13 |
| | Մարտակերտի շրջան | | | | |
| 6. | Մարտակերտի հիմն. | 101 | 97 | 31 | 12 |
| 7. | Մեծշենի միջն. | 36 | 33 | 37 | 18 |
| 8. | Վաղուհասի միջն. | 92 | 89 | 43 | 14 |
| | Մարտունու շրջան | | | | |
| 9. | Մարտունու հ. 1 միջն. հոսք. | 296 | 263 | 55 | 23 |
| 10. | Ճեխերի միջն. | 51 | 49 | 47 | 6 |
| 11. | Ջիվանիի հիմն. | 21 | 20 | 45 | 10 |
| 12. | Սոսի միջն. | 95 | 93 | 50 | 13 |
| 13. | Քերթի միջն. | 57 | 55 | 62 | 18 |
| 14. | Քարահունջի հիմն. | 15 | 13 | 23 | 8 |
| 15. | Ննգու միջն. | 21 | 21 | 62 | 10 |
| | Հադրութի շրջան | | | | |
| 16. | Առաքելի միջն. | 23 | 23 | 35 | 13 |
| 17. | Արևշատի հիմն. | 26 | 21 | 33 | 5 |
| 18. | Մեծ Թաղերի միջն. | 145 | 129 | 57 | 22 |
| 19. | Մարիամաձորի միջն. | 42 | 40 | 65 | 38 |
| 20. | Ջրակուսի միջն. | 37 | 35 | 46 | 9 |
| | Շուշիի շրջան | | | | |
| 21. | Շուշիի Դ. Ղազարյանի անվ. | 54 | 50 | 44 | 10 |
| 22. | Լիսագորի միջն. | 12 | 12 | 42 | 8 |
| | Քաշաթաղի շրջան | | | | |
| 23. | Բերձորի հ. 1 միջն. | 105 | 94 | 72 | 19 |
| 24. | Սարատակի միջն. | 29 | 26 | 54 | 15 |
| 25. | Վուրգավանի միջն. | 15 | 12 | 9 | 0 |
| 26. | Հակարիի միջն. | 13 | 10 | 0 | 0 |
| 27. | Կովսականի միջն. | 54 | 39 | 54 | 5 |
| 28. | Ալաշկերտի միջն. | 18 | 14 | 7 | 0 |
| | Շահումյանի շրջան | | | | |
| 29. | Նոր Գետաշենի միջն. | 22 | 22 | 37 | 5 |
| 30. | Նոր Բրաջուրի միջն. | 25 | 23 | 40 | 4 |
| 31. | Նոր Ղարաչինարի միջն. | 19 | 19 | 53 | 16 |
| 32. | Եղեգնուտի միջն. | 33 | 33 | 42 | 3 |

**Գ. Գրիգորյան**
**Ե. Միրզոյան**
**ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ փեսուչներ**

## ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2013-2014 ուստարում ԼՂՀ ուսումնական հաստատություններում տեսչավորվել է ռուսաց լեզվի և գրականության դասավանդման դրվածքը:

Դասալսումներ են կատարվել 56 ուսուցիչների մոտ, որոնք հիմնականում տիրապետում են առարկայի դասավանդման մեթոդներին, սովորողների մեջ զարգացնում են լսելու, խոսելու, կարդալու և գրելու կարողություններ: Դասերն անց են կացվում` համաձայն թեմատիկ օրացուցային պլանի, կիրառվում են աշակերտների հետ համընդհանուր և անհատական աշխատանքի ձևեր: Դասագործընթացն անցնում է ուսուցչի և աշակերտի համագործակցության մթնոլորտում: Դասի կառուցվածքային փուլերը փոխկապակցվում են, պահպանվում է տրամաբանական անցումը մի փուլից մյուսը:

Հատկանշական է Ստեփանակերտի հիմնական դպրոցի ռուսաց լեզվի ուսուցիչների աշխատանքը: Նրանք մշտապես զարգացնում են սովորողների նախաձեռնությունը, ինքնուրույնությունը, ստեղծագործելու կարողությունը` հմտորեն օգտագործելով տարբեր մեթոդական հնարներ:

Դասագործընթացում բավարար ժամանակ է հատկացվում քերականական նյութի ուսուցմանը, բանավոր խոսքի զարգացմանը: Անց է կացվում բառային աշխատանք, որի ընթացքում աշակերտները կազմում են ճիշտ նախադասություններ, առանձնացնում տրված բառերի հոմանիշներն ու հականիշները, ցուցադրում ընթերցանության ճիշտ տեխնիկա: Տարիներ ի վեր դպրոցում որպես փոխտնօրեն է աշխատում փորձառու ուսուցչուհի, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Ժաննա Բալայանը` դաստիարակելով մատաղ սերնդին, սովորեցնելով ռուսաց լեզու: Նրա յուրաքանչյուր դաս անցնում է կազմակերպական-մեթոդական բարձր մակարդակով, առանձնանում փուլերի հստակությամբ ու մատչելիությամբ: Ուսուցչուհին կարողանում է ակտիվացնել դասարանը, սովորեցնել երեխաներին մտածել և վերլուծել:

Առարկայի իմացությունը, անձնական որակները հ. 1 դպրոցի ուսուցիչներ Գ.Ղազարյանին և Լ. Թովմասյանին հնարավորություն են տալիս ստեղծագործաբար անցկացնել դասերը և պահպանել առարկայի հանդեպ հետաքրքրությունը: Նշյալ ուսուցիչների մանկավարժական գործունեությունը արժանի է խրախուսանքի, իսկ փորձը` ընդհանրացման:

Նկատի ունենալով տրված գրավոր աշխատանքների լավ արդյունքները (առաջադիմություն` 85%, որակ` 54%) և այն, որ դպրոցի աշակերտները սիրում են առարկան և ռուսերենը, պատասխանում են հարցերին, ճիշտ են գրում թելադրված դժվար բառերը և նրանցով կազմում նախադասություններ, կարողանում են վերարտադրել բնագիրը, ինչը համապատասխանում է ծրագրային պահանջներին, հ.1 դպրոցի ռուսաց լեզվի ուսուցիչների աշխատանքը գնահատվել է «լավ»: Առաջարկվել է Ռուսական խոսքի օրերի շրջանակներում դպրոցում անցկացնել մեթոդական խորհրդակցություններ` ուսուցիչներ` Գ.Ղազարյանի և Լ. Թովմասյանի կողմից դասի դրվագների ցուցադրումով:

Նկատելի առանձնանում է նաև Մարտունու հ. 1 դպրոցի մեթոդմիավորման աշխատանքը, որը կրում է կոլեկտիվ բնույթ` յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքի անհատականացումով: Մասնախումբն առաջնորդվում է ԼՂՀ ԿԳ նախարարության նորմատիվային փաստաթղթերով: Յուրաքանչյուր ուսուցիչ ունի իր ինքնակրթության թղթապանակը և ուստարվա ընթացքում ուսումնասիրում է որոշակի թեմա:

Մեթոդմիավորման աշխատանքում հատուկ տեղ է տրվում ուսուցչուհի Էմմա Բաբայանի առաջավոր մանկավարժական փորձի արմատավորմանը: Տեսչավորման ընթացքում նշվել է նրա լավ աշխատանքը: Ուսուցչուհին մեթոդապես ճիշտ է կառուցում դասերը, ստեղծում է աշխատանքային մթնոլորտ: Նա պրպտուն ուսուցչուհի է, գտնում ու կիրառում է ուսուցման և դաստիարակության առավել արդյունավետ ձևեր և հնարներ: Նրա աշխատանքը գնահատվել է «լավ»:

Առարկայի դասալսումները ցույց են տվել, որ սովորողները հետաքրքրություն ունեն ուսման, առարկայի հանդեպ, ինչին իրենց աշխատանքով նպաստում են ուսուցիչները: Դա հատկապես նկատելի էր Շահումյանի շրջանի Նոր Գետաշենի (ուսուցչուհի` Ռ. Հայրումյան), Նոր Վերինշենի (ուսուցչուհի` Զ. Միրզոյան), Հադրութի շրջանի Առաքելի (ուսուցիչներ` Ի. Բաղդասարյան, Է. Գասպարյան), Շուշիի Դ. Ղազարյանի անվան երաժշտական (ուսուցիչներ` Գ. Նեչվոլոդ, Ա. Ավշարյան), Ջիվանիի (ուսուցչուհի` Ա. Վիրաբյան), Ստեփանակերտի հ. 12 (ուսուցչուհի` Ն. Գրիգորյան), Ասկերանի շրջանի Իվանյանի (ուսուցչուհի` Ս. Բաբայան), Շուշիի շրջանի Լիսագորի (ուսուցչուհի` Ն. Զաքարյան) դպրոցներում:

Ցավոք, կան և սովորողներ` գիտելիքների ցածր մակարդակով, աղքատիկ բառապաշարով, որոնք առանց թարգմանության չեն հասկանում ռուսերեն խոսքը: Գրավոր աշխատանքների արդյունքները փաստում են, որ նրանց մոտ թույլ է զարգացած գրավոր խոսքը: Հետևաբար, այն դպրոցներում, որտեղ ցածր առաջադիմություն է գրանցվել (տե՛ս աղյուսակը), ուսուցիչներին անհրաժեշտ է վերանայել գրավոր խոսքի ուսուցման սկզբունքները:

Լսված դասերի համատեղ քննարկումից հետո աշխատանք է տարվել բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ: Ուսուցիչներին ցույց է տրվել մեթոդական օգնություն թեստային աշխատանքների անցկացման, առարկայի դասավանդմանն առնչվող այլ հարցերի կապակցությամբ:

Առարկայական մեթոդմիավորումներին հանձնարարվում է`

- աշխատանքի ընթացքում ձգտել թույլ սովորողներին հասցնել միջին մակարդակ ունեցող, իսկ վերջիններիս` լավ սովորող աշակերտներին.

- ըստ հնարավորին օգտագործել նոր մանկավարժական տեխնոլոգիաները.

- անցկացնել խմբային, զույգերով աշխատանքներ.

- անցկացնել ստեղծագործական հաշվետվություններ (փորձի փոխանակման կարգով):

Հարկ է նշել նաև, որ հանրակրթական դպրոցների սովորողները յուրաքանչյուր տարի մասնակցում են ռուսաց լեզվի օլիմպիադային, ստանում I, II, III կարգի դիպլոմներ, գովասանագրեր ակտիվ մասնակցության համար (ինչպես ԼՂՀ-ում, այնպես էլ ՀՀ-ում):

Օլիմպիադայի ընթացքում մեծ ակտիվություն է ցուցաբերել Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցը: Ամեն տարի դպրոցը ռուսաց լեզվից օլմպիադայի հաղթողներ է ունենում: Ընթացիկ ուստարում ռուսաց լեզվից օլիմպիադայի եզրափակիչ փուլում հաղթել է հիշյալ դպրոցի աշակերտուհի Անահիտ Բաբայանը, ինչի առթիվ պարգևատրվել է նաև ԼՂՀ նախագահի և ՀՀ կառավարության կողմից:

Ս.թ. ապրիլի 21-25-ը հանրապետության ռուսաց լեզվի ուսուցիչների կողմից անց են կացվել Միքայել Թարիվերդիևի երաժշտության օրերը Արցախում, որին իրենց գործուն մասնակցությունն են ունեցել նաև դպրոցների տնօրենները, երաժշտության, ինֆորմատիկայի ուսուցիչները: Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից շնորհակալագրով նշվել է միջոցառմանն ընդգրկված բոլոր կոլեկտիվների լավ աշխատանքը:

Ուրախալի է, որ սովորողները հատուկ վերաբերմունք ունեն ռուսաց լեզվի հանդեպ: Հաճույքով ընթերցում են, վերարտադրում կարդացածի բովանդակությունը, մասնակցում մրցույթներին, անգիր սովորում ռուս բանաստեղծների գործերը:

Այսօր ռուսաց լեզվի ուսուցիչները շոշափելի ավանդ են ներդնում, որպեսզի ռուսական մշակույթը հայկականի հետ զուգահեռ ապրի մեր սրտրում:

| հհ | Դպրոցը | Աշակերտների քանակը | Գրավորներին մասնակցած աշակերտների քանակը | Առաջ. /տոկոս/ | Որակ /տոկոս/ |
|---|---|---|---|---|---|
| | Ստեփանակերտ | | | | |
| 1. | Ստեփանակերտի հ.1 հիմն. | 658 | 578 | 85 | 54 |
| 2. | Ստեփանակերտի հ.12 հիմն. | 39 | 38 | 56 | 29 |
| | Ասկերանի շրջան | | | | |
| 3. | Իվանյանի միջն. | 138 | 114 | 59 | 21 |
| 4. | Հովսեփավանի հիմն. | 11 | 11 | 72 | 27 |
| 5. | Քռասնու միջն. | 14 | 14 | 57 | 21 |
| | Մարտակերտի շրջան | | | | |
| 6. | Մարտակերտի հիմն. | 125 | 112 | 49 | 14 |
| 7. | Մեծշենի միջն. | 36 | 33 | 33 | 18 |
| 8. | Վաղուհասի միջն. | 91 | 87 | 40 | 7 |
| | Մարտունու շրջան | | | | |
| 9. | Մարտունու հ. 1 միջն. հոսք. | 191 | 169 | 77 | 32 |
| 10. | Ճեխերի միջն. | 54 | 54 | 57 | 11 |
| 11. | Ջիվանիի հիմն. | 28 | 28 | 82 | 32 |
| 12. | Սոսի միջն. | 124 | 111 | 59 | 16 |
| 13. | Քերթի միջն. | 53 | 53 | 64 | 9 |
| 14. | Ննգու միջն. | 14 | 14 | 50 | 21 |
| | Հադրութի շրջան | | | | |
| 15. | Առաքելի միջն. | 21 | 21 | 61 | 19 |
| 16. | Մեծ Թաղերի միջն. | 129 | 110 | 63 | 30 |
| 17. | Մարիամաձորի միջն. | 38 | 38 | 47 | 18 |
| 18. | Ջրակուսի միջն. | 22 | 20 | 75 | 15 |
| | Շուշիի շրջան | | | | |
| 19. | Շուշիի Դ. Ղազարյանի անվ. | 62 | 59 | 71 | 25 |
| 20. | Լիսագորի միջն. | 14 | 14 | 78 | 21 |
| | Քաշաթաղի շրջան | | | | |
| 21. | Բերձորի հ. 1 միջն. | 110 | 100 | 54 | 10 |
| 22. | Սարատակի միջն. | 26 | 23 | 69 | 21 |
| 23. | Ծաղկաբերդի միջն. | 37 | 30 | 30 | 10 |
| 24. | Կովսականի միջն. | 34 | 26 | 30 | 11 |
| | Շահումյանի շրջան | | | | |
| 25. | Նոր Գետաշենի միջն. | 22 | 22 | 40 | 10 |
| 26. | Եղեգնուտի միջն. | 22 | 20 | 60 | 10 |

**Ռ. Օսիպով**
**ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ փեսուչ**

## ԱՆԳԼԵՐԵՆ, ՖՐԱՆՍԵՐԵՆ, ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

2013թ. սեպտեմբեր-2014թ. մայիս ընկած ժամանակահատվածում տեսչության հանձնախմբի կազմում հանրապետության հետևյալ` Քաշաթաղի շրջանի Վուրգավանի, Ծաղկաբերդի, Մարտակերտի շրջանի Մեծ շենի, Վաղուհասի, Մարտակերտի հ. 2 հիմնական, Հադրութի շրջանի Արևշատի, Մեծ Թաղերի, Ջրակուսի, Մարիամաձորի, Շահումյանի շրջանի Նոր Ղարաչինարի, Եղեգնուտի, Շուշիի Դ.Ղազարյանի անվան մասնագիտացված երաժշտական միջնակարգ դպրոցի, Շուշիի շրջանի Լիսագորի, Ասկերանի շրջանի Իվանյանի, Քռասնու, Հովսեփավանի, Մարտունու հ. 1 միջնակարգ հոսքային, Մարտունու շրջանի Ննգու, Քերթի, Քարահունջի, Սոսի, Ճեխերի, Ջիվանիի, Բերձորի հ. 1 միջնակարգ, Ստեփանակերտի հ. 12 և հ.1 հիմնական դպրոցներում իրականացրել ենք անգլերենի դասավանդման դրվածքի ստուգում և մեթոդական օգնության ցուցաբերում:

Ամփոփելով կատարածը` նշենք, որ ընդհանուր առմամբ, չնայած վերհանված թերություններին, բավարար է անգլերենի` որպես օտար լեզվի, ֆրանսերենի և գերմաներենի` որպես երկրորդ օտար լեզուների, դասավանդման դրվածքը: Դասավանդող ուսուցիչների մեծ մասը բարձրագույն կրթությամբ մասնագետներ են, ովքեր շարունակում են ուսումը նույն մասնագիտության գծով մագիստրատուրայում, կան այնպիսիք, ովքեր փոխարինում են ֆիզիոլոգիական արձակուրդում գտնվող հիմնական մասնագետներին:

☞12

# ՏԵՍՉԱԿԱՆ

11 ☜ Ստուգված դպրոցներից հարկ է նշել Ստեփանակերտի h. 1 դպրոցում անգլերենի և ֆրանսերենի դասավանդման բավականին ամուր դրվածքի մասին, որտեղ ուսուցիչները (Գ.Հարությունյան, Ա.Սաֆարյան, Ք.Գաբրիելյան, Ի.Պողոսյան և այլոք) ջանադրությամբ կատարում են մանկավարժի բարդ և միաժամանակ պատասխանատու գործը, տիրապետում իրենց մասնագիտությանը և դասավանդման մեթոդիկային, h. 12 դպրոցում անգլերենի և գերմաներենի (Ա.Բաղդասարյան) դասավանդման դրվածքի մասին, որտեղ ուսուցիչները (Ա.Բաղդասարյան և Զ.Առաքելյան) կարողանում են օտար լեզուների դասավանդումն իրականացնել ժամանակակից մեթոդներով: Շրջանների որոշ դպրոցներում դասավանդումը բավարար հիմքերի վրա է, ինչպես, օրինակ, Իվանյանի միջնակարգ դպրոցում (ուսուցիչներ՝ Հ.Օհանջանյան և Օ.Բաբայան), որտեղ անգլերենին զուգահեռ որպես երկրորդ օտար լեզու դասավանդվում է գերմաներենը (Հ.Օհանջանյան). այստեղ ուսուցիչները աշխատելու դեպքում կարող են հասնել հաջողությունների:

Բավականին պատասխանատվությամբ են աշխատում Մարտակերտի h. 2 հիմնական դպրոցի երիտասարդ ուսուցիչներ Մ.Ավագիմյանը և Ս.Հյուսնունցը, ովքեր նույնպես աշխատելու դեպքում կարող են հասնել հաջողությունների, ունեն մասնագիտական ունակություններ, այստեղ որպես երկրորդ օտար լեզու դասավանդվում է գերմաներենը (Մ.Ավագիմյան), Մարտունու h. 1 դպրոցի ուսուցիչները (Շ.Շիրինյան. Ս.Սեյրանյան և Ա.Խաչատրյան), այստեղ որպես երկրորդ օտար լեզու դասավանդվում է ֆրանսերենը (Ե.Գրիգորյան), Բերձորի h. 1 դպրոցի ուսուցիչները (Ս.Սարգսյան, Ս.Սահակյան): Որոշ գյուղական դպրոցներում Սոս (Ա.Սարգսյան), Մեծ շեն (Ա.Աղաջանյան), Մեծ Թաղեր (Լ.Ամիրյան), Լիսագոր (Գ.Դանիելյան) առկա է ուսման որակ:

Տեսչավորված համարյա բոլոր դպրոցներում աշակերտները կարողանում են լավ կարդալ, ակտիվ են դասաժամերի ընթացքում, պատասխանում են տրված հարցերին, պատրաստ են ներկայանում դասերին՝ տնային առաջադրանքներով, բառապաշարի յուրացմամբ, քերականական նյութի իմացությամբ: Անգլերենի ուսուցումը ստուգված դպրոցներում ունի հիմքեր, բայց կատարվելիք աշխատանքներ դեռևս շատ կան՝ սովորողների գիտելիքների մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Ուսուցիչները հիմնականում աշխատող են, զբաղվում են ինքնակրթությամբ, աշխատանքներ են տանում անգլերենի առարկայական կաբինետներիի ստեղծման ուղղությամբ, առկա կաբինետները համալրում են անհրաժեշտ պարագաներով:

Ստուգված դպրոցների երիտասարդ ուսուցիչների մեծ մասն ունի գիտելիքներ, համապատասխան մասնագիտական կրթություն, սակայն դասավանդման արդյունքի մասին դեռ վաղ է խոսել, նրանք հիմնականում սկսնակ և դեռևս փորձ չունեցող մասնագետներ են:

Ցածր է դասավանդման դրվածքը Մարտունու շրջանի Քարահունջի, Ննգու, Շահումյանի շրջանի Նոր Ղարաչինարի միջնակարգ դպրոցներում: 2013-2014 ուստարում տեսչավորված գյուղական հետևյալ դպրոցներում (Վաղուհաս, Նոր Ղարաչինար, Ջրակուս, Հովսեփավան, Ննգի, Մեծ շեն, Լիսագոր, Ծաղկաբերդ, Վուրգավան, Քռասնի, Քարահունջ, Ննգի) թույլ է և՛ դասավանդող ուսուցիչների, և՛ սովորողների բանավոր խոսքը, իսկ պատճառը պետք է փնտրել նրանում, որ ուսուցիչները շատ քիչ են օգտագործում կամ ընդհանրապես չեն օգտագործում անգլերենը դասագործընթացում, այստեղից էլ պարզ է՝ սովորողը չի լսում և դժվարանում է խոսել, դրա փոխարեն դասերը վարում են հայերենով, և այն էլ՝ ոչ գրական: Իսկ փաստ է այն, որ եթե լեզուն չի օգտագործվում, մոռացության է տրվում, և ուսուցիչները, և աշակերտները պետք է հաղորդակցվեն դասավանդվող տվյալ լեզվով, կիրառության մեջ դրվի լեզուն: Քիչ է կատարվում աշխատանք ինքնակրթության ուղղությամբ, կամ էլ ուսուցիչն ընտրում է սխալ ուղղություն: Զբաղվելով ինքնակրթությամբ՝ ուսուցիչն աստիճանաբար պետք է վերացնի մասնագիտական թերությունները, սովորի չիմացածը: Ուսուցիչները չեն կիրառում դասավանդման արդյունավետ և ժամանակակից մեթոդներ, դասերն անցնում են ուսուցչակենտրոն մեթոդներով. ավելի շատ խոսում են (այն էլ՝ հայերեն), քան խոսեցնում, մինչդեռ ուսուցիչն այսօր, հրաժարվելով սովորեցնողի, ամեն ինչ պատրաստ մատուցելու իր դերից, պետք է դառնա ուսուցման գործընթացի կազմակերպող ու կողմնորոշող՝ չթողնելով, որ աշակերտը միայն անհաղորդ լսի, դասը բացատրելով հենց նրա միջոցով, այսինքն՝ կիրառի ուսուցման աշակերտակենտրոն մեթոդներ, դասերը վարի ժամանակակից պահանջներին համապատասխան, որպեսզի աշակերտները հետաքրքրություն ունենան առարկայի հանդեպ: Ստուգված բոլոր դպրոցներում լսված բոլոր դասերը քննարկվել են, վերլուծվել, տրվել են համապատասխան ցուցումներ, հանձնարարականներ, արվել դիտողություններ, առաջարկություններ, ցուցաբերվել է մեթոդամանկավարժական և մասնագիտական օգնություն, ուսուցիչները տեղեկացվել են կրթական համակարգի բարեփոխումներին (հարկ է նշել նաև, որ դասավանդող ուսուցիչների մի մասը մասնակցել է ամեն տարի կազմակերպվող ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին):

Ստուգված հետևյալ դպրոցներում տրվել են ստուգողական աշխատանքներ անգլերենից՝ ուսման որակը և առաջադիմությունը ստուգելու նպատակով: Տրված աշխատանքների արդյունքները ներկայացնում ենք ներքոբերյալ աղյուսակում:

| հհ | Դպրոցը | Աշակերտների քանակը | Գրավորներին մասնակցած աշակերտների քանակը | Առաջադ. /տոկոս/ | Որակ /տոկոս/ |
|---|---|---|---|---|---|
| | **Ստեփանակերտ** | | | | |
| 1. | Ստեփանակերտի h. 1 h/դ | 257 | 228 | 90 | 41 |
| 2. | Ստեփանակերտի h. 12 h/դ | 22 | 21 | 52 | 25 |
| | **Ասկերանի շրջան** | | | | |
| 3. | Իվանյանի մ/դ | 87 | 78 | 34 | 24 |
| | **Մարտակերտի շրջան** | | | | |
| 4. | Մեծ Շենի մ/դ | 14 | 13 | 40 | 8 |
| | **Մարտունու շրջան** | | | | |
| 5. | Սոսի մ/դ | 42 | 40 | 60 | 10 |
| 6. | Քարահունջի մ/դ | 14 | 13 | 15 | 0 |
| 7. | Ննգու մ/դ | 6 | 6 | 33 | 0 |
| 8. | Շեխերի մ/դ | 38 | 37 | 30 | 0 |
| 9. | Մարտունու h. 1 մ/դ | 119 | 108 | 80 | 47 |
| | **Հադրութի շրջան** | | | | |
| 10. | Մեծ Թաղերի մ/դ | 82 | 78 | 80 | 25 |
| | **Շուշիի շրջան** | | | | |
| 11. | Շուշիի Դ.Ղազարյանի անվան մ/դ | 27 | 24 | 29 | 0 |
| 12. | Լիսագորի մ/դ | 5 | 5 | 80 | 40 |
| | **Քաշաթաղի շրջան** | | | | |
| 13. | Վուրգավանի մ/դ | 3 | 2 | 50 | 0 |
| 14. | Ծաղկաբերդի մ/դ | 5 | 5 | 40 | 0 |
| 15. | Բերձորի h. 1 մ/դ | 59 | 49 | 78 | 12 |
| | **Շահումյանի շրջան** | | | | |
| 16. | Նոր Ղարաչինարի մ/դ | 14 | 14 | 7 | 0 |

**Կ. Փաթյան**
**ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ օտար լեզվի տեսուչ**

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ԼՂՀ ԿԳ նախարարության ընդհանուր պլանի և ԿՊՏ 2013-2014թթ. աշխատանքային պլանի՝ տեսչական հանձնախմբերի կազմում մասնակցել եմ ԼՂՀ ներքոնշյալ հանրակրթական դպրոցների համակողմանի տեսչավորման և մեթոդական օգնության ցուցաբերման աշխատանքներին. Ստեփանակերտի h.h. 1, 12, Քաշաթաղի շրջանի Բերձորի h.1, Սարատակի, Վուրգավանի, Ծաղկաբերդի, Ալաշկերտի, Մարտունու շրջանի Մարտունու h.1, Շեխերի, Ջիվանու, Սոսի, Քարահունջի, Ննգու, Շահումյանի շրջանի Նոր Բրաջուրի, Եղեգնուտի, Ասկերանի շրջանի Իվանյանի, Հովսեփավանի, Հադրութի շրջանի Արևշատի, Առաքելի, Մեծ Թաղերի, Ջրակուսի, Մարտակերտի շրջանի Մարտակերտի h. 2, Մեծ շենի, Վաղուհասի, Շուշիի շրջանի Շուշիի Դ. Ղազարյանի անվան երաժշտական մասնագիտացված, Լիսագորի:

Ստուգումները ցույց են տվել, որ դպրոցները ապահովված են ուսումնական ծրագրերով, ուսուցչի ձեռնարկներով, ուսուցիչները ծանոթ են առարկայի ծրագրային փոփոխություններին, ունեն հաստատված թեմատիկ պլանավորումներ, որոնք համապատասխանում են առարկայական ծրագրերին, պահպանվել է հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցների հոսքային ուսուցմանը համապատասխան թեմատիկ, գործնական և կիսամյակային աշխատանքների քանակը:

Կատարված ստուգումներից պարզվել է, որ ուսուցիչները դասի են ներկայանում օրվա դասի պլան-սեղմագրերով, նրանց հիմնական մասը տիրապետում է դասավանդվող նյութին, թույլ չեն տալիս մասնագիտական սխալներ, դասագործընթացում օգտագործում են լրացուցիչ գրականություն, դպրոցում առկա դիտողական պարագաները՝ համապատասխան թեմատիկ քարտեզներ, իսկ դրանց բացակայության դեպքում՝ աշխարհի քաղաքական քարտեզն ու ատլասները: Աշակերտները հիմնականում ապահովված են դասագրքերով, պահում են տետրեր, որտեղ գրի են առնվում ինչպես տնային առաջադրանքները, այնպես էլ նոր եզրույթները, հասկացություններն ու տարեթվերը: Մի շարք դպրոցներում ըստ դասարանների ուսուցիչներն առանձնացրել են թղթապանակներ, որտեղ պահում են աշակերտների կատարած թեմատիկ, գործնական և կիսամյակային աշխատանքները:

Ըստ կատարված դասալսումների և համապատասխան վերլուծությունների՝ առկա դրական երևույթներով հանդերձ, ի հայտ են բերվել նաև մի շարք բացթողումներ (դրանց վերացման ու շտկման համար տրվել են համապատասխան ցուցումներ ու հանձնարարականներ), որոնց մի մասն ունի օբյեկտիվ, մի մասն էլ՝ սուբյեկտիվ պատճառներ: Հարկ է նշել, որ ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը որոշ չափով արգելակում է անհրաժեշտ մեթոդական գրականության պակասը, մի շարք դպրոցներում՝ տարբեր առարկաներից դասագրքերի անբավարարվածությունը, որոշ դեպքերում՝ ոչ մասնագետ ուսուցիչների դասավանդումը: Դպրոցներում դասերը չեն կազմակերպվում կաբինետային համակարգով, ընդհանուր առմամբ թույլ է դպրոցների նյութատեխնիկական բազան, չեն հերիքում համապատասխան թեմատիկ քարտեզներն ու դիտողական պաստառները: Չնայած վերջին տարիներին ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից որոշ քարտեզներ և պաստառներ են տրվել դպրոցներին, այնուամենայնիվ ապահովվածությունը հեռու է բավարար լինելուց: Հարկ է նշել նաև, որ մի շարք դպրոցներում պահպանվել են դեռևս խորհրդային տարիներից որոշ չափով քարտեզներ ու պաստառներ՝ շնորհիվ տվյալ դպրոցների ուսուցիչների հոգատար վերաբերմունքի: Մի շարք դպրոցներում առկա են բավարար կահավորված պատմության կաբինետներ (Ստեփանակերտի h.h. 1, 12 հիմնական, Արևշատի, Սոսի, Բերձորի h.1, Վաղուհասի միջնակարգ դպրոցներ, ընդ որում՝ Բերձորի h.1, Վաղուհասի, Արևշատի միջնակարգ դպրոցների պատմության կաբինետները հարստացված են նաև ինքնաշեն պարագաներով), իսկ որոշ դպրոցներում ընթացքի մեջ են կաբինետների կահավորման աշխատանքները (Մարտունու h.1, Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցներ):

Աշակերտների մասնակցությունը առարկայական օլիմպիադաներին ոչ բոլոր դպրոցներում է բավարար հիմքերի վրա: Օլիմպիադաներին բավարար մասնակցություն են ցուցաբերել Շուշիի Դ. Ղազարյանի անվան գիշերօթիկ միջնակարգ երաժշտական մասնագիտացված դպրոցի, Մարտունու h.1, Բերձորի h.1, Իվանյանի, Սոսի, Մեծ Թաղերի աշակերտները, ընդ որում,՝վերոնշյալ դպրոցներից (բացի Սոսի միջնակարգ դպրոցի) մասնակիցներ են եղել նաև հանրապետական փուլին, իսկ Մարտունու h.1 միջնակարգ հոսքային դպրոցի աշակերտ Ա. Արզումանյանը (ուսուցչուհի՝ Լ. Խաչատրյան) 2011-12 ուստարում մասնակցել է նաև համահայկական փուլին:

Ընդհանուր առմամբ, գրեթե բոլոր դպրոցներն ապահովված են մասնագետ կամ էլ հեռակա բաժիններում սովորող ուսուցիչներով: Ուսուցիչների հիմնական մասը, սկսած 2012 թվականից, մասնակցել է ԼՂՀ ԿԳ նախարարության և ՀՀ ազգային ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի կողմից կազմակերպված դասընթացներին, ստացել համապատասխան վկայագրեր և ատեստավորվել. Դադայան Կարինե, Կասյան Անահիտ, Դադայան Գոհար, Սահակյան Լուսինե, Թադևոսյան Արփինե, Հովհաննիսյան Կարինե, Խաչատրյան Լարիսա, Բադալյան Քնարիկ, Արզումանյան Շողեր, Խաչատրյան Էթերի, Գրիգորյան Ռոզա, Ավանեսյան Լենա, Հայրապետյան Արմինե, Առաքելյան Իրինա, Մխիթարյան Ոսկեհատ, Մելիքյան Ազատուհի, Ավթանդիլյան Ռազմելա: Կատարված վերլուծությունը ցույց է տվել, որ հանրապետության մի շարք հանրակրթական դպրոցներում կան փորձառու, իրենց գործին նվիրված և առարկային տիրապետող մասնագետներ (Գրիգորյան Ռոզա, Խաչատրյան Լարիսա, Բադալյան Քնարիկ, Արզումանյան Շողեր, Հովհաննիսյան Կարինե, Ավանեսյան Լենա, Ղազարյան Լենա, Դադայան Գոհար, Կասյան Անահիտ, Դադայան Կարինե): Կան նաև երիտասարդ, բայց խոստումնալից ուսուցիչներ, ովքեր մշտական ինքնակրթության և հետևողական աշխատանքի դեպքում կարող են նշանակալի հաջողություններ ունենալ և դառնալ լավ մասնագետներ (Հարությունյան Վաչիկ, Գասյան Զինա):

Ընդհանուր առմամբ, առարկաների դասավանդման դրվածքը համակողմանի տեսչավորման ենթարկված դպրոցներում գնահատվել է բավարար:

**Մ. Մխիթարյան**
**ԿՊՏ ավագ պետական տեսուչ**

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

2013-2014 ուստարում համակողմանի ստուգումներ են կատարվել հանրապետության 31 դպրոցներում: Տեսչավորվել են Ստեփանակերտ քաղաքում՝ 2, Ասկերանի շրջանում՝ 3, Մարտակերտի շրջանում՝ 3, Մարտունու շրջանում՝ 7, Հադրութի շրջանում՝ 5, Շուշիի շրջանում՝ 2, Քաշաթաղի շրջանում՝ 7, Շահումյանի շրջանում՝ 2 դպրոցներ:

Այդ դպրոցներում աշխատում են առարկայի 80 մասնագետներ, որոնցից 79-ն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն:

Ուսուցիչներն ապահովված են գործող ծրագրերին համապատասխան ուսուցչի ձեռնարկներով, ունեն օրինակելի թեմատիկ պլանավորումներ, ապահովում են ծրագրային նյութի կատարումը: Բոլոր ուսուցիչների մոտ կատարվել են 4-5 ժամ դասալսումներ, տեսչավորված դպրոցների 220 դասարաններում տրվել են գրավոր աշխատանքներ: Ստորև բերվում է տեսչավորված դպրոցներում տրված գրավոր աշխատանքների ամփոփ արդյունքների աղյուսակը:

| հհ | Դպրոցը | Աշակերտների քանակը | Գրավորներին մասնակցած աշակերտների քանակը | Առաջ. /տոկոս/ | Որակ /տոկո |
|---|---|---|---|---|---|
| | **Ստեփանակերտ** | | | | |
| 1. | Ստեփանակերտի h.1 հիմն. | 555 | 486 | 49 | 17 |
| 2. | Ստեփանակերտի h.12 հիմն. | 25 | 23 | 35 | 4 |
| | **Ասկերանի շրջան** | | | | |
| 3. | Իվանյանի միջն. | 122 | 107 | 36 | 11 |
| 4. | Հովսեփավանի հիմն. | 7 | 7 | 43 | 14 |
| 5. | Քռասնու միջն. | 16 | 15 | 40 | 13 |
| | **Մարտակերտի շրջան** | | | | |
| 6. | Մարտակերտի հիմն. | 109 | 101 | 32 | 10 |
| 7. | Մեծշենի միջն. | 26 | 26 | 19 | 8 |
| 8. | Վաղուհասի միջն. | 92 | 88 | 28 | 5 |
| | **Մարտունու շրջան** | | | | |
| 9. | Մարտունու h. 1 միջն. հոսք. | 295 | 248 | 28 | 6 |
| 10. | Շեխերի միջն. | 51 | 49 | 41 | 10 |
| 11. | Ջիվանիի հիմն. | 20 | 20 | 25 | 0 |
| 12. | Սոսի միջն. | 102 | 93 | 26 | 5 |

## ՏԵՍՉԱԿԱՆ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13. | Քերթի միջն. | 57 | 55 | 33 | 9 |
| 14. | Քարահունջի հիմն. | 13 | 13 | 61 | 23 |
| 15. | Ննգու միջն. | 21 | 21 | 36 | 5 |
| | Հադրութի շրջան | | | | |
| 16. | Առաքելի միջն. | 23 | 23 | 35 | 13 |
| 17. | Արևշատի հիմն. | 26 | 23 | 30 | 0 |
| 18. | Մեծ Թաղերի միջն. | 145 | 134 | 25 | 4 |
| 19. | Մարիամաձորի միջն. | 42 | 41 | 41 | 15 |
| 20. | Ջրակուսի միջն. | 35 | 35 | 25 | 9 |
| | Շուշիի շրջան | | | | |
| 21. | Շուշիի Դ. Ղազարյանի անվ. | 54 | 52 | 27 | 12 |
| 22. | Լիսագորի միջն. | 12 | 12 | 25 | 0 |
| | Քաշաթաղի շրջան | | | | |
| 23. | Բերձորի հ. 1 միջն. | 106 | 95 | 36 | 8 |
| 24. | Սարատակի միջն. | 13 | 13 | 62 | 31 |
| 25. | Վուրգավանի միջն. | 13 | 12 | 8 | 8 |
| 26. | Հակարիի միջն. | 13 | 11 | 9 | 9 |
| 27. | Ծաղկաբերդի միջն. | 30 | 26 | 57 | 26 |
| 28. | Կովսականի միջն. | 53 | 35 | 46 | 8 |
| 29. | Ալաշկերտի միջն. | 18 | 14 | 36 | 0 |
| | Շահումյանի շրջան | | | | |
| 30. | Նոր Գետաշենի միջն. | 22 | 22 | 27 | 5 |
| 31. | Նոր Բրաջուրի միջն. | 28 | 23 | 22 | 0 |
| | **Ընդամենը՝** | **2144** | **1923** | **36** | **11** |

Գրավոր աշխատանքների արդյունքները ցույց տվեցին, որ աշակերտների 64%-ը մաթեմատիկա առարկայից ունի անբավարար գիտելիքներ, ցածր է ուսման որակը, ուսուցիչների կողմից նշանակված ընթացիկ, կիսամյակային և տարեկան գնահատականների մեծ մասը չի համապատասխանում աշակերտների փաստացի գիտելիքներին:

Նշված դպրոցների 5-12 (9)-րդ դասարանների 2144 աշակերտներից գրավորներին մասնակցել են 1923-ը կամ 90%-ը: «4-6» միավորներ են ստացել 489 աշակերտ կամ 25%-ը, 7-10» միավորներ՝ 201 կամ 10,5 %-ը:

Գրավորներից բացակայած 221 աշակերտներից ամենաշատը բաժին է ընկնում Քաշաթաղի շրջանի Կովսականի (18 աշակերտ), Ստեփանակերտի h.1 (69 աշակերտ), Մարտունու h.1(47 աշակերտ), Իվանյանի (15աշակերտ) դպրոցներին:

Համեմատաբար բարձր առաջադիմություն է գրանցվել (ընդհանուր միջինից՝ 37%-ից բարձր) Ստեփանակերտի h.1 (49%), Քաշաթաղի շրջանի Սարատակի (62%), Ծաղկաբերդի (57%), Հադրութի շրջանի Մարիամաձորի (41%), Մարտունու շրջանի Շեխերի (41%), Քարահունջի (61%) դպրոցներում:

Ուսման որակը («7-10» միավորներ ստացած աշակերտներ) համեմատաբար բարձր է եղել Ստեփանակերտի h.1 (17%), Քաշաթաղի շրջանի Սարատակի (31%), Ծաղկաբերդի (26%), Հադրութի շրջանի Մարիամաձորի (15%), Առաքելի (13%) և Քարահունջի (23%) դպրոցներում:

Ոչ մի աշակերտ «7-10» միավոր չի ստացել կամ 0% ուսման որակ է գրանցվել Շահումյանի շրջանի Նոր Բրաջուրի, Հադրութի շրջանի Արևշատի, Մարտունու շրջանի Ջիվանիի, Քաշաթաղի շրջանի Ալաշկերտի, Շուշիի շրջանի Լիսագորի դպրոցներում:

Սպասվածից ցածր առաջադիմություն և ուսման որակ է գրանցվել Մարտակերտի h.2, Վաղուհասի, Մարտունու h.1, Քերթի, Առաքելի, Արևշատի, Բերձորի h.1, Հադրութի շրջանի Մեծ Թաղերի դպրոցներում:

Կատարած դասալսումները ցույց տվեցին, որ բարեխղճորեն և բավարար մակարդակի դասեր են վարում Ն. Ավանեսյանը, Ա. Մայիլյանը, Օ. Նասիբյանը (Ստեփանակերտի h.1), Ռ. Հարությունյանը (Մարտակերտի h.2) , Ռ. Ջուլհակյանը (Քաշաթաղի շրջ., Սարատակ), Լ. Աղավելյանը (Մարտունու շրջ., Շեխեր): Նրանք դասերը կազմակերպում են գիտական բարձր մակարդակով, զարգացնում են աշակերտների տրամաբանական մտածողությունը, ձգտում են, որ աշակերտները իրենց տեսական գիտելիքները կիրառեն խնդիրների և վարժությունների լուծման ժամանակ, ապահովում են աշակերտների ստեղծագործական և ինքնուրույն աշխատանքները մշտապես զբաղվում են իրենց մանկավարժական և մեթոդական պատրաստականության բարձրացմամբ և պատահական չէ, որ այս դպրոցներում գրանցվել է համեմատաբար բարձր առաջադիմություն և ուսման որակ:

Միաժամանակ կատարված դասալսումներից պարզվել է, որ տեսչավորված դպրոցների մեկ երրորդում ցածր հիմքի վրա է առարկայի դասավանդման դրվածքը: Այդ դպրոցներում դասավանդող ուսուցիչները ամենայն լրջությամբ չեն նախապատրաստվում օրվա դասերին, չեն ապահովում աշակերտների ակտիվությունը, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքը, դասավանդում են միայն ավանդական մեթոդներով, նպատակային չեն օգտագործում դասագործընթացը:

**Օ. Ասրյան**
**ԿԳ նախարարի խորհրդական**
**Վ. Սահակյան**
**ԿՊՏ ավագ պետական փեսուչ**

### ՖԻԶԻԿԱ

Իրականացվել է ֆիզիկայի դասավանդման դրվածքի ստուգում: Ամփոփելով կատարածը՝ կարելի է նշել, որ տեսչավորված դպրոցներում կան իրենց գործին տիրապետող մանկավարժներ, ովքեր ֆիզիկայի դասերը ծառայեցնում են ոչ միայն ֆիզիկական օրենքներ սովորեցնելուն, այլև զարգացնում են սովորողների տրամաբանական մտածողությունը, ինքնուրույնությունը՝ դասագործընթացում ստեղծելով խնդրահարույց իրավիճակներ: Նրանց թվում են՝ Էլմիրա Գաբրիելյան (Ստեփանակերտի h.12 հիմնական դպրոց), Սարգիս Աղաջանյան (Շուշիի Դ.Ղազարյանի անվ.երաժշտական դպրոց), Բ.Դանիելյան, Ռ.Բարխուդարյան (Մեծ Թաղերի միջնակարգ դպրոց), Ա.Քոսակյանը (Բերձորի h. 1 միջնակարգ դպրոց):

Հարկ է նշել, որ ուսուցիչների արդյունավոր աշխատանքին խոչընդոտում է մի շարք դպրոցներում շենքային անբավարար պայմաններից բացի, նաև լաբորատոր սարքավորումների ու գործիքների բացակայությունը (Լիսագորի, Քերթի, Ննգու, Արևշատի, Մարիամաձորի, Հակարիի, Սարատակի, Նոր Գետաշենի, Նոր Բրաջուրի միջնակարգ և Ջիվանիի հիմնական դպրոցներ), ինչը հնարավորություն չի տալիս կատարելու ֆիզիկայի ծրագրով նախատեսված լաբորատոր և գործնական աշխատանքների զգալի մասը. ցուցադրական փորձերը լաբորատորիայում հնարավոր չէ կատարել, կաբինետում առկա են ընդամենը մի քանի չափիչ սարքեր և պաստառներ, դրանք էլ դասագործընթացում համարյա չեն օգտագործվում: Դպրոցների ուսումնատեխնիկական բազայի այսպիսի վիճակը պետք է մտահոգի տնօրինությանը. պարզ է, որ նման պայմաններում ֆիզիկայի լիարժեք դասավանդումը բացառվում է: Թույլ է համագործակցությունը ուսուցիչների միջև: Ոչ բոլոր ուսուցիչներն են զբաղվում ինքնակրթությամբ: Շատ քիչ դպրոցներում են աշխատանքներ կատարվում առարկայական կաբինետների ստեղծման ու կահավորման ուղղությամբ: Գործող կաբինետներ կան Ստեփանակերտի h.h. 1, 12, Շուշիի Դ.Ղազարյանի անվան երաժշտական, Առաքելի, Մեծ Թաղերի, Կովսականի, Բերձորի դպրոցներում: Մի շարք դպրոցներում դրանք կան, բայց շենքային պայմաններից ելնելով՝ չեն գործում և համալրման կարիք ունեն:

Ուսուցիչների մի մասը չի կարողանում առանձնացնել յուրաքանչյուր դասի մեջ գլխավորը երկրորդականից, չծանրաբեռնել երեխաներին ավելորդ, ոչ էական տվյալներով ու թվերով: Պահանջվող ուշադրություն չի դարձվում տնային աշխատանքների տրմանն ու ստուգմանը, նոր նյութի հաղորդման ժամանակ չեն ապահովվում նախորդ ու նոր նյութերի միջև, ինչպես նաև միջառարկայական կապերը, քիչ տեղ է տրվում խնդրահարույց իրավիճակների ստեղծմանը: Գործնական աշխատանքների համար հատկացված դասաժամերին կամ կրկնում են անցած թեմաները, կամ լուծում խնդիրներ: Հարկ է նշել, որ գործնական (լաբորատոր) աշխատանքների կատարման հաճախությունը որոշվում է ծրագրով, ու լաբորատորիա չունենալու դեպքում նախատեսված դասաժամերին անհրաժեշտ է օգտագործել վիրտուալ լաբորատորիան կամ աշակերտներին հանձնարարել պատրաստել ռեֆերատներ, կամ էլ դրանց հետ միասին՝ ինքնաշեն սարքեր, որոնց միջոցով կհարստացվի դպրոցի լաբորատորիան:

Գործնական աշխատանքները գնահատելիս հաշվի են առնվում յուրաքանչյուր աշակերտի մասնակցության աստիճանը աշխատանքին, փորձարարական հմտությունները, արդյունքները ներկայացնելու և մեկնաբանելու կարողությունները:

Բոլոր մասնագետներն առաջնորդվում են գործող ծրագրերով ու ծրագրային նյութին համապատասխան դասագրքերով, խնդրագրքերով: Աշակերտները հիմնականում ապահովված են դասագրքերով: Ծրագրային նյութի կատարման գործում կան կոպիտ սխալներ Լիսագորի, Իվանյանի միջնակարգ դպրոցներում, որոնք սկսվում են ուսուցիչների կողմից ոչ ճիշտ ձևով կազմված թեմատիկ պլաններից: Կարելի է ասել, որ (համարյա ստուգված բոլոր դպրոցներում) կան թերություններ ու բացթողումներ ծրագրային նյութի կատարման գործում: Չի պահպանվել ծրագրով նախատեսված թեմատիկ գրավոր ու գործնական աշխատանքների քանակը: Ուսուցիչների մեծ մասը ճիշտ չի ընտրում թեմատիկ և կիսամյակային ամփոփիչ աշխատանքների տեքստերը, ինչպես նաև ստուգում, գնահատում է առանց պահպանելու գնահատման չափանիշները ու ընդհանրապես, ճիշտ չի կիրառում գնահատման նոր համակարգը: Պարզվել են նաև դեպքեր, երբ ուսուցչի կողմից չեն ստուգվել և գնահատվել մի շարք կիսամյակային ամփոփիչ աշխատանքներ, սակայն դրանց դիմաց նշանակված են գնահատականներ: Ցավով պետք է նշել, որ ուսուցիչների մի զգալի մասը դասերը վարում է բարբառով:

Կատարած ստուգումներից պարզ դարձավ, որ ոչ մասնագետներ են աշխատում Քռասնու (Ա.Աղաջանյան), Լիսագորի (Ք.Նասիբյան), Քերթի (Յ.Ղուլյան), Արևշատի (Ս.Բաղդասարյան), Սարատակի (Շ.Աբաղյան), Կովսականի (Սերոբ Քարամյան, Սուրեն Քարամյան), Բերձորի (Հ.Սահակյան), Նոր Գետաշենի (Թ.Խաչատրյան) դպրոցներում:

Կան ուսուցիչներ, որոնք, ունենալով ոչ մասնագիտական կրթություն, դասավանդման գործընթացում հասնում են որոշակի հաջողությունների, քանի որ մշտապես զբաղվում են իրենց մասնագիտական ու մեթոդական պատրաստվածության բարձրացմամբ: Նրանց թվում է Աշխեն Աղաջանյանը (Քռասնու միջնակարգ դպրոց):

Կատարած դասալսումներից պարզ դարձավ, որ առարկայի դասավանդման դրվածքը մի շարք դպրոցներում ցածր մակարդակի վրա է: Աշակերտների զգալի մասը չունի խոր ու կայուն գիտելիքներ առարկայից, ցածր է նրանց տրամաբանական մտածողությունը, ավելի շատ անգիր են անում դասը, չեն կարողանում բացատրել հենց իրենց կողմից տրված սահմանումների, օրենքների բուն էությունը, տալ մեծությունների չափման միավորները ՄՀ-ում ու բացատրել նրանց ֆիզիկական իմաստը: Բավարար մակարդակի վրա չեն սովորողների բանավոր խոսքը, պատմելու ոճը, հաճախ խոսում են սխալներով, աղավաղում են որոշ ֆիզիկական եզրույթներ, ճիշտ չեն կատարում օրենքների ձևակերպումը: Չեն կարողանում ինքնուրույն լուծել խնդիրներ, կառուցել գրաֆիկներ:

Աշակերտների փաստացի գիտելիքները չեն համապատասխանում նրանց ընթացիկ ու կիսամյակային գնահատականներին: Ուսուցիչները թույլ են տալիս գնահատականների արհեստական բարձրացումներ: Որոշ դպրոցներում դասամատյանների համապատասխան էջի գնահատականները չեն համապատասխանում վերջում նշանակված բաղադրիչ գնահատականներին:

Առարկայի դրվածքի բարելավման նպատակով ուսուցիչներին անհրաժեշտ է մշտապես զբաղվել ինքնակրթությամբ, աշխատանքի ընթացքում անընդհատ կատարելագործելով դասավանդման մեթոդները՝ ձգտել առարկայի հանդեպ հետաքրքրություն առաջացնել աշակերտների մեջ. դասագործընթացում գործուն պահել յուրաքանչյուր աշակերտի, հետևողական ու պահանջկոտ լինել տրված յուրաքանչյուր հանձնարարության կատարման հանդեպ, պահպանել գրավոր աշխատանքների ստուգման որակական կողմը, գնահատել ըստ չափանիշների: Մի շարք դպրոցներում, օգտագործելով ընձեռված հնարավորությունները, տվել ենք նաև ցուցադրական դասեր: Լսված բոլոր դասերը քննարկվել են ուսուցիչների ու մեթոդմիավորման նախագահների կամ տնօրինության անդամների հետ: Տրվել են բազմաթիվ առաջարկություններ ու հանձնարարականներ՝ ուղղված առարկայի դասավանդման դրվածքի բարելավմանը, ինչը ցավոք, ընդհանուր առմամբ, գտնվում է ցածր մակարդակի վրա:

**Ն. Գրիգորյան**
**ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ փեսուչ**

### ՔԻՄԻԱ և ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2013-2014 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ աշխատանքային պլանով կրթության պետական տեսչության հանձնախմբի կազմում 15 ուսումնական հաստատություններում իրականացրել ենք քիմիայի և կենսաբանության դասավանդման դրվածքի ստուգում: Ամփոփելով կատարածը՝ կարելի է նշել, որ տեսչավորված դպրոցներում կան իրենց գործին գիտակ, բարեխիղճ, հմուտ մանկավարժներ, ովքեր վարում են լավ և հետաքրքիր դասեր, կիրառում փոխներգործուն մեթոդներ՝ նպատակ ունենալով ստեղծելու ճանաչողական գործունեության զարգացման և արժեքային համակարգի ձևավորման պայմաններ: Հաջողված և արդյունավետ դասեր լսեցինք Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան h.1 հիմն. (Իրա Մկրտչյան՝ քիմիա և կենսաբանություն), Մարտունու Ն. Ստեփանյանի անվան h. 1 հոսքային (Կարինե Կարապետյան՝ քիմիա, Ռիտա Եսայան՝ կենսաբանություն), Հադրութի շրջանի Մարիամաձորի (Սարիբեկ Միրզոյան՝ կենսաբանություն), Քաշաթաղի շրջանի Բերձորի h.1 միջն. (Վարդուհի Հովհաննիսյան, Ալլա Սարգսյան՝ կենսաբանություն), Մարտակերտի շրջանի Վաղուհասի միջնակարգ (Լիլիթ Ազիզյան՝ քիմիա և կենսաբանություն) և Ասկերանի շրջանի Իվանյանի միջն. (Մարիետա Շահնազարյան՝ կենսաբանություն) դպրոցներում:

Երիտասարդ, շնորհալի ուսուցիչների թվում են Իրա Մկրտչյանը, Սարիբեկ Միրզոյանը, Կարինե Կարապետյանը, Լիլիթ Ազիզյանը:

Հարկ է նշել, որ կան ոչ մասնագետ ուսուցիչներ, ովքեր տարիների փորձով ձեռք են բերել գիտելիքներ և հմտություններ:

Կան նաև ուսուցիչներ, ովքեր մշտապես պետք է զբաղվեն ինքնակրթությամբ, զարգացնեն իրենց մեթոդամանկավարժական պատրաստվածությունը, տիրապետեն դասավանդման ժամանակակից մեթոդներին և դրանք հաջողությամբ կիրառեն դասագործընթացում, որով կիրականացնեն ժամանակակից դասին ներկայացվող պահանջներն ու լավ արդյունքների կհասնեն:

Մի շարք դպրոցներում ուսուցիչները հաջողությամբ անց են կացնում համակարգչային դասեր, առաջնորդվում են գործող ծրագրով, ունեն համապատասխան թեմատիկ պլանավորումներ, գրում են ամենօրյա պլան-սեղմագրեր, օգտվում են ուսումնաօժանդակ ձեռնարկներից, կատարում են թեստային առաջադրանքներ, լուծում բարդ խնդիրներ, ինչպես նաև հնարավոր լաբորատոր, գործնական առաջադրանքներ, կատարում բազմաբնույթ փորձեր:

☞14

## ՏԵՍՉԱԿԱՆ

13☜ Միաժամանակ հարկ է նշել, որ ուսուցիչների արդյունավետ աշխատանքin խոչընդոտում են մի շարք դպրոցների ոչ բարենպաստ շենքային պայմանները, կաբինետների բացակայությունը, համակազմ դասարանների առկայությունը (Քերթի, Սոսի, Քարահունջի, Ննգու, Մեծ Թաղերի, Ջրակուսի, Լիսագորի): Իսկ դասարաններում աշակերտների մեծ խտությունը խանգարում է աշակերտների առանձնահատկությունների հաշվառմամբ նրանց հետ անհատական աշխատանքի անցկացմանը: Ուսուցիչների նպատակային աշխատանքին խանգարում են նաև դասագրքերի բարդ և խիտ կառուցվածքը, քիմիայի և կենսաբանության դասաժամերի կրճատումը: Գյուղական դպրոցի ուսուցիչները ցանկություն ունեն ուսումնասիրել նաև ավագ դպրոցի հումանիտար և բնագիտական հոսքի համապատասխան դասագրքերը և անհրաժեշտության դեպքում դրանք կիրառել աշակերտների հետ լրացուցիչ պարապմունքների ժամանակ:

Ուսուցիչները դժգոհում են 7-րդ, 8-րդ, 9-րդ դասարանների քիմիայի և կենսաբանության դասագրքերի և ծրագրերի անհամապատասխանությունից:

Ավագ և հոսքային դպրոցներում հմուտ, փորձառու ուսուցիչների աշխատանքը դասարանների մի մասում համապատասխան արդյունք չի տալիս: Դա հիմնականում պայմանավորված է նրանով, որ այդ դասարաններում ընդգրկվել են աշակերտներ, ովքեր չեն ցանկանում առարկան խորացված ուսումնասիրել:

Որոշ դպրոցներում աշակերտները մասամբ են ապահովված դասագրքերով (Ննգու, Մարիամաձորի, Ջրակուսի): Շատ դպրոցների գրադարաններում չկա մասնագիտական գրականություն: Այն ուսուցիչները, ովքեր սեփական միջոցներով բավականին մասնագիտական և մեթոդական գրականություն են ձեռք բերել և առաջնորդվում են դրանցով, ուսումնական գործընթացում ունեն բավականին հաջողություններ:

Ոչ բոլոր ուսուցիչներն են զբաղվում ինքնակրթությամբ:

Քիչ դպրոցներում են աշխատանքներ տարվում առարկայական կաբինետների ստեղծման և կահավորման ուղղությամբ: Մի շարք դպրոցներում դրանք կան, բայց չեն ծառայում նպատակին (Ննգի, Մեծ Թաղեր, Քռասնի, Սոս): Հատկանշական են Բերձորի, Ստեփանակերտի հ. 1, Մարտունու հ.1, Մարիամաձորի, Վաղուհասի դպրոցների կաբինետների կահավորվածությունը և նպատակային գործունեությունը:

Ոչ բոլոր ուսւցիչներն են կիրառում դասավանդման արդյունավետ մեթոդներ, դասերն անց են կացնում ուսուցչակենտրոն ուսուցման դրույթներին համապատասխան, աշակերտները դասագործընթացում ոչ ակտիվ գործունեություն են ծավալում: Դպրոցների մի մասում ձևական հիմունքներով են ստեղծված առարկայական մասնախմբերը: Առարկայական մասնախմբի նախագահներ են նշանակված անփորձ ուսուցիչներ, որոնք մեթոդական և մասնագիտական օգնության կարիք ունեն (Քերթ, Կովսական, Ջրակուս, Ննգի): Առարկայական մասնախմբի նախագահները լուրջ աշխատանքներ պետք է տանեն մանավանդ երիտասարդ ուսուցիչների ստաժավորման համար, հիմք ունենալով այն հանգամանքը, որ նրանց մեջ կան մեթոդամանկավարժական պատրաստվածություն չունեցող ուսուցիչներ:

Թերությունների շարքում հարկ է նշել, որ դասերն անց են կացվում առանց դիտողական պարագաների, միապաղաղ ու անհետաքրքիր: Ստուգումներից կարելի է եզրակացնել, որ միջին դասարաններում քիմիայից և կենսաբանությունից բարձր առաջադիմությունն ավելի ակնհայտ է, քան բարձր դասարաններում: Բարձր դասարաններում նկատվում է աշակերտների անտարբեր վերաբերմունք ուսման հանդեպ. նրանցից շատերը անպատրաստ են ներկայանում դասերին: Ուսուցիչը պետք է գիտակցի, որ համապատասխան ուսումնական դրդապատճառներ պետք է ձևավորի աշակերտների մոտ: Նա պետք է հետաքրքիր, նպատակային և արդյունավետ դարձնի դասագործընթացը:

Աշակերտների մեծ մասի մոտ, հատկապես գյուղական դպրոցներում, գիտելիքների իմացության մակարդակը միջինից ցածր է (Հովսեփավան, Ջրակուս, Ննգի, Կովսական, Քերթ, Քարահունջ): Նշված դպրոցներում աշակերտների ստվար մասը չունի մտածելու և ստեղծագործելու կարողություններ:

Ստուգումների ընթացքում մեր կողմից ուսուցիչներին տրվել են համապատասխան մեթոդական և մասնագիտական ցուցումներ թեմատիկ պլանավորումների, օրվա դասի պլանսեղմագրերի կազմման, մատենավարության, գնահատման նոր հայեցակարգի դրույթների կիրառման առնչությամբ:

Տեսչավորված դպրոցներից առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին մասնակցել են Մարտունու h. 1 (Սվետլանա Հարությունյան, Դիանա Ավետիսյան, Նարինե Արզումանյան, Վլադիմիր Բաղրյան), Բերձորի , Վաղուհասի (Վահագն Աղաբեկյան, Անուշկա Զաքարյան, Ռազմելա Զաքարյան, Հրայր Միքայելյան, Թաթուլ Աղաբեկյան) միջնակարգ դպրոցների աշակերտները: Իսկ եզրափակիչ փուլին մասնակցել են Սվետլանա Հարությունյանը, Անուշկա Զաքարյանը:

Բարձր առաջադիմություն ունեն Ստեփանակերտի h. 1, Մարտունու h.1, Վաղուհասի դպրոցների աշակերտները: Համեմատաբար լավ առաջադիմություն ունեն Մեծ Թաղերի, Բերձորի դպրոցների աշակերտները:

Քիմիա և կենսաբանություն առարկաների դասավանդման դրվածքի բարելավման նպատակով առաջարկվում է`

տնօրեններին` ուսումնական պլանում եղած դպրոցական բաղադրիչի ժամաքանակից 7-րդ դասարանում ըստ հնարավորին մեկ ժամ հատկացնել քիմիա առարկային.

ուսուցիչներին`

- պարբերաբար զբաղվել ինքնակրթությամբ,
- լավ նախապատրաստվել յուրաքանչյուր դասի և բոլոր դասերը դարձնել հետաքրքիր, բովանդակալից , հաճախակի կազմակերպել համակարգչային դասեր,
- դասագործընթացում կարևորություն տալ ժամանակակից մեթոդների կիրառմանը, զննական դարձնել ուսումնական գործընթացը,
- աշխատանքներ տանել քիմիայի և կենսաբանության կաբինետի ստեղծման և կահավորման ուղղությամբ,
- ուշադրության կենտրոնում պահել փոխադարձ և ընդօրինակման դասերի, ինչպես նաև միջոցառումների կազմակերպման գործընթացը,
- ձեռք բերել նյութեր և սարքավորումներ, հաճախակի կատարել լաբորատոր և գործնական աշխատանքներ,
- կազմակերպել մասնագիտական երեկոներ, վիկտորինաներ, մրցույթներ, արշավներ, էքսկուրսիաներ:

**Վ. Ավետիսյան**
**ԿՊՏ տեսուչ**

### ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2013-2014 ուսումնական տարում կրթության պետական տեսչության հանձնախմբի կազմում ստուգվել է աշխարհագրություն առարկայի դասավանդման դրվածքը ԼՂՀ 30 դպրոցներում` Ստեփանակերտի hh.1, 12, Ասկերանի շրջանի Իվանյանի, Հովսեփավանի, Քռասնու, Մարտունու շրջանի Սոսի, Քերթի, Քարահունջի, Ննգու, Ջիվանիի, Ճեխերի, Մարտունու h. 1, Հադրութի շրջանի Առաքելի, Արևշատի, Մարիամաձորի, Ջրակուսի. Մեծ Թաղերի, Մարտակերտի շրջանի Մեծ շենի, Վաղուհասի, Մարտակերտի h. 2, Շուշիի շրջանի Լիսագորի, Շուշիի Դ. Ղազարյանի անվան երաժշտական, Քաշաթաղի շրջանի Վուրգավանի, Սարատակի, Հակարիի, Կովսականի, Բերձորի h.1, Շահումյանի շրջանի Նոր Ղարաչինարի, Նոր Գետաշենի, Նոր Բրաջուրի: Նշյալ դպրոցների աշխարհագրության ուսուցիչներն առաջնորդվում են կազմված թեմատիկ պլաններով, գործող դասագրքերով և ուսումնաօժանդակ ձեռնարկներով, դասերին ներկայանում են օրվա դասի պլան-սեղմագրերով: Դպրոցական բաղադրիչ ժամաքանակից աշխարհագրությանը հատկացվել էր 10 դպրոցներում (Քաշաթաղի շրջանի Վուրգավանի, Բերձորի h.1, Մարտակերտի շրջանի Մեծ շենի, Վաղուհասի, Շահումյանի շրջանի Նոր Գետաշենի. Հադրութի շրջանի Արևշատի, Մարիամաձորի, Մարտունու շրջանի Ճեխերի, Քերթի, Ասկերանի շրջանի Քռասնու): Աշխարհագրության խմբակ գործում է 10 դպրոցներում (Ստեփանակերտի h. 1, Հադրութի շրջանի Արևշատի, Մարիամաձորի, Ջրակուսի, Շահումյանի շրջանի Նոր Ղարաչինարի, Մարտունու շրջանի Սոսի, Քերթի, Մարտունու h.1, Ննգու, Մարտակերտի շրջանի Վաղուհասի): 2012-2014թթ. ՀՀ ԿԱԻ Ստեփանակերտի մասնաճյուղի կազմակերպած վերապատրաստման դասընթացներին մասնակցել է 14 ուսուցիչ: Տեսչավորված 30 դպրոցների 40 աշխարհագրության ուսուցիչներից սկսնակ են 5-ը, 3-15 տարվա փորձ ունեն 17-ը,15 և ավելի` 18-ը: Կաբինետային համակարգ գործում է 6 դպրոցներում (Ստեփանակերտի h.1, Մարտունու h.1. Հադրութի շրջանի Մեծ Թաղերի, Արևշատի, Ասկերանի շրջանի Քռասնու, Բերձորի h.1):

Համեմատաբար լավ են կահավորված Ստեփանակերտի h.1, Մարտունու h.1., Հադրութի շրջանի Արևշատի և Մեծ Թաղերի դպրոցների կաբինետները: Նշյալ 40 ուսուցիչներից 20-ը ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն, 19-ը` բարձրագույն ոչ մասնագիտական կրթություն, իսկ 1-ը` միջին մասնագիտական կրթություն: Ոչ մասնագետներ են աշխատում Քաշաթաղի շրջանի Վուրգավանի, Սարատակի, Հակարիի, Կովսականի, Բերձորի h.1, Շահումյանի շրջանի Նոր Գետաշենի, Նոր Բրաջուրի, Նոր Ղարաչինարի, Շուշիի շրջանի Լիսագորի, դպրոցներում: Կան ուսուցիչներ, որոնք, ունենալով ոչ մասնագիտական կրթություն և երկար տարիներ դասավանդելով աշխարհագրություն առարկան, մշտապես զբաղվում են իրենց մասնագիտական ու մեթոդական պատրաստվածությամբ և դասավանդման գործընթացում հասնում են հաջողությունների: Նրանց թվում են Սուսաննա Օհանյանը, Հասմիկ Միքայելյանը (Ստեփանակերտի h.1 դպրոց), Թինաթին Գրիգորյանը (Մարտունու h.1 դպրոց), Կարինե Հովհաննիսյանը (Բերձորի h.1 դպրոց): Կատարված դասալսումներից պարզ դարձավ, որ աշխարհագրության մի շարք ուսուցիչներ տիրապետում են առարկային և նրա դասավանդման մեթոդներին, դասերին կիրառում են հարցման ու գնահատման տարբեր մեթոդներ, ապահովում միջառարկայական կապը, նոր դասը հաղորդում մատչելի, մեծ ուշադրություն են դարձնում քարտեզների օգտագործմանն ու յուրացմանը: Հետաքրքիր դասեր են անցկացնում հետևյալ մասնագետները. Սուսաննա Օհանյան, Հասմիկ Միքայելյան (Ստեփանակերտի h.1 դպրոց), Թինաթին Գրիգորյան (Մարտունու h. 1 դպրոց), Ժիրայր Ասրյան (Մարտակերտի շրջանի Վաղուհասի դպրոց), Կարինե Հովհաննիսյան (Բերձորի h.1 դպրոց), Ռուզաննա Ավետիսյան (Մարտակերտի h.2 դպրոց), Նորայր Հարությունյան (Մարտունու շրջանի Ջիվանիի դպրոց), Արևհատ Թովմասյան (Ասկերանի շրջանի Իվանյանի դպրոց), Գոհար Սարդարյան (Հադրութի շրջանի Մեծ Թաղերի դպրոց), Լիլյա Զաքարյան (Հադրութի շրջանի Արևշատի դպրոց), Ալիսա Ասրյան (Հադրութի շրջանի Մարիամաձորի դպրոց): Ուրախալի է այն փաստը, որ կան երիտասարդ մասնագետներ, որոնք չունեն դասավանդման անհրաժեշտ փորձ, բայց ունեն ձգտում և մշտապես կատարելագործվելով` կարող են դառնալ լավ մասնագետներ:Նրանց թվում են Լիլիթ Հովհաննիսյանը (Մարտունու շրջանի Ննգու դպրոց), Լուսինե Գրիգորյանը (Մարտունու շրջանի Սոսի դպրոց), Արմինե Մուրադյանը (Շահումյանի շրջանի Նոր Գետաշենի դպրոց), Աննա Հովհաննիսյանը, Անժելա Մադոյանը (Քաշաթաղի շրջանի Կովսականի դպրոց): Նշյալ դպրոցներից «լավ» է գնահատվել Ստեփանակերտի h. 1 հիմնական դպրոցի և Մարտակերտի շրջանի Վաղուհասի միջնակարգ դպրոցի աշխարհագրության ուսուցիչների աշխատանքը:

Տեսչավորված դպրոցներից աշխարհագրության օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցել են Բերձորի h.1 դպրոցի 2 և Մարտակերտի շրջանի Վաղուհասի, Մարտունու շրջանի Ջիվանիի դպրոցների 1-ական աշակերտներ:

Սովորողների գիտելիքների մակարդակը համեմատաբար ցածր է եղել Քաշաթաղի շրջանի Վուրգավանի, Սարատակի, Հակարիի, Մարտակերտի շրջանի Մեծ շենի, Շուշիի Դ.Ղազարյանի անվան երաժշտական դպրոցներում:

Բոլոր դպրոցներում տեսչավորման ընթացքում ցույց է տրվել մեթոդական օգնություն, տրվել ցուցումներ: Ընդհանուր առմամբ, առարկայի դասավանդման դրվածքը համակողմանի տեսչավորման ենթարկված դպրոցներում գնահատվել է բավարար:

**Տ. Պետրոսյան**
**ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ տեսուչ**

### ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

Համաձայն ԼՂՀ ԿԳ նախարարության ԿՊՏ ընդհանուր աշխատանքային պլանի` 2013-2014 ուսումնական տարում կրթության պետական տեսչության հանձնախմբի կազմում հանրապետության տարածքում գործող 31 ուսումնական հաստատություններում`Ստեփանակերտի h. 1 և h. 12 հիմնական, Ասկերանի շրջանի Հովսեփավանի հիմնական, Իվանյանի միջնակարգ, Քռասնու միջնակարգ, Մարտունու շրջանի Ճեխերի միջնակարգ, Ջիվանիի հիմնական, Սոսի միջնակարգ, Քերթի միջնակարգ, Քարահունջի հիմնական, Ննգու միջնակարգ, Մարտունու միջնակարգ հոսքային, Քաշաթաղի շրջանի Սարատակի միջնակարգ, Հակարիի միջնակարգ, Ծաղկաբերդի միջնակարգ,Կովսականի միջնակարգ, Ալաշկերտի միջնակարգ, Բերձորի միջնակարգ, Մարտակերտի շրջանի Մեծ շենի միջնակարգ, Վաղուհասի միջնակարգ, Մարտակերտի h. 2 հիմնական, Շահումյանի շրջանի Նոր Բրաջուրի միջնակարգ, Նոր Գետաշենի միջնակարգ, Եղեգնուտի միջնակարգ, Հադրութի շրջանի Առաքելի միջնակարգ, Արևշատի հիմնական, Մեծ Թաղերի միջնակարգ, Մարիամաձորի միջնակարգ, Ջրակուսի միջնակարգ, Շուշիի շրջանի Լիսագորի միջնակարգ, Շուշիի Դանիել Ղազարյանի անվան մասնագիտացված երաժշտական միջնակարգ դպրոցներում իրականացվել է ինֆորմատիկայի դասավանդման դրվածքի ստուգում:

Ամփոփելով առարկայի դասավանդման դրվածքի ստուգումը տեսչավորված հանրակրթական դպրոցներում` անհրաժեշտ է նշել, որ առարկան դասավանդող ուսուցիչների մի մասըբանիմաց, աշխատասեր ուսուցիչներ են, որոնք լավ են տիրապետում առարկային, դասերը վարում են հետաքրքիր, ազատ ու համարձակ, օգտագործում են առարկայի դասավանդման տարբեր մեթոդներ, նոր նյութը մատուցում են` օգտագործելով մուլտիմեդիա տեխնոլոգիաների հնարավորությունները, հիմնականում համակարգչային ցուցադրումների միջոցով, ուշադրություն են դարձնում ներառարկայական և միջառարկայական կապերին: Խրախուսելի է, որ ուսուցիչները չեն բավարարվում դասագրքի գործնական աշխատանքներով, կազմակերպում են հետաքրքիր ու ստեղծագործական գործնական աշխատանքներ:

Դրանցից են Ստեփանակերտի h. 1 հիմնական դպրոցի ուսուցչուհի Մարինե Եղյանը (աշխատանքը գնահատվել է «լավ»), h. 12 հիմնական դպրոցի ուսուցչուհի Ժաննա Ալեքսանյանը, Քաշաթաղի շրջանի Բերձորի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Տիրուհի Գրիգորյանը:

Կան նաև երիտասարդ, բայց ներուժ ունեցող, խոստումնալից ու աշխատասեր ուսուցիչներ` Նելլի Ստեփանյան (Մարտունու շրջանի Ջիվանիի հիմնական դպրոց), Գևորգ Խաչատրյան (Հադրութի շրջանի Մարիամաձորի միջնակարգ դպրոց):

## ՏԵՍՉԱԿԱՆ

Դասավանդման դրվածքը դպրոցների մեծամասնությունում, հաշվի առնելով, որ դասավանդող ուսուցիչը չունի մասնագիտական կրթություն, առկա թերություններով ու բացթողումներով հանդերձ,գնահատվել է «բավարար» կամ վերապահումներով «բավարար»:

Գյուղական դպրոցներում այս արագ զարգացող և ժամանակակից առարկան հիմնականում դասավանդում են ոչ մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչներ, որոնք հիմնականում ավարտել են կարճաժամկետ համակարգչային դասընթացներ, լիարժեք չեն տիրապետում ուսումնական ծրագրով նախատեսված բոլոր համակարգչային ծրագրերին և առարկայի դասավանդման մեթոդներին, դժվարանում են ինքնուրույն ուսումնասիրել դրանք, կարիք ունեն վերապատրաստման:

Հարկ է նշել, որ ոչ բոլոր ուսուցիչներն են բարեխղճորեն զբաղվում ինքնակրթությամբ և ուսումնասիրում ուստարվա մեթոդական ցուցումները, ինչի պատճառով կան ծրագրերի խախտումներ և թերակատարումներ, չեն պահպանվել թեմատիկ, գործնական աշխատանքների նվազագույն քանակները, ճիշտ չեն կազմակերպում առարկայի ուսուցումը 12-րդ դասարանում: Գրեթե չեն կազմակերպվում արտադասարանական միջոցառումներ, չեն հրատարակվում առարկայական բյուլետեններ:Թույլ է ինֆորմատիկա առարկայի ուսուցիչների համագործակցությունը հատկապես շրջաններում, գրեթե չեն կազմակերպվում փոխադարձ և ընդօրինակման դասեր:

Ցածր է առարկայի դասավանդման դրվածքը Ասկերանի շրջանի Քռասնու միջնակարգ, Մարտունու շրջանի Քերթի միջնակարգ, Ննգու միջնակարգ, Քաշաթաղի շրջանի Կովսականի միջնակարգ, Ալաշկերտի միջնակարգ, Շահումյանի շրջանի Նոր Գետաշենի միջնակարգ, Հադրութի շրջանի Արևշատի հիմնական, Շուշիի շրջանի Լիսագորի միջնակարգ դպրոցներում,որտեղ աշակերտների տեսական գիտելիքները և համակարգչային հմտությունները չեն բավարարում նրանց ներկայացվող նվազագույն պահանջները:

Ուսումնական գործընթացում կրթության որակի և մատչելիության բարեփոխումների լայն օգտագործման նպատակով որոշակի աշխատանք է կատարվել տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրման ուղղությամբ:

Ստուգված 31 դպրոցներից 7-ը ունեն ժամանակակից համակարգչային կաբինետներ, 10-ը միացված են համացանցին: Ժամանակակից դպրոցներում համակարգիչները պետք է օգտագործվեն որպես դասագործընթացի բաղկացուցիչ մաս ոչ միայն ինֆորմատիկա առարկայի դասավանդման ժամանակ, այլև մյուս առարակները ուսուցանելիս՝ ուսումնական նյութը գրավիչ և մատչելի դարձնելու համար: Այդպիսի դասեր ստուգված դպրոցների մեծամասնությունում կազմակերպվում են, սակայն դեռևս ոչ բոլոր ուսուցիչներն են բավարար տիրապետում համակարգչին, ինչի պատճառով դրանք հիմնականում կազմակերպում են անարդյունավետ, հատկապես շրջաններում:

Դեռևս կան դպրոցներ, որտեղ ծրագրի իրականացման համար չունեն բավարար տեխնիկական ապահովում: Համակարգիչների քիչ քանակը, դրանց խափանումներով աշխատանքը առաջացնում են լրացուցիչ դժվարություններուսուցման ժամանակ և թույլ չեն տալիս լիարժեք կատարել ծրագրով նախատեսված բոլոր լաբորատոր ու գործնական աշխատանքները, բավարար չափով զարգացնել աշակերտների համակարգչային հմտությունները: Ասկերանի շրջանի Հովսեփավանի հիմնական, Մարտունու շրջանի Քարահունջի հիմնական, Ննգու միջնակարգ, Քաշաթաղի շրջանի Ալաշկերտի միջնակարգ դպրոցները ունեն միայն հին նմուշի համակարգիչներ, իսկ Շուշիի շրջանի Լիսագորի դպրոցը չունի գործող համակարգիչ:

Պետք է նշել, որ ընդհանուր առմամբ աշակերտները հետաքրքրություն ունեն առարկայի և համակարգչի հանդեպ: Սակայն հիմնականում ունեն բավարար գիտելիքներ կիրառական ծրագրերից: Գրեթե բոլոր դպրոցներում աշակերտները ունեն թույլ գիտելիքներ ծրագրավորման հիմունքներից, ինչի մասին են վկայում նաև ինֆորմատիկայից կազմակերպված օլիմպիադաները:

Ստուգումների ընթացքում ուսուցիչներին ցուցաբերվել է մեթոդական և մասնագիտական օգնություն, տրամադրվել են մեթոդական նյութեր, առարկայի դասավանդման դրվածքը բարելավելու համար կատարվել են ներքոբերյալ առաջարկությունները.

- ուստարվա սկզբից լիարժեք ուսումնասիրել առարկայի դասավանդմանը վերաբերող բոլոր մեթոդական ցուցումները և ձեռնարկները, թեմատիկ պլանավորումների մեջ մտցնել թեմատիկ և գործնական աշխատանքները, պահպանել թեմատիկ և գործնական աշխատանքների նվազագույն քանակները, դրանց առաջադրանքները կազմել ըստ չափորոշիչների, ստուգել ըստ չափանիշների,
- մշտապես զբաղվել ինքնակրթությամբ մասնագիտական ու մեթոդական պատրաստության խորացման նպատակով, հաճախակի կատարել փոխադարձ դասալսումներ փորձառու ուսուցիչների մոտ,
- բազմակողմանի նախապատրաստվել յուրաքանչյուր դասի, պլան-սեղմագրերը գրել հստակ՝ դասի ողջ ընթացքը մոդելավորել, հաշվի առնելով համակազմ դասարաններում աշխատելու առանձնահատկությունները,
- դասագործընթացը դարձնել ավելի հետաքրքիր, հասնել նրան, որ հնարավոր լինի լիարժեք իրագործել դասի նպատակները, նոր նյութը մատուցել աշակերտների գործուն մասնակցությամբ, խմբային գործնական աշխատանքները կազմակերպել արդյունավետ,
- դասագործընթացում լայնորեն օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները, մուլտիմեդիա հնարավորությունները, որոնք կնպաստեն աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների, ստեղծագործական գործունեության, համակարգչային գրագիտության զարգացմանը,
- ուշադրություն դարձնել տեսական գիտելիքների կայունությանը՝ կատարելով ինֆորմատիկայի հիմնարար հասկացությունների տարբեր տեսակի կրկնողություններ, և բոլոր աշակերտների համակարգչային հմտությունների զարգացմանը՝ նախատեսելով աշակերտների ինքնուրույն աշխատանքներ
- կազմակերպել արտադասարանական միջոցառումներ, լույս ընծայել առարկայական բյուլետեններ,
- առողջության պահպանման նպատակով գործնական դասերը ընդմիջել լիցքաթափող վարժություններով կամ կարճատև այլ առաջադրանքներով, որոնք կապված չեն համակարգչով աշխատելու հետ:

**Ք. Իսրայելյան**
**ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ փեսուչ**

### ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

2013-2014 ուսումնական տարում կրթության պետական տեսչության հանձնախմբի կազմում երեք տասնյակ հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացրել ենք «Երաժշտություն» առարկայի դասավանդման դրվածքի ստուգումը: Ամփոփելով կատարածը՝ կարելի է նշել, որ տեսչավորված դպրոցներում կան իրենց գործին տիրապետող և նվիրված մանկավարժներ, սակայն դա չի կարելի բավարար համարել, քանի որ ոչ բոլոր դպրոցներում կան համապատասխան կահավորված կաբինետներ և որակյալ մասնագետներ:

Երաժշտական դաստիարակությունը շարունակում է համարվել համալիր դաստիարակության կարևոր բաղկացուցիչը, քանի որ այն՝ որպես գեղագիտական դաստիարակության դրսևորման ձև, հղկում է մատաղ սերնդի զգայական ու հուզական աշխարհը, նպաստում գեղագիտական ճաշակի և համոզմունքների ձևավորմանն ու զարգացմանը: Երաժշտության դասագործընթացին սովորողները պետք է լսեն երաժշտություն, երգեն, կատարեն երաժշտառիթմական շարժումներ, պարեն, նվագեն, ստեղծագործեն: Ցավոք, երաժշտության դասը ոչ բոլոր դասավանդողներին է հաջողվում դարձնել կենսունակ ու կենդանի, մինչդեռ երաժշտական դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է երաժշտության ուսուցչի մասնագիտական պատրաստվածությամբ ու մանկավարժական վարպետությամբ: Ստուգման արդյունքներից պարզ է դառնում, որ երաժշտություն առարկան շարունակում է բազմաթիվ դպրոցներում մնալ որպես ուսուցիչների թերծանրաբեռնվածությունը լրացնելու միջոց: Երևույթը ցայտուն է առանձնապես դպրոցների միջին օղակում: Ստեղծված վիճակը կրկնակի անընդունելի է այն առումով, որ դպրոցի տնօրինությունը անհրաժեշտ վերահսկողություն չի սահմանում, և երաժշտության դասաժամերը նոր ուսումնականից երբեմն տրամադրում են ոչ թե նրանց, որոնց աշխատանքը բավարար է գնահատվել առարկայի տեսչավորումից հետո, և ինչ-որ չափով տեղեկացված են առարկայից, այլ տրվում են բոլորովին անտեղյակ ուսուցիչների: Նման վերաբերմունքից տուժում են աշակերտները:

Մի շարք դպրոցներում երաժշտության դասերը վարում են մասնագիտական կրթություն չունեցող ուսուցիչներ: Դրանց թվում են Շահումյանի շրջանի Նոր Ղարաչինարի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Ռուզան Մխիթարյանը, Մարտունու շրջանի Շեխերի և Քարահունջի կրտսեր օղակում աշխատող ուսուցիչները, Մարտակերտի շրջանի Մեծ շենի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Զոյա Բաղդասարյանը, Հադրութի շրջանի Ջրակուսի 1-3-րդ համակազմ դասարանի դասվար Արեգա Սարդարյանը: Այս շարքը կարելի է երկար շարունակել:

Ստուգումները ցույց են տվել, որ տեսչավորված դպրոցներում կան ուսուցիչներ, ովքեր կարողանում են աշակերտներին հաղորդակից դարձնել ոչ միայն հայկական մշակույթին, բացատրել ժողովրդական երգերի գեղարվեստական արժեքներն ու հմայքը, այլև ծանոթացնել համաշխարհային երաժշտությանը, որն այսօրվա դպրոցի դաստիարակչական գործընթացի հիմնախնդիրներից է: Այդպիսի ուսուցիչների շարքին են դասվում Ստեփանակերտի հ.1 և հ.12 դպրոցներում դասավանդող ուսուցիչներն ու դասվարները, Հադրութի շրջանի Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Կարինե Չաքմազյանը, Ասկերանի շրջանի Իվանյանի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Արևհատ Թովմասյանը, Մարտակերտի հ.2 հիմնական դպրոցի ուսուցչուհի Նանարա Բաբայանը և Մարտունու հ. 1 միջնակարգ դպրոցի ուսուցիչ Վլադիկ Շիրինյանը: Հարկ է առանձնացնել Վլադիկ Շիրինյանի նախանձախնդիր աշխատանքը, որի ապացույցը սեփական նախաձեռնությամբ երաժշտության կաբինետի կահավորումն է, երաժշտություն առարկայի դասավանդման լիարժեք կազմակերպումը: Պատահական չէ, որ նրա թողարկած աշակերտներից շատերն այսօր Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողներ ու շրջանավարտներ են: Մեզ մնում է շնորհակալություն հայտնել այսպիսի անբասիր աշխատանքի համար և հուսալ, որ Արցախի դպրոցներում կստվարանան նման ուսուցիչների շարքերը:

Առարկայի դասավանդման դրվածքի բարելավման նպատակով մեր կողմից տրվել են համապատասխան մեթոդական ու գործնական օգնություն և ցուցադրական դասեր:

**Ռ. Վերդյան**
**ԼՂՀ ԿԳՆ ԿՊՏ փեսուչ**

*Շնորհավորանք*

## ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ, ԱՌԱՔԻՆԻ ԿԻՆ, ԱԶՆԻՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ



Մաթեմատիկայի խորագիտակ մասնագետ, հմուտ և փորձառու մանկավարժ. ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն Նունե Բեգլարյանի մասին է խոսքը:

Բնությունից մեզ, հասարակությանը շնորհ արված լավագույն ուսուցիչ, առաքինի կին և ազնիվ գործընկեր Նունե Բեգլարյանը աշխատում է Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան հ. 2 դպրոցում: Կան մարդկային խառնվածքը բառերով և անբառ ներկայացնող ընդգծված բնորոշիչներ, որոնց օգնությամբ կարելի է կարճ, բայց և իմաստալից գույներով կերտել, խտացնել ու ներկայացնել մարդ-անհատի կերպարը: Մեր սիրելի գործընկեր Նունե Բեգլարյանի էությունն ու խառնվածքն ամբողջանում ու իմաստավորվում են թանձր ու վառ գույների միաձուլումով, ներդաշնակությամբ: Աշխատանքում պարտաճանաչ, կարգապահ, պատասխանատվության մեծ զգացումով լեցուն տիկին Բեգլարյանը համալրում է ամենից հմուտ և խելացի մանկավարժների, առաքինի և ազնիվ մարդկանց, երկրի արժանավոր քաղաքացիների շարքը... Նա հուր է, կրակ, շանթ ու բոց, թվում է՝ անմատչելի բնույթ և էություն... Նա համեստ է, հեզ, խոնարհ ու թափանցիկ և ամենից մատչելին՝ իր շիտակ ու պարզ էությամբ: Մեծ սիրով ու նվիրումով է մոտենում ստանձնած վեհ՝ մանկավարժի և փոխտնօրենի առաքելությանը, նրա համար աշխատանքում մանրուք չկա: Ներսում թաքուն պահած ամենից լավ մարդուն խիստ գործնական իր կեցվածքով ջանում է փնտրել ու գտնել բոլոր հարցերի պատասխանները և գտնում է՝ ջանալով թեր ու բաց տեղ չթողնել ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգված ու ներդաշնակ գործունեության դաշտում: Նրա և դպրոցի ուսուցչամանկավարժական մեծ բանակի միջև գործում են համագործակցած ու փոխըմբռնված հարաբերությունները: Ն. Բեգլարյանի ղեկավարությամբ դպրոցում գործում է դպրոցի մեթոդխորհուրդը՝ բովանդակալից, մանկավարժամեթոդական հրատապ հարցերի քննարկման արդյունավետ նիստերով: Նրա մոտ ամեն ինչ ասես քանոնով լինի գծված ու կտրված, որպիսին և ինքն է աշխատանքում. պարկեշտ է, օրինապաշտ, ընկերության մեջ՝ օժանդակող, սատարող և ըմբռնող: Եվ այսօր Նունե Բեգլարյան մարդու գեղեցիկ ձեռագրով կերտված կենսագիրը մեզ է նայում 50-ամյա խոսուն, կեսդարյա բարձունքից:

Շնորհավորում ենք բարետես, գեղեցիկ հայ կնոջը, շնորհալի մանկավարժին ու հավատարիմ մեր գործընկերոջը՝ Նունե Բեգլարյանին, խոսուն ու վառ հոբելյանի՝ 50-ամյակի առթիվ, ցանկանում ամենից լավն ու բարին, երկա՜ր և առողջ տարիների աշխատանքային գործունեություն, անձնական կյանքում հաջողություններ, և որ իրեն այնպե՜ս գեղեցկացնող կանացի և քնքույշ ժպիտը միշտ անպակաս լինի նրա դեմքից:

Շնորհավոր ծննդյանդ 50-ամյա հոբելյանը, սիրելի ընկեր, հազա՜ր-հազար երջանիկ օրերի և նորանոր բարձունքների նվաճման ճանապարհիդ թող երկա՜ր ճառագի արևը, կանաչ լույսը լինի քեզ ուղեկից:

*Ստեփանակերտի Ա.Ղուլյանի անվան*
*հ. 2 հիմնական դպրոցի տնօրինություն*
*և ուսուցչական կոլեկտիվ*

## ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

# ԽՈՆԱՐՀՈՒՄՍ ՁԵԶ, ՍԻՐԵԼԻ ԳԱԼՅԱ ՄԱՅՐԻԿ



Յոթ տասնամյակը բոլորած կնոջ համար, ինչպիսին Գալյա մայրիկն է, այս տարիքը բեղմնավոր էր: Նրանում եռում էր կյանքը, իսկ ժամանակն արգասաբեր էր, քանզի երկունքվում էին նորանոր ծրագրեր, որոնք փոքրիշատե սփոփում էին որդեկորույս մայրերի վշտահար սրտերը: Նա հայոց հերոսական մայրերի մարմնավորումն էր, վեհ ու լրջախոհ նայվածքով կին, իսկական հայուհի: Հմայք կար նրա գեղջկական վեհության մեջ: Միաժամանակ՝ խստություն, հպարտություն եւ կարծես ժամանակի կնիքն է դրոշմված այս կնոջ զուսպ դեմքին: Եվ ով կարող էր մտածել, որ այս փափկասուն կնոջ սրտում 6000 սրբություն կար անթեղված, մոռացությունից փրկած 6000 անուն, մայրական աղոթքով սրբացված նույնքան հոգիներ: Նա չէր կարող անտարբեր անցնել այն ցավի կողքով, ինչով պարուրված էր որդեկորույս մոր դառնացած սիրտը: Ով կարող էր խորհել, որ աշխատավորի ընտանիքում ծնված և ավանդական բարքերով դաստիարակված, միջնակարգ կրթություն ստացած այս կինը չորս տասնամյակ անց կկանգներ իր ժողովրդի բոցկլտացող պայքարի ակունքներում, Վերածննդի հրապարակում ազատության դրոշ կպարզեր և մայրական հրաշունչ խոսքերով հազարավոր զավակների մարտի կուղեկցեր: Ամեն դառնություն հանձն կառներ՝ հանուն համազգային գաղափարների իրագործման: Հարսանեկան հագուստ չհագած կրտսեր որդուն՝ Գրիգորիին կորցնելուց հետո անգամ Գալյա մայրիկի սիրտը չընկրկեց, նրա վշտալլուկ սրտի բաբախումով վերընձյուղվեցին հազարավոր մայրերի փշրված երազներ: Նա, իբրև Հայոց աշխարհի Մեծ տիկին, իր շուրջը համախմբեց բոլորին, ուժ ու կորով ներշնչեց և իր օրինակով ուղենիշ հանդիսացավ հազարավոր առյուծածին մայրերի համար: Հենց այդ տառապանքի ծովից ծնվեց Զոհված ազատամարտիկների հարազատների միությունը, ինչը կռվան եղավ Արցախյան ազատամարտի նահատակների հիշատակը հավերժացնող հուշաթանգարանի ստեղծման: Ինչպես հետագայում կխոստովաներ գրականագետ Սոկրատ Խանյանը՝ «Սա թանգարան չէ սոսկ, սա մեր զոհյալների գիշերն ու տիվն է, ազատության դռները բացած մեր ժողովրդի լուսե պատիվն է»: Այստեղ իրենց հավերժական հանգիստն են գտել Արցախյան գոյամարտը ոգեկոչող ազատության պայքարի հին ու նոր հերոսների մի մեծ համաստեղություն՝ ցուցանելով մեզ միասնական ուժի հաղթանակը, դառնալով հայ զորականի մարտարվեստի փայլատակումը: Այստեղ երկունքվեցին տիկին Գալյայի հեղինակած գրքերը, որոնց մեջ խոսում է ոչ միայն ինքն՝ իր անձնական վշտի ծովում, այլև որդեկորույս հայ մայրերի տառապանքը, վեհությունը, արիությունը: Մի առիթով Գալյա մայրիկը խոստովանել է. «Ես գրող չեմ, բայց կյանքը ստիպեց ինձ գրիչ վերցնելու և մեր զավակների մասին հուշապատում գրելու: Գիտեք ինչքան դժվար է աշխատել մի վայրում, որտեղ քո տված «բարի առավոտն» ու «բարի գիշերը» մնում են անպատասխան...»: Հիրավի, սփոփանքի կարիք զգացող այս կինը ներկայանում էր որպես ուրիշներին սփոփող մայր, քույր, սրտացավ խորհրդատու: Եվ ինչպես չոգեկոչել Գարեգին Նժդեհի մարգարեացած խոսքերը. «Հայրենիքը սկսվում է մոր կրծքից, արցունքից, սիրուց ու նրանց որդիների թափած արյունից»: Գալյա մայրիկի սրտառուչ խոսքերը դաս ու պատգամ եղան հազարավոր զինծառայողների համար, ովքեր ցրտին ու շոգին դիմադրելով՝ հայրենի սահման էին պահում, ովքեր մայրական ջերմության կարոտ ունեին:

Չկա Գալյա մայրիկը, նա մեզ լքեց՝ անհուն ցավը սրտում, սակայն չիրականացած նորանոր գաղափարներով ու ծրագրերով, որոնք այդպես էլ մնացին թղթին, մտահղացումներ, որոնցով պիտի դաստիարակվեին եկող սերունդները:

Բարձրագույն կրթություն չունեցող այս կինը ուներ բարձրարժեք գաղափարներ: Նա ամուր թելերով կապված էր հանրապետության բոլոր կրթական հաստատությունների հետ: Մեծ ոգևորություն և բավականություն էր ապրում, երբ դպրոցականները արիության դասեր և հայրենասիրական միջոցառումներ էին կազմակերպում ազատամարտի հուշաթանգարանում: Ինչպես կասեր տիկին Գալյան, այսպիսի դասերն են յուրացվում, որոնք իսկական ուսուցանող նպատակներ են հետապնդում՝ ներկա և գալիք սերունդներին դաստիարակելու նահատակ-հերոսների հաղթական ոգով, անկոտրում կամքով: Թանգարանի մշտական հյուրերը՝ դպրոցականները, ոչ միայն տպավորված էին հեռանում այս սրբավայրից, այլև միշտ Գալյա մայրիկի կողմից խրախուսվում էին նվերներով, իր մակագրությամբ գրքերով: Եվ այսօր, երբ տիկին Գալյան մեզ հետ չէ, ամենաթանկագին հուշը մեր երեխաների սրտում պահպանված լավագույն պահերն են, հանդիպումներից մնացած հիշարժան դրվագները, խմբային լուսանկարներն ու Գալյա մայրիկի բարի խորհուրդները: Չնայած տարիքին և տկարությանը, նա միշտ պատրաստակամ էր այցելելու հանրակրթարաններ, տեսակցելու զինվորներին թե՛ զորամասում, թե՛ սահմանին կանգնած:

Ամեն անգամ, երբ պատեհ առիթով հանդիպում էինք մեր դպրոցում, անթաքույց հպարտությամբ էր խոսում նոր սերնդի մասին, իսկ նորանկախ հանրապետության ապագան տեսնում էր խոստումնալից ձեռքերում: Համոզված էր, որ այս սերունդը առավել քան հայրենասիրության պակաս չունի, որովհետև հայրենագիտակցումը ամուր է: Նրա ներկայությամբ յուրաքանչյուր հանդիպում վեր էր ածվում մի իսկական տոնակատարության, նա կարող էր և՛ հուզվել, և՛ միանգամայն քաղցր հումորով զվարճացնել բոլոր ներկաներին՝ անկախ հանդիպման բնույթից: Իսկ բարեմաղթանքները միշտ հնչում էին իբրև մայրական օրհնանք՝ պատգամելով սիրել ու գնահատել այն, ինչը ոչ միայն Աստծո պարգև է, այլև սերունդների ձեռքբերում, որոնց ակունքներում կանգնած էին հազարավոր ուխտյալ զավակներ: Նա միշտ դրվատանքի խոսքեր էր ասում այն ուսուցիչներին, ովքեր անմնացորդ նվիրված են հայրենանվեր այդ առաքելությանը: Սիրում էր կրկնել. «Եթե մենք ունենանք ազգային գաղափարախոսությամբ կրթված, դաստիարակված ու հայրենասիրությամբ ներծծված մանկավարժներ, մենք հաստատ կունենանք նվիրյալ, հայրենապաշտ սերունդ և հզոր ազգ »: Նա պատրաստ էր անկախ բոլոր հանգամանքներից անկեղծանալ աշակերտների հետ այն ազատամարտիկների մասին, ովքեր իրենց համեստ ներդրումն են ունեցել այս բաղձալի հաղթանակում, պարմանիների հետ կիսվել ծառայության դժվարին գործի մասին և խրախուսել այդ սրբազան գործում: Նրա համար դպրոցն ու բանակը միևնույն նժարի ծանրության վրա էին, երկուսն էլ ազգային անվտանգության երաշխավոր, ազգի հարատևության խորհուրդ: Նրա ուշադրությունից չէին վրիպում պարմանուհիները, «որոնց ափերի մեջ պիտի փնտրել ազգի ճակատագիրը, իսկ նրանց որդիներով ճանաչել ու գնահատել հայ կնոջը» (Նժդեհ):

Անառվա այս տոթ օրերին զոհված ազատամարտիկների թանգարանի դռները բաց են բոլոր այցելուների համար, սակայն առանց Գալյա մայրիկի գրկաբաց դիմավորման ու ջերմ համբույրի: Նրա աշխատասենյակում ոչինչ չի փոխվել, միայն գրասեղանին ամեն օր թարմ ծաղիկներ են դրվում՝ ի նշան երախտագիտության:

Խոնարհումս Ձեզ, սիրելի Գալյա մայրիկ, թող հողը թեթև լինի Ձեր հոգնած կոպերին: Ձեր գործն անմահ է, որովհետև Դուք ձեր գործով իսկ պատմություն եք դարձել եկող-անցնող սերունդների համար:

**Լոռեպա ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**
**Ստեփ. Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի պատմության ուսուցչուհի**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանը հայտարարում 2014-2015 ուսումնական տարվա ընդունելություն հետևյալ մասնագիտությունների գծով.

Անվճար ուսուցում հիմնական կրթությամբ՝ ուսման տևողությունը՝ 2 տարի 10 ամիս և միջնակարգ կրթությամբ՝ 10 ամիս:

1. Զարդակիրառական արվեստ (հիմնական կրթությամբ)
2. Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա (միջնակարգ կրթությամբ)
3. Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
4. Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
5. Հասարակական սնունդ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
6. Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում (երեսպատող, սալիկապատող, ծեփագործ, ներկարար) (հիմնական կրթությամբ)
7. Կարի արտադրության տեխնոլոգիա (միջնակարգ կրթությամբ)
8. Համակարգիչների շահագործում (միջնակարգ կրթությամբ)
9. Շինարարական-մոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում (որմնադիր) (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
10. Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում (բուլդոզերավար, էքսկավատորավար, տրակտորիստ) (միջնակարգ կրթությամբ)
11. Ատաղձագործություն, մանրահատակագործություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ)

*Մեր հասցեն՝ ք.Ստեփանակերտ, Բաղրամյան 27*
*Հեռ.՝ 94-61-18/ 097 250 400*

*Խաղ-մրցույթ*

# ՆՎԻՐՎԱԾ՝ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 145-ԱՄՅԱԿԻՆ

Հ. Թումանյանը ամենահայկական, ամենաազգային գրողն է, խտացումը հայ ժողովրդի աշխարհայացքի: Հեղեղի պես իջավ նա առասպելական Լոռու վայրենի լեռներից՝ բերելով իր հետ մի ամբողջ բնություն՝ հուռթի ու բազմատարր, մի ամբողջ հինավուրց ժողովուրդ՝ իր տոհմիկ երգերով ու խոսքով, հույզերով ու երևակայությամբ: Եվ ինչպես ստեղծող բնությունը՝ փռեց նա մեր հոգու առջև իսկական, անկեղծ բանաստեղծություններ:

Ասկերանի Գուրգեն Գաբրիելյանի անվան կենտրոնական գրադարանը վերջերս կազմակերպեց Հովհաննես Թումանյանի ծննդյան 145-ամյակին նվիրված խաղ-մրցույթ: Ներգրավված էին «Ուսանողներ», «Դպրոց», «Վարչակազմ», «ՄՊՍԿ» թիմերը: Սակայն մինչ մրցույթը, հանդիսատեսից ընտրվեցին մասնակիցներ, ովքեր ընդգրկվեցին «Հաջողակ» թիմում: Ընտրվեցին թիմի ավագներ, ներկայացվեց միջոցառման ժյուրիի կազմը և սկսվեց խաղ-մրցույթը՝ բաղկացած 6 փուլից: Միջոցառման ընթացքում գրադարանի փոքրիկ ընթերցասերները բեմադրեցին Հ. Թումանյանի «Բարեկենդանը» հեքիաթը, ապա միջոցառման մասնակիցները հանդես եկան Հ. Թումանյանի բանաստեղծությունների արտասանությամբ:

Տաղանդներն ապրում են մի որոշ ժամանակաշրջան, իսկ հանճարները՝ բոլոր ժամանակներում: Թումանյանը ժողովրդական հանճարի փայլատակումն է: Սրա վկայությունն է այն, որ միջոցառման ընթացքում թե՛ մասնակիցները, թե՛ հանդիսատեսը մեծ ոգևորությամբ երգեցին «Անուշ» և «Ախթամար» պոեմներից հատվածներ:

Մրցույթում առաջադրված հարցերն ու տրված պատասխանները հաղորդում էին Թումանյանի ստեղծագործությունների լեզուն, բառերի կշիռն ու արժեքը, գույնն ու երանգը, ձայնն ու լռությունը:

Խաղ-մրցույթը ավարտվեց «Վարչակազմ», «Դպրոց», «ՄՊՍԿ» թիմերի հաղթանակով: Առաջնային միավորներ վաստակած թիմերը պարգևատրվեցին ԱԺԿ դրամական պարգևներով և Ասկերանի կենտրոնական գրադարանի պատվոգրով: Ակտիվ մասնակցություն ցուցաբերած թիմերը Ասկերանի շրջանի արհեստակցական կազմակերպության կողմից պարգևատրվեցին գրքերով:

Իսկ Գուրգեն Գաբրիելյանի անվան կենտրոնական գրադարանը նմանատիպ միջոցառումներ կազմակերպելու համար արժանացավ Ասկերանի շրջվարչակազմի նվերին: Ուշագրավ էր այն, որ խաղ-մրցույթին մասնակցած փոքրիկ Պավլիկը արժանացավ Ասկերանի քաղաքապետ Ա. Գաբրիելյանի ուշադրությանը և պարգևատրվեց, որպես խաղին մասնակից միակ տղամարդ:

Մեծ Լոռեցուն կարդում են ծերերն ու մանուկները, մեծերն ու դպրոցականները: Այնքան մեծ է Թումանյանի ժողովրդականությունը, որ մրցույթի ընթացքում անգամ հանդիսատեսն էր պատրաստ պատասխանել հարցերին: Հ. Թումանյանը պատկանում է իր ժողովրդին, որին ծառայեց իր գրչով ու խոսքով: Թումանյանը մի տիեզերք է, որտեղ ամեն նոր սերունդ իր համար գտնելու է նոր գալակտիկաներ: Ինչպես բարձր են Հայաստանի լեռները, այնքան բարձր է Թումանյանի բարոյական դեմքը, ինչպես խորն են Հայաստանի լճերը, այնպես էլ խորն են Թումանյանի մտքերը.

Ծով է իմ վիշտն, անափ ու խոր,
Լիքն ակունքով հազարավոր,
Իմ զայրույթը լիքն է սիրով,
Իմ գիշերը՝ լիքն աստղերով:

**Նինել ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ
Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 26.07.2014թ.:
«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: